

ՄՈՒՐԱԳ ԿԱՐՈՂԵՏՅԱՆ

«ԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԱՎՈՐՈՎԱՆ
ԽՄԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ
ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ
ՌԱԶՄԱՃԱՍԿԱՏՈՒՄ

(1914 - 1917թթ.)



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

МУРАД КАРАПЕТЯН

АРМЯНСКИЕ ДОБРОВОЛЬЧЕСКИЕ ДРУЖИНЫ
И НАЦИОНАЛЬНЫЕ БАТАЛЬОНЫ
НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ
(1914-1917гг.)



II
A 90544

Издательство "Гитутюн" НАН РА
ЕРЕВАН 1999

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՅԵՈՒԵՂ

ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ
ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐԸ
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ
(1914-1917թթ.)

A 90544



ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 1999

ԳՏՀ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ) 52
Կ 294

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության ԳԱԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հ.Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմ. գիտ. դոկտոր **Կ.Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ** և
պատմ. գիտ. թեկնածու **Գ.Ա. ՄՈՒՐԱԳՅԱՆԸ**

Կ 294 **ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մ.** Հայկական կամավորական խմբերը և ազգային
գունարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917թթ.)
Եր.. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, 335 էջ :

Աշխատության մեջ նորահայտ արխիվային փաստաթղթերի և
նյութերի հիման վրա բացահայտվում են հայկական կամավորական
խմբերի և ազգային գունարտակների կազմավորման գործընթացը և
ռուսական զորամասերի կազմում նրանց մարտական գործողությունները
Կովկասյան ռազմաճակատում 1914-1917թթ.:

Գիրքը հասցեագրված է պատմաբաններին և ընթերցող լայն
շրջաններին:

Կ $\frac{0503020913}{703(02)-2000}$

ԳՄԴ 53.3 (2Հ) 52

ISBN 5-8080-0426-8

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1914թ. ամռանը բռնկված համաշխարհային պատերազմը և գերմանական խմբավորումում Թուրքիայի հանդես գալը արբնացրեց հայ ժողովրդի որոշակի հույսերը՝ ռուսական զենքի օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստանը և այնտեղ վերականգնել հայկական պետականությունը: Հուսադրող էր պատերազմի մեջ Ռուսաստանի մտնելու՝ պաշտոնական շրջանների կողմից հռչակված գլխավոր նպատակը՝ «արևելքի քրիստոնյաների ազատագրումը»¹:

Պաշտոնական տվյալներով Ռուսական կայսրության յուրաքանչյուր 100 հայից 13-ը զորակոչվեց բանակ. 2 միլիոն 54 հազարի հասնող հայ ազգաբնակչությունը պատերազմի տարիներին ռուսական բանակին տվեց ավելի քան 250000 զինվոր²: Ռուսաստանի դաշնակիցների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի բանակներ զորակոչված հայ մարտիկների թիվն անցնում էր 50 հազարից³: Դրանից բացի, պատերազմի տարիներին 1914-1917թթ. Կովկասյան ռազմաճակատում ստեղծվեցին հայկական ազգային կամավորական և կանոնավոր զորամասեր, որոնց մարտիկներն իրենց սխրանքներով ու հերոսությամբ արժանի ավանդ ներդրեցին բուրբակյան զորաբանակների նկատմամբ Կովկասյան ճակատում ռուսական բանակի տարած հաղթանակներում, նպաստեցին ռուսական զենքի փառքի հարստացմանը:

Դեռևս Փարիզի կոնֆերանսի նախապատրաստության ժամանակաշրջանում անհրաժեշտություն սուռաջացավ հաղթող երկրների պատվիրականությունների վեհաժողովում ներկայացնել նաև տեղեկություններ Առաջին համաշխարհային պատերազմում

¹ «Հայկական հարց», հանրագիտարան, Ե., 1996, էջ 41:

² Տե՛ս Գ.Ղորլանյան, Հայերի մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատի վրա 1914-1917թթ.: «Հայրենիք», Բոսթոն, 1927, №2:

³ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ.6, Ե., 1981, էջ 547:

հայ ժողովրդի մասնակցության, նրա կորուստների և կրած վնասների մասին: Ստեղծվեց հատուկ Բյուրո, որի խնդիրն էր վերոհիշյալ հարցերի գծով նյութերի պատրաստումը: Կային 4 բաժիններ. Պատմաքաղաքական, Տնտեսագիտական, Զննչաքրեագիտական և Ռ-ազմապատմական: Ռ-ազմապատմականը ղեկավարում էր Կովկասյան ճակատի ճանաչված զորահրամանատարներից մեկը՝ հայերի սխրանքներին քաջամտոք գեներալ Ա.Կուլեբյակինը: Բաժնի խնդիրն էր մանրամասնորեն շարադրել հայկական զինուժի և ընդհանրապես հայ ժողովրդի մասնակցության պատմությունը Առաջին համաշխարհային պատերազմին և այդ մասնակցության նշանակությունը ռազմական, ստրատեգիական և քաղաքական տեսակետից: Ահա թե ինչ էր ասված այդ մասին 1919թ. փետրավարի 5-ին Բյուրոյի նախագահ Հովհաննես Թումանյանին ռազմապատմական բաժնի ղեկավար Ա.Կուլեբյակինի նշած նամակում: «Հայ ժողովրդի համար անհրաժեշտ է որպեսզի Փարիզի հաշտության համաժողովում բոլոր ազգերի և համաշխարհային պատմության առջև նա կարողանա ներկայացնել փաստական ապացույցներ իր ակտիվ, արյունով և անհամար զոհերով հաստատված մասնակցությունը համաշխարհային պատերազմին՝ մեզ դաշնակից տերությունների կողմում, նույնիսկ երբ նա քացարձակապես միայնակ մնաց այդ անհավասար պայքարում»⁴: Կուլեբյակինը տեղեկացնում էր Բյուրոյին, որ բաժնի կոչին արձագանքել են գեներալներ Լեբեդինսկին, Բազրատունին, Մորելը, Բեժանրեկը, Փիրումովը և ուրիշներ, ներկայացնելով իրենց նկատառումները հայկական կամավորական խմբերի և կանոնավոր գումարտակների գործունեության վերաբերյալ: Արդյունքներն ամփոփելուց հետո ներկայացվել են Փարիզի հաշտության վեհաժողովում Հայաստանի պատվիրակությանը, որի զինվորական խորհրդարանը գեներալ Գ.Լորդանյանն էր: Կամավորական խմբերին և ազգային գումարտակներին վերաբերող տեղեկու-

⁴ Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ), ֆ.200, ց.1, գ.144, թ.32-33:

քյունների մի մասը բերվում է սույն աշխատության մեջ, որոնք ամբողջությամբ շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Սույն աշխատությունում նվազագույն է դրվել բազմակողմա-
նիորեն ուսումնասիրել և առարկայորեն ներկայացնել Առաջին հա-
մաշխարհային պատերազմին հայ ժողովրդի մասնակցության
միայն մի հատվածը՝ 1914-1917թթ. Կովկասյան ռազմաճակատի
հայկական կամավորական խմբերի և ազգային գումարտակների
կազմավորման և մարտական գործունեության պատմությունը:

Հեղինակի խնդիրն է եղել.

1. Օգտագործելով արխիվային նորահայտ նյութերը ներկա-
յացնել հայկական կամավորական խմբերի և ազգային գումար-
տակների կազմավորման գործընթացը, նրանց կառուցվածքը և
թվակազմը:

2. Բացահայտել ռուսական զորքերի կազմում հայ կամա-
վորական խմբերի և ազգային գումարտակների մասնակցությունը
Կովկասյան ճակատի մարտական գործողություններին, ցույց տալ
նրանց դերը Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում:

Ուսումնասիրությունը մեծամասամբ հիմնված է արխիվային
փաստաթղթերի վրա: Աղբյուրագիտական հիմքն այն փաստա-
թղթերն են, որոնք հեղինակը պարբերաբար հավաքել է Ռուսաս-
տանի պետական ռազմապատմական (РГВИА) և արտաքին
քաղաքականության (АВП) արխիվներից, ինչպես նաև Հայաս-
տանի Հանրապետության պատմության և Հասարակական – քա-
ղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնա-
կան պետական արխիվներից:

Հայկական կամավորական խմբերի և ազգային գումար-
տակների կազմավորման, թվակազմի, կառուցվածքի, համալրման
կարգի և աղբյուրների, ինչպես նաև մարտական գործողություն-
ներին նրանց մասնակցության վերաբերյալ տեղեկությունները
քաղված են հիմնականում Ռուսաստանի պետական ռազմապատ-
մական արխիվի 521-րդ, 2000-րդ, 2100-րդ, Հայաստանի Հանրա-
պետության պատմության պետական արխիվի 121-րդ (Առաջին

համաշխարհային պատերազմում զործող հայկական կամավորական խմբերի և զինվորական ջոկատների մասին փաստաթղթերի հավաքածու), 288-րդ (Հայոց ազգային կենտրոնական Բյուրո), 221-րդ (Առաջին համաշխարհային պատերազմում հայերի կորուստների որոշող Բյուրո), 57-րդ (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան), 222-րդ (Թիֆլիսի հայոց ազգային Խորհուրդ), 45-րդ (Գեներալ Թովմաս Նազարբեկյանի անձնական արխիվ) ֆոնդերից:

Բացի արխիվային նյութերից և փաստաթղթերից աշխատանքի համար կարևոր աղբյուրագիտական հիմք են հանդիսացել նաև ժամանակի պարբերական մամուլը⁵, պետական հասարակական, քաղաքական և զինվորական զործիչների աշխատությունները, մենագրությունները⁶, ինչպես նաև ընդհանուր բնույթի աշխատությունները⁷:

Առաջին համաշխարհային պատերազմում հայերի մասնակ-

⁵ «Հորիզոն», Թիֆլիս, 1914-1917թթ., «Մշակ», Թիֆլիս, 1914, «Չիբենի», Թիֆլիս, 1914: "Кавказское слово", Тифлис, 1914, "Армянский вестник", Армяне и война, М., 1914-1917гг.: Համառոտ տեղեկագիր Հայոց ազգային Բյուրոյի գործունեության 1915-1917թթ., Թիֆլիս, 1917, "День", Петроград, 1915:

⁶ Մ.Արսզյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982: Գ.Լազյան, Հայաստանը և հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Ե., 1996: Գ.Ղարաբյան, Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատի վրա 1914-1917թթ., «Հայրենիք» ամսագիր, Բոսրոն, 1927, N2: Գ.Չալխուշյան, Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ.Պոլիս, 1920: Գ.Մնաճականյան, Разрешение Армянского вопроса, М., 1914: Լ.Լյուկեճյան, Չորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի օրագրությունը 1914-1917թթ., Բոսրոն, 1924: Ա.Խատիսյան, Բաղաքապետի մը հիշատակները, «Հայրենիք» ամսագիր, Բոսրոն, 1932, N12: Կ.Սատուկի, Տանկահայաստանը ռուսական տիրապետության տակ 1914-1918թթ., Բոսրոն, 1927: Հ.Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1929: Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, 6 հատորով, Ե., 1940-1959 թթ., Ե.Գեղամյան, Հայերի ազատագրական շարժումը 20-րդ դարում կամ հայկական հարցի 7-րդ շրջանը, հ.2, Բագու, 1918, Կոմս, Իմ հուշերը, հ.Բ, Բեյրութ, 1952:

⁷ «Հայ ժողովրդի պատմություն», հ.6, Ե., 1981: «Հայկական հարց» հանրագիտարան, Ե., 1996: Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1963: Հուշարձան նվիրված սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության քառասնամյակին, Փարիզ, 1930: "Военный Энциклопедический словарь", М., 1984:

ցուրյան հարցերը քննարկվել են նաև խորհրդային և սփյուռքահայ պատմագրության մեջ, լույս են տեսել մի շարք աշխատություններ⁸, դրան անդրադարձել են և եվրոպական պատմաբանները⁹, գեներալ Ալենքին, լոլո Ռոբերտ Սեսիլը, Ա.Ֆ.Կերենսկին և ուրիշներ:

Փաստաթղթերը և նյութերն ապացուցում են, որ հայերի կամավորական շարժումը և Կովկասյան ճակատում քուրքական բանակի դեմ կամավորականների մասնակցությունը պատմական անհրաժեշտություն էր, ոչ թե սխալ: 1915-1916թթ. երիտթուրքերի ոճրագործությունը՝ Թուրքիայում հայերի ցեղասպանությունը ոչ թե հետևանք էլի հայերի՝ ռուսական բանակի կազմում հանդես գալու, այլ օսմանիզմի և պանթուրքիզմի վաղօրոք մշակված ծրագրի իրականացում: Փաստերը ցույց են տալիս, որ շատ բնակավայրերում կամավորական խմբերը փրկեցին հայերին գլխավին բնաջնջումից և ապահովեցին նրանց գաղթը դեպի Արևելյան Հայաստան:

⁸ Н.Г.Корсун, Первая мировая война на Кавказском фронте, М., 1946; Н.Г.Корсун, Сарикамышская операция, М., 1937; Н.Г.Корсун, Эрзерумская операция на Кавказском фронте мировой войны в 1915-1916гг., М., 1938. А.О.Арутюнян, Кавказский фронт 1914-1917гг., Е., 1971. Ա.Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Ե., 1984: Ճ.Աղայան, Հոկտեմբերը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Ե., 1982: Հ.Ավետիսյան, Հայկական հարցը 1918թ., Ե., 1997: Հ.Ավետիսյան, Հայոց ազգային միասնության հաղթանակը, Ե., 1998: Ա.Համբարյան, Արևմտահայերի 1915թ. կոտորածները և ինքնապաշտպանական մարտերը, Ե., 1990: Գ.С.Меликян, Октябрьская революция и Кавказская армия, Е., 1989. Գ.С.Меликян, Источниковедение и историография революционного движения в Кавказской армии в 1914-1918гг., Е., 1972. Մ.Արզումանյան, Արիավիրքից վերածնունդ, Ե., 1973: Մ.Արզումանյան, Հայաստանը 1914-1917թթ., Ե., 1969: Հ.Մինոնյան, Անդրանիկի ժամանակը, Ե., 1996: Գ.Ղարիբջանյան, Ազգային հերոս Անդրանիկը, Ե., 1990: Հ.Չարապետյան, Անդրանիկ, 3 հատորով, Ե., 1992-1994թթ.: Ե.Ճեյրեճյան, Պանդուխտ, Բեյրութ, 1999:

⁹ Allen W.E.D. and Paul Mouratoff, Caucasian Battlefields (1828-1921), Cambridge, 1953. Е.В.Масловский, Мировая война на Кавказском фронте 1914-1917гг., Париж, 1933. Ս.Աֆանասյան, Մարդարապատի հաղթանակը, Ե., 1991:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Պատերազմն սկսելուց անմիջապես հետո, 1914թ. օգոստոսի 2-ին, Կոստանդնուպոլսում կնքվեց դաշնագիր Գերմանիայի և Թուրքիայի միջև: Ռայխսկանցլեր Բեքման Հոլվեգը, նույն օրն այդ դաշնագիրը բնորոշեց որպես ողբերգական Գերմանիայի համար: Օգոստոսի 6-ին, Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան ֆոն Վանհենհայմը Թուրքիայի մեծ վեզիր Մահմեդ Հալիմ փաշային հղեց «վստահության նամակ», որով Գերմանիան հանձն էր առնում Արևելքում հասնել Օսմանյան կայսրության սահմանների այնպիսի ուղղման, որը նրան հնարավորություն կտար անմիջական կապ հաստատել Ռուսաստանի մուսուլմանական տարրերի հետ: Գերմանիան պարտավորվում էր անհրաժեշտության դեպքում դաշնակցի շահերը սլաշտպանել նաև զենքով¹:

Ինչպես դիպուկ նկատել է պատմաբան Ե.Ֆ.Լուդշուվեյտը, «Սահմանների ուղղման մասին խոսքը ոչ միայն Կարսի, Արդահանի և Բաքունի մասին էր, այլ Ռուսաստանի կայսրության մուսուլմաններով բնակեցված բոլոր տարածքների: Հայերին և վրացիներին մուսուլմանների շարքը դասել հնարավոր չէր նույնիսկ շառլատանների համար»²:

¹ Стів Ю.В.Ключников, А.В.Сабинин, Международная политика новейшего времени в договорах, нотах, документах, М., 1926г., т.2, стр. 8-9.

² Е.Ф.Лудшувейт, Турция в годы первой мировой войны 1914-1918гг., М., 1966г., стр. 242.

Գերմանա-քուրքական պակտով ոգևորված, Թուրքիայի ռազմական նախարար «նորարուխ Նապոլեոն» Էնվեր Բեյը հայտարարեց. «Տարակույս չկա, որ մենք պիտի կրնանք Թուրանի ճամփան բանալ և թուրք միությունը ապահովել»³: Թուրքիայի պետական գործիչների ոգևորությունը զգացվում էր ամենուր: Ուիլսոնն Չերչիլը նկատել է, որ ոչ մի պետություն այնպես սիրով չի մտել համաշխարհային պատերազմի մեջ, ինչպես Թուրքիան⁴: Պատրաստվելով պատերազմին, առաջին իսկ օրերին Թուրքիան զենքի կոչեց մոտ մեկ միլիոն մարդ՝ պառակաիչ աշխատանք տանելով բողեբի, հայերի, լազերի և այլ ժողովուրդների շրջանում: Քրդերին նրանք վախեցնում էին «հայկական ինքնավարությամբ», հրահրում նրանց հայերի և Ռուսաստանի դեմ: Հայերից պահանջում էին Կովկասում ապստամբություն բարձրացնել Ռուսաստանի դեմ, շողորորբելով նրանց նանձացնում հարևանների արժանապատվությունը, խոստանում հայերին ավելի լայն ինքնավարություն, քան նախատեսվում էր Ռուսաստանի առաջարկած բարեփոխումների ծրագրում: Թալեսք բեյը, քուրքական կառավարության ներկայացուցիչներ Նեջի, Հաիլ, Շաքիլ բեյերը հայերին խոստանում էին իրենց կողմն անցնելու դեպքում Երևանի նահանգը, Գանձակի նահանգը, Կարսի, Վանի, Բիթլիսի շրջանների մի մասը: 1914թ. հուլիսին Էրզրումում հանդիպումներ ունենալով ՀՀ Գաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովի պատվիրակներ Ակնունու, Ռոստոմի և Վռամյանի հետ, քուրք կոմիսարները ներկայացրեցին իրենց պահանջները խնդրո առարկայի հարցում, շեշտելով, որ Ռուսաստանի ջախջախման պահը մոտեցել է: Ստանալով մերժողական պատասխան քուրք պատվիրակները հայտարարեցին, որ իրենք առանց հայերի էլ կհասնեն իրենց նպատակին, սպառնալով քե. «այն ժամանակ թող հայերը չղժգոհեն, Լքե իրենց ճակատագիրը

³ Մելվան Գադե Բիֆսք, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և Իրփիաթի հայաջինջ ծրագրերը, Ե., 1990, էջ 22:

⁴ У. Черчилль, Мировой кризис, М., 1932, с.242.

ախտոր ընթացք ստանա»⁵: Չհաջողվեց նաև Իսթբիհատի խարդավանքը՝ շահարկել ցարական կառավարության կողմից դաշնակցության դեմ ձեռնարկած հալածանքների և բռնությունների փաստը: Մերժելով Իսթբիհատի առաջարկները ՀՀ Դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովը որոշեց, որ հայ ժողովրդի քե՛ արևմայան և քե՛ արևելյան հատվածները պետք է կատարեն իրենց քաղաքացիական պարտքը՝ մնալով չեզոք՝ պետությունների խմբակցությունների գործողությունների ընթացքում, լինել օրինապահ քաղաքացիներ ամեն տեղ, մասնավորապես Թուրքիայում: Հայ գործիչները, հայտարարելով Թուրքիայի նկատմամբ իրենց լոյալ լինելու մասին, միաժամանակ պարզաբանում էին, որ Կովկասում հայերը Ռուսաստանի դեմ ապստամբություն չեն բարձրացնի⁶:

Հավատարիմ մնալով օսմանիզմին, երիտրորքերը, անգլիացի պատմարան Վ.Հոալիքի դիպուկ շեշտադրությամբ, ավելի դրսևորեցին քուրքական իմպերիալիզմի համար բնորոշ երկու գաղափարախոսություններ՝ «քաղաքական՝ համարորքիզմի և կրոնական՝ համիսլամիզմի յուրահատուկ գուզակցումը»⁷:

Առաջացած խմբավորումները՝ Համաձայնության երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) և Զառյակ միություն (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա) հստակորեն դրսևորում էին այն հակասությունները, որոնք կային Անգլիայի և Գերմանիայի միջև, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև՝ Էլզաս-Լոթարինգիայի համար, Գերմանիայի և Ռուսաստանի՝ Կոստանդնուպոլսի և Բոսֆոր ու Դարդանել նեղուցների համար, Ռուսաստանի և Թուրքիայի միջև՝ Հայաստանի և Կոստանդնուպոլսի համար, Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի միջև՝ Բալկաններում գերակշռող

⁵ Լեո, Թուրքական հեղափոխության գաղափարաբանությունը, Փարիզ, 1935, հ.Բ, էջ 76-78:

⁶ Տե՛ս Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 8-9:

⁷ В.Готлиб, Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, с.42.

դիրք ունենալու համար, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի միջև՝ Ալբանիայի և այլ տարածքների համար: Բացի դրանից Անգլիան ձգտում էր զրավել Միջագետքը, Պաղեստինը, Արաբական թերակղզին, Ֆրանսիան՝ Սիրիան, Կիլիկիան, Արևմտյան Հայաստանի հարավային մասը: Գերմանիան ձգտում էր նվաճել ոչ միայն Ուկրաինան, Լեհաստանը, Մերձբալթիկան, Ֆինլանդիան, այլև Հայաստանը և Անդրկովկասը:

Պատերազմը շարժման մեջ դրեց հայ բոլոր քաղաքական-հասարակակն-մտավոր ուժերին, իր հորձանուտի մեջ առնելով լայն շրջանակներին: Ռուս հրապարակախոս Լև Օշչերովսկին գրել է. «Ռուսահայերը ցարդ չեն այդպես ջերմորեն ձգտել մոտենալ Ռուսաստանին, ցարդ չեն դրսևորել այնպիսի կրքոտ անկասելի ձգտում կապել Ռուսաստանը իրենց հայրենիքին, ինչպես այժմ»³:

Եվ հիրավի դա այդպես էր: Նման բուռն ձգտումը ռուսահայերի պատմական ավանդույթների համագործակցության նոր դրսևորումն էր, ավանդույթներ, որոնք արտահայտվել էին 1828-1829, 1853-1856, 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ: Թուրքիայի դեմ ռուսների մղած պատերազմներին հայերը մասնակցել են ոչ թե օտարի հողը զավթելու, նվաճելու, ուրիշ ժողովուրդներ սարկացնելու համար, այլ սեփական հայրենիքը թուրքական գերությունից, բռնադատությունից, իր արյունակից եղբայրներին ֆիզիկական բնաջնջումից, ազգային-սոցիալական-կրոնական ճնշումից ազատագրելու համար: Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի կողմից Թուրքիայի հանդես գալը հայերի համար հանդիսացավ ռուսական զորքերի կազմում մարտնչելու, բռնադատված Հայաստանը Թուրքիայից ազատագրելու մի պատեհ առիթ: Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, Բարվում, Կովկասի հայաշատ մյուս քաղաքներում հայ հասարակայնության ականավոր ներկայացուցիչները, անկախ

³ Л.Ощеровский, Идея автономного строя в Турецкой Армении под протекторатом России, Пятигорск, 1915, с.19.

կուսակցական պատկանելիության, հանդես էին գալիս Ռուսաստանի կողմից պատերազմին հայերի մասնակցության օգտին: Օրակարգում Թուրքիան և Ռուսաստանն էին, հիշում էին պատմությունը, զուգահեռներ անցկացնում. համակրանքը Ռուսաստանի կողմն էր: Իրենց մտքերը և խոհերը հայտնեցին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը, ամենայն հայոց բանաստեղծ, Կովկասի հայ գրողների միության նախագահ Հովհաննես Թումանյանը, մեծանուն վիպասան, դրամատուրգ Ալեքսանդր Շիրվանզադեն, Արշակ Չոպանյանը, Վահան Տերյանը, Կարա-Մուրզան, հասարակական գործիչներ Ա.Ջիվիլիզյանը, Ռուսաստանի պետական դոմայի անդամներ Մովսես Աճեմյանը, Սիրայել Պապաջանյանը և ուրիշներ: Մոռացվում էին ցարիզմի ազգային քաղաքականության ստվերոտ և մութ կողմերը, առաջին գիծ էր մղվում արևմտահայության ազատագրության գործը: «Ամենքս կլանված էինք պատերազմով: Ամենքս դարձել էինք ռազմագետ», – գրել է Հ.Թումանյանը, «համոզված, որ պատերազմը լինելու էր համաշխարհային վերջին տագնապը, դժբախտությունը, Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությամբ լուծվելու էր հայկական հարցը»⁹: Այդ համընդհանուր համոզվածությունը, պերճախոս երևում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցի՝ 1914թ. օգոստոսի 5-ի դիմումից, ուղղված Կովկասի փոխարքա, հեծելազորի զեներալ Իլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովին:

Վեհափառը «երջանիկ էր հավաստիացնել», որ «հայ ժողովուրդը, մոռանալով սեփական վերքերից եկած զգացումները, իր քոլոր մաքերը կենտրոնացրել է Հայրենիքի վրա, որի փառքի համար նա ոգևորությամբ արձագանք սովեց իր թագավորի կոչին՝ կատարել իր սուրբ պարտականությունը նորին կայսրական մեծության և Հայրենիքի առաջ»: Վեհափառը խնդրում էր որպեսզի ռուսական կայսրական կառավարությունը խիստ պահանջներ դնի

⁹ Հ.Թումանյան, Երկերի ժողովածու, Ե., 1954, հ.5, էջ 403 նաև Լ.Կարապետյան, Հ.Թումանյանի հասարակական գործունեությունը, էջ 99:

արևմտահայության բարեփոխումների իրականացման համար, հայության, որը «հավատարիմ է մնացել մեծ ռուսական պետությանը»: 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսված բարենորոգումների կատարումը վեհափառը տեսնում էր Ռուսաստանի հովանավորությամբ ու նրա ընտրությամբ նշանակված քրիստոնյա կառավարիչների գլխավորությամբ հայկական վեց վիլայեթներից մի անբաժան ու ինքնավար նահանգ կազմելու մեջ՝ քրիստոնյաների ու մահմեդականների համար հավասար ներկայացուցչությամբ¹⁰: Նույն օրը մեկ այլ նամակով վեհափառը խնդրում էր փոխարքային միջնորդել կառավարության առաջ արձակել «դաշնակցության գործով» 1906-1910թթ. բանտարկված դաշնակցական գործիչներին: Դիմումին կցված էր 180 գործիչների անուն ազգանունները¹¹: Վեհափառի նամակի հիմնական մտքերը ներկայացնելով Ռուսաստանի կառավարությանը, Ի.Ի. Վորոնցով-Դաշկովն իր կողմից գրում էր. «Ռուսաստանի համար ծանր պայմաններում կովկասահայությունը երկրամասում ամենուր դրսևորում է հայրենասիրական մեծ արամադրություն՝ ոգևորությամբ ընդունելով զորահավաքի հարցը և զորամասեր մտնելով»: Սակայն, նշում էր փոխարքան, «չատ ճանաչված հայեր հայտնում են ափսոսանք, որ հայերը նշանակվում են արևմտյան սահմաններում, մինչդեռ կցանկանային զնալ թշնամու դեմ»: Փոխարքան հայերի դժգոհությունն էր հայտնում նաև Արևմտյան Հայաստանում կիրառվելիք բարեփոխումները չիրականացնելու և նշանակված Եվրոպայի գլխավոր տեսուչների անգործության մասին: Հայերի ցանկությունն էր սկսել բարեփոխումների կիրառումը ռուսական ծրագրի համաձայն՝ բացառապես «Ռուսաստանի հովանավորության տակ»: Ստանալով Ռուսաստանի կառավարության հավանությունը, Վորոնցով-Դաշկովը սեպտեմբերի 2-ին իր

¹⁰ Տե՛ս Գ. Чалхушян, Красная книга, Ростов-на-Дону, 1919. с.24, նաև Մեծ պատերազմը և հայ ժողովուրդը, Կ. Պոլիս, 1920, էջ 5-7:

¹¹ Տե՛ս Լեո, նշվ. աշխ., էջ 113:

«քաղցր պարտականությունը համարեց» տեղեկացնել վեհափառին նրա՝ օգոստոսի 5-ի մամակի կապակցությամբ Ռուսաստանի կառավարությունից ստացված պատասխանի մասին: «Այժմ ստաստ-քարտուղար Գորմեկինը տեղեկացնում է ինձ, որ ռուսական կառավարությունը ոչ մի դեպքում ոչ մի զիջում չի անի հայկական հարցում, այն մտքով, որ Թուրքիայի հայկական նահանգներում բարեփոխումները կմտցվեն ռուսական սկզբնական ծրագրով և Ռուսաստանի բացառիկ վերահսկողությամբ»¹²:

Միանգամայն համոզված լինելով «հայերին հուզող խնդրի նպաստավոր լուծման մեջ» փոխարքան հարկ էր համարում, այնուամենայնիվ, զգուշացնել վեհափառին, որ քե՛ կովկասահայերի, և քե՛ արասահմանյան հայերի գործողությունները՝ պետք է խստիվ համաձայնեցվեն փոխարքայի ցուցումների հետ, ելնելով Ռուսաստանի և Թուրքիայի մեջ եղած լարված դրությունից և ընդհանուր քաղաքականության տեսանկյունից: Փոխարքան վեհափառից խոնարհաբար խնդրում էր նաև գործի դնել իր բարձր հեղինակությունը, ազդել հայության վրա (ինչպես արևմտահայերի, այնպես էլ ռուսահայության), կատարել այն հանձնարարությունները, որ ինքը՝ փոխարքան ըստ ժամանակի պահանջների կողարկի նրանց ի կատարում¹³: Ոգևորված ռուսական կառավարության և նրա կովկասյան իշխանությունների խոստումներից, «Մշակը» 1914թ. օգոստոսի 31-ին գրում էր. «Ռուսաստանը անդառնալի կերպով կգրավի Թուրքահայաստանը և կիրագործի այն ծրագիրը, որ դեռևս 1878թ. պետք է իրագործվեր»: Թերթը նաև մեծ հույսեր էր կապում Համաձայնության երկրների հետ, որոնք ըստ լավատեսների, «մուրճի մի հարվածով կկործանեն Թուր-

¹² АВПР, ф. Политархив, 1914г., д.3464, л.12-16, նաև Г.Чалхушян, указ. раб., с.24-26.

¹³ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.57, ց.2, գ.709, ք.68, նաև Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 252:

քիան»¹⁴: Նույն «Մշակը», հոկտեմբերի 10-ին հավաստում էր, որ «մեր թուրքահայ եղբայրների դատը պաշտպանված և լուծված կլինի, եթե ներկա համաժողովական պատերազմի մեջ ռուսական զենքը հաղթող հանդիսանա, ուստի և մենք ամեն կերպ պետք է ապահովենք այդ հաղթանակը»:

Տոգորված արևմտահայության ազատագրման գաղափարներով, Արշակ Չոպանյանը հայերին կոչ էր անում մասնակցել «սրբազան պատերազմին, Համաձայնության երկրների հաղթանակի համար»¹⁵:

Վահան Տերյանը գտնում էր, որ հայության առջև դրված է ոչ միայն ազգային-մշակութային ապագայի հարցը, այլև հայ ժողովրդի սոսկ ֆիզիկական գոյության խնդիրը¹⁶:

Բիչ ավելի ուշ, հոկտեմբերի 25-ին «Մշակը» կոչ էր անում հայ ժողովրդին միահամուռ պաշտպանել Ռուսաստանին՝ նրա մեծ և պատմական առաքելության մեջ: «Աջակցելու համար հարկավոր է մի բան՝ ընդհանուր միաբանություն, համերաշխություն, կուսակցական պառակտումներից հրաժարվել: Այսօր այլևս չպետք է լինի ո՛չ մշակական, ո՛չ դաշակցական, ո՛չ հնչակյան, ո՛չ սոցիալ-դեմոկրատ հայկական հատվածներ. – գրում էր թերթը, – այսօր ամենքը պետք է զգան իրենց հայության զավակներ, եղբայրներ, որոնց պարտքն է մտածել, հոգալ իրենց թշվառ թուրքահայ եղբայրների ազատագրության համար»¹⁷:

Ռուսաստանի և Համաձայնության երկրների կողմից հայերի հանդեմ զալը, այսպիսով դիտվում էր որպես պայքար Հայոց պետականություն ստեղծելու համար: Առաջ էր քաշվում նաև Հայաստանում կիսաանկախ պետության ստեղծման գաղափարը. Ռոմանովների կայսրական հարստությունից սերված որևիցե

¹⁴ Տե՛ս «Մշակ», 1914թ., 6-ը հոկտեմբերի:

¹⁵ «Մշակ», 1914թ., 2-ը հոկտեմբերի:

¹⁶ ՀՀ ՊՊԿԱ, ֆ.288, ց.1, գ.465, ք.21-22:

¹⁷ «Մշակ», 1914թ., 25-ը հոկտեմբերի:

A II
90544



իշխանի գլխավորությամբ: Գրա մեջ տեսնելով հարցի լուծումը, Գ.Մնացականյանը 1914թ. Մոսկվայում հրատարակված «Հայկական հարցի լուծումը» գրքույկում գրում էր. «Այդպիսի պատիվ, երև այն արվի Հայաստանին, մարդկային պատմության մեջ քազավորող մեծագույն ընտանիքներից մեկի կողմից, ապա այդ հանգամանքը ինքնըստինքյան, և այդ ընտանիքից Մեծ իշխանի ներկայությամբ Հայաստանում, կարող են լիովին երաշխիք լինել Հայաստանի սահմաններում ապրող ժողովուրդների անաչառ և արդարացի դեկավարման համար»¹⁸:

2. ՀԱՅ ԿԱՍԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Հայերը մեծ ոգևորությամբ և կազմակերպվածությամբ մասնակցում էին դեռևս պատերազմի նախօրյակին, 1914թ. հուլիսի 13-ին, Կովկասում սկսած գորահավաքին, ռուսական կառավարության բույլաարած կամավորական շարժման գործընթացին, րեև հայկական կամավորական խմբերի կազմակերպման հարցում կային տարածայնություններ, Ռուսական կայսրության կառավարող շրջաններում: Այն մասնավորապես զգալի էր արտաքին գործերի նախարարությունում (Սազոնով, Գ-իրս), բանակի գլխավոր շտաբում (պետ՝ ինֆանտերիայի գեներալ Յանուշկեիչ) և այլ զերատեսչություններում: Սազոնովի կարծիքով պատերազմի հաջող ավարտի և Ռուսաստանի հաղթանակի դեպքում հայկական կամավորական խմբերը խանգարելու են կայսրությանը հաջողությամբ տնօրինելու Արևմտյան Հայաստանի հարցը: Պետական դրամայի պատգամավոր Մարկովը, փոխարքա Վորոնցով-Դաշկովի մոտեցումը հայկական հարցում պետական տեսակետից համարում

¹⁸ Г.Мнацаканян, Разрешение Армянского вопроса, М., 1914, с.36.

էր «չափազանց վտանգավոր, վնասակար և ծայրահեղորեն անցանկալի»¹:

Կամավորական խմբերի կազմակերպման և արևմտահայերի զինման գործը պաշտպանում էին Կովկասում ծառայող շատ զինվորականներ: Նրանցից մեկը զլխավոր շտաբի կապիտան, Կովկասյան բանակի դաշտային վարչության հետախուզական բաժանմունքի պետ Դրոցենկոն (հետագայում գեներալ-մայոր), հայերից կամավորական խմբեր կազմավորելու և նրանց սպառնազինելու անհրաժեշտությունը հիմնավորեց 1914թ. օգոստոսի 16-ին Կովկասյան ճակատի շտաբի պետ գեներալ Ն.Ն.Յուդենիչին ուղղված հատուկ զեկուցագրում: Բնութագրելով հայերին որպես Ռուսաստանին անվիճելի հավատարիմ ժողովուրդ, կապիտան Դրոցենկոն գրում էր. «Թուրքիան հայերին կճնշի և կնեղի թե՛ պարտության դեպքում, թե՛ հաղթանակի դեպքում: Առաջին դեպքում՝ մոտույմանները նահանջելով հայերին կկոտորեն վրեժից, երկրորդ դեպքում՝ հարձակվելով Ռուսաստանի վրա նրանք հայերին կոչնչացնեն իրենց փայփայած նպատակին հասնելու համար»: Հետախույզը վկայակոչում էր Բալկանյան պատերազմների ժամանակ քուրքական գործելակերպը, նման մեթոդների կիրառումը և քուրքերի անպատժելիությունը: Թուրքերը հայերին դիտում են քուրքերի և քաթարների միջև ամբողջության մեջ միաձուլվելու խանգարիչ տարրի, նշում էր Դրոցենկոն, բացատրելով, որ այդ է պատճառը, «որ քուրքական ոչ մի սահմանադրական կառավարություն չի վերացրել հայերին ոչնչացնելու համիդետական կարգախոսը»: Մատնանշելով, որ քուրքական նման մոտեցումը խրախուսում և սատարում է Գերմանիան, Դրոցենկոն ընդգծում էր, որ Ռուսաստանի հարավում «քուրք-քաթարական հոծ պատանշի առկայությունը նրանց համար շահեկան է»:

Թուրքերի կողմից հայերի կոտորածների վտանգը նվա-

¹ ՀՀ ՊՊԿԱ, ֆ.57, ց.2, գ.713, ք.13-14:

զագույնի հասցնելու համար ռուսական սպան գտնում էր, որ պետք է լայնորեն կազմակերպվի նրանց սպառնազինումը: Դա, ըստ Դրոցենկոյի, բխում է և՛ հայերի, և՛ Ռուսաստանի շահերից: Դրոցենկոյի եզրակացությունն էր. «Եթե Ռուսաստանի համար շահեկան չէ օսմանների փառքի և հզորության վերածնունդը, շահեկան չէ որպեսզի բույլ սա, որ ուժեղացած Թուրքիան դառնա Առաջավոր Ասիայի ողջ մուսուլմանների համար Եվրոպայի ճնշումից ազատագրության և անկախության էմբլեմը, ապա առավել օգտակար միջոցներից մեկը կլինի հայերին սատարումը և Թուրքիայի սահմաններում նրա ֆիզիկական և կուլտուրական ամրապնդումը: Այդ իսկ պատճառով, հենց Ռուսաստանի համար անօգուտ չէր լինի բուրքահայերին բավական չափով զենք մատակարարելը»²:

Չհապաղեց զենելալ-մայոր Նիկոլայ Նիկոլանիչ Յուդենիչը: Նույն օրը, օգոստոսի 16-ին, նա զեկուցեց գլխավոր շտաբի պետ Յանուշկեիչին. «Հայերի և ասորիների վերաբերմունքը հիբավի մեր կողմն է, և մենք կարող ենք նրանց լրիվ հաշվի առնել»: Յուդենիչը հակված էր նաև զինելու քրդական որոշ ցեղերի³:

Կովկասում տիրող իրավիճակին և երկրամասի զինվորական, քաղաքական գործիչների տրամադրություններին մոտիկից ծանոթանալու համար Սազոնովը Թիֆլիս գործուղեց Պետական դումայի պատգամավոր Մովսես Աճեմյանին: Վերջինս Վորոնցով-Գալչովից ստացավ կարուկ պատասխան. «հայերի շարժումը կատարվում է իր կամքով և բույլավորյամբ», «այդ շարժման և այդ սպասելիք հետևանքների պատասխանատվությունն ինքը վերցնում է իր վրա»⁴: Որոշ տատանումներից հետո Պետական դումայի բացման նիստում Սազոնովը հայտարարեց, որ հայերը

² Ռուսաստանի կենտրոնական պետական ռազմապատմական արխիվ (այսուհետև Ռ ԿՊՌՊԱ), ֆ.2000, ց.1, գ.3851, ք.9-11:

³ Նույն տեղում, ք.12:

⁴ Ե.Գեղամյան, Հայերի ազատագրական շարժումը 20-րդ դարում կամ հայկական հարցի 7-րդ շրջանը, հ.2, էջ 595-596:

ռուսական բանակի շարքերում և նրա կողքին կկռվեն օսմանյան զորքերի դեմ⁵: Ունենալով Սազոնովի համաձայնությունը, Վորոնցով-Դաշկովը հնարավոր համարեց թույլ տալ հայերին Թուրքիայի և Պարսկաստանի սահմանային շրջաններում կազմել կամավորական խմբեր՝ իրենց իսկ ընտրած կազմակերպիչների հրամանատարությամբ, նրանց զինելով սլետական զենքով:

Հայկական կամավորական խմբեր կազմակերպելու հարցով գրառվեց 1912թ. փետրվարին ստեղծված Թիֆլիսի հայոց ազգային Բյուրոն, որի կազմում էին «Մշակի» խմբագիր Ալեքսանդր Քալանթարյանը, խմբագրության աշխատակից, ապա խմբագիր Համբարձում Առաքելյանը, գրականագետ Նիկոլ Աբղալյանը, Ավետիք Պողոսյանը, Հովհաննես Թումանյանը, Ալեքսանդր Խատիսյանը, իրավաբան Մամսոն Հարությունյանը, Ներսիսյան դպրոցի տնօրեն Հ.Խունունցը, հայ առաքելական եկեղեցու վրաց-իմերեթական քեմի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոսը, Արշակ Ջամալյանը, բժիշկ Հարություն Ստեփանյանը: Ի.Խ.Վորոնցով-Դաշկովի մոտ սևղի ունեցած խորհրդակցությունում, որին մասնակցում էին փոխարքայի տեղակալ Պետերսոնը, զեներալ Յուդենիչը, Մեսրոպ արքեպիսկոպոսը, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա.Խատիսյանը, հայոց ազգային կենտրոնական Բյուրոյի նախագահ Մամսոն Հարությունյանը, դոկտոր Հակոբ Ջավրյանը, նյախտակահարմար համարվեց ռուսական զորամասերի կազմում հատուկ հայ կամավորական խմբերի կազմակերպումը՝ ազգային-ազատագրական շարժման հայդուկ խմբապետների, ժողովրդական փորձված առաջնորդների գլխավորությամբ⁶: Ընտրությունը կանգ առավ Անդրանիկի վրա, որն այլ ժամանակ գտնվում էր Վառնայում: Ֆերդինանտ քաղաքվորի հրամանագրով Անդրանիկին տրվել էր Բուլղարիայի քաղաքացիություն՝ թուրքերի դեմ Բալկանյան պատերազմում ցուցաբերած սխրանքների համար: Նա

⁵ ՀՀ ՊՊԿԱ, ֆ.288, ց.1, գ.465, ք.17:

⁶ Տես նույն աեղում, ֆ.57, ց.1, գ.746, ք.37:

արժանացել էր քաջության համար ոսկե 2-րդ աստիճանի և արժաթե 3-րդ և 4-րդ աստիճանների շքանշանների: Վառնայից դուրս գալով օգոստոսի 2-ին Օղեսա-Յալթա-Տուափսե-Փոքի նավով, ապա գնացրով Անդրանիկը Թիֆլիս հասավ օգոստոսի 18-ին: Նույն օրը նա հանդիպում ունեցավ հրավիրող պատասխանատուներ, դոկտոր Հ.Ջավրյանի, Մեսրոպ արքեպիսկոպոսի, Ալ.Խատիսյանի, Ս.Հարությունյանի, փոխարքայի տեղակալ գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Չախարևիչ Միշլակսկու և շտաբի պետ Ն.Ն.Յուդենիչի հետ: Գեներալ Ա.Ջ.Միշլակսկու հետ ունեցած առանձնագրույցի մասին Անդրանիկն իր հուշերում հետևյալն է գրել. «Ի՞նչ է քու գաղափարդ ու կարծիքդ: Ի՞նչ կերպով ռուս զինվորները կրճան դեպի Տաճկաստան յառաջանալ», ըստ կեներալ Միշլակսկին: «Թոյլ տվէք ինձի հարցնելու քե՛ք քանի՞ հազար զինվոր պիտի ուղարկէք քրքական ճակատը: Երբ ձեր զինվորական քանակը զիսկանմ, այն ատեն իմ համեստ կարծիքս կը յայտնեմ:

– 800.000 զինվորներ, – պատասխանեց Միշլակսկին: Ես իմ ցուցմունքներս տուի, որուն համար շատ գոհ մնացին:

– Բանի՞ պաքայի՞ոն կամ տրուժինա / մեկ տրուժինան 1000 հոգիէ կը բաղկանայ / Հայ կամատր զինուորներ կրճա հանել:

– Չորս տրուժինա, – պատասխանեցի: Առաջին տրուժինան պետք է յառաջանա Պարսկաստանով դէպի Պաշգալէ եւ Վան: Երկրորդը՝ Իկտիր, Պայազխա, Բերկրի եւ Վան: Երրորդը՝ Կաղզվան, Ալաշկերա, Մանազկերա եւ Պիքլիս: Չորրորդը՝ Սարիլամիչ, Գարլ Օրզան, Զեօփրիսքէոյ եւ Կարին:

Այս կամատրները քե՛ պիտի կռուին եւ քէ տեսակ մը առաջնորդներ պիտի ըլլան Ռուս բանակին: Անոնք ծանոթ ըլլալով այդ երկրի հողամասերուն-լեռներուն, ձորերուն եւ գետերուն, պիտի դիրացնեն բանակին հառաջխաղացումները: Եթե յառաջանանք մենք եւ մեզի հանդիպին քիրտն ու համիտիէն, առանց խարուքեան եւ բացառութեան զինաքափ պետք է ըլլան անոնք, որպէս զի մեր կռնակը մաքրուի, եւ մենք ապահով զգանք:

Ինչ ուտելիք, հագնելիք և ամսական որ ռուս զինուորին պիտի

տաք, պէտք է որ կամավոր Հայ զինուորն ալ օգտուի անկէ: Ինչպէս որ տուին:

Քաղաքական ի՞նչ պայմաններով մերինները համաձայնութեան եկած էին, կամ ի՞նչ խոստումներ ստացած էին Ռուս պետական ղեմքէրէն, ինձի համար անձանոք էր: Ես չէի կրնար և իրավունք ալ չունէի այդ հարցերուն մօտենալ, ուստի խօսեցայ զինուորին համար և պատասխանեցի միմիայն զինուորական հարցումներու»⁷:

Կամավորական շարժմանը Կովկասում մասնակից դարձան նաև արևմտահայ հասարակական և քաղաքական գործիչներ: Կ.Պոլսից և Փարիզից Թիֆլիս ժամանեցին Թուրքիայի խորհրդարանի անդամներ Արմեն Գարոն (Գարեգին Բաստրմաջյանը), Վահան Փափազյանը (Կոմս), Մալխասը և այլ գործիչներ: ՀՀ Դաշնակցության արևմտյան Բյուրոյի հանձնարարությամբ առաջինը Թիֆլիս ժամանեց Մալխասը: Նպատակն էր արևելյան Բյուրոյին ծանոթացնել արևմտյան Բյուրոյի տեսակետը առաջին աշխարհամարտի հարցում հայ ժողովրդի կողմնորոշման մասին: Ինչպէս երևում է Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի 1942թ. օգոստոսի 5 և 6-ի համարներում Մալխասի հրատարակած «Ինչպէ՞ս սկսավ կամավորական շարժումը» հուշագրությունից, մինչև իր Թիֆլիս գալը Կ.Պոլսում «Ազատամարտ» թերթի խմբագրությունում, 1914թ. օգոստոսի 22-ին կայացել է նիստ, որին մասնակցել են Արմեն Գարոն, Բարսեղ Շահբազը, Սարգիս Մինասյանը, Հրաչ Թիրաքյանը, Մալխասը: Փարիզից ժամանած Մալխասը տեղեկացրել է Ֆրանսիայի վարչապետ Վիկտոր Բերոյի՝ հայերին տված խոստումի մասին՝ աջակցել Օսմանյան կայսրությունում հայկական բարեփոխումների ծրագրի իրականացմանը, հայերին Թուրքահայաստանում տալ նվազագույնը դքսություն, «Եթե հայերը միանան դաշնակիցներին և իրենց օժանդակությունը բերեն

⁷ Լ.Լյուեճյան, Չորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը 1914-1917թթ., Պոսթոն, 1924, էջ 5-7:

պատերազմին»⁸: Այդ մասին Վ.Բերոն հեռագրով հաղորդել է Ժճև, որտեղ գտնվում էր «Դրոշակի» խմբագիր Միքայել Վարանդյանը: Կամավորական շարժման կազմակերպման գաղափարը պաշտպանվեց Թիֆլիսում՝ «Հորիզոնի» խմբագրությունում և ապա՝ Արշակ Ջամալյանի բնակարանում տեղի ունեցած նիստերում, որին մասնակցում էին Հակոբ Չավրյանը, իշխան Հովսեփ Արղությանը, Միքայել Պասաջանյանը և ուրիշներ՝ մոտ 20 մարդ: Ստեղծվեց Կարգադրիչ Սարմին, որի մեջ մտան Արմեն Գարոն, Սիմոն Վրացյանը, Հակոբ Չավրյանը, իշխան Հովսեփ Արղությանը, Աբրահամ Գյուլսանդարյանը և Նիկոլ Աղբալյանը⁹: Ազգային Բյուրոն առանձնացրեց ներկայացուցիչներ Մեսրոպ արքեպիսկոպոսին, Սամսոն Հարությունյանին, Ալեքսանդր Խատիսյանին՝ կամավորական խմբերի կազմակերպման հետ կապված բոլոր խնդիրների շուրջ փոխարքա Վորոնցով-Գաշկովի հետ բանակցելու համար: Ա.Խատիսյանը ներկայացուցիչ նշանակվեց Կովկասյան զինվորական զերատեսչությունում: Թիֆլիսի քաղաքապետիսը ևս, վեհափառի օրինակով, կազմեց ցուցակ՝ բանտերում, արքորում և վտարանդության մեջ գտնվող դաշնակցական գործիչների, խնդրելով իշխանություններին ազատել նրանց՝ ներգրավելով կամավորական շարժման գործընթացին¹⁰: Նման առաջարկությամբ հանդես եկավ նաև Պետական դումայի պատգամավոր Միքայել Պասաջանյանը: Նիկոլայ II ընդառաջեց հայ ազգային գործիչների դիմումներին: Բանտերից քաղաքական բանտարկյալներին ազատ արձակեցին: Կովկաս վերադարձան նաև վտարանդի շատ գործիչներ:

⁸ Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1942, №5-6, նաև Գ.Լուգյան, Հայաստան և հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Ե., 1997, էջ 175-176:

⁹ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, § 222, ց. 1, գ. 5, ք. 108, նաև Ա.Խատիսյան, Քաղաքապետի մը հիշատակները, «Հայրենիք» ամսագիր, Բոսթոն, 1932, № 12, էջ 156:

¹⁰ Տե՛ս Ա.Խատիսյան, նշվ. աշխ., էջ 179:

Կամավորական խմբերի կազմակերպման հարցը քննարկվեց 1914թ. սեպտեմբերի 21-23-ը Թիֆլիսում տեղի ունեցած ՀՀ Դաշնակցության կուսակցության Կովկասի շրջանային ժողովում: Տեղեկացվեց, որ Ռուսաստանի կառավարությունն իր վրա է վերցնում կամավորների զինման ու սնման գործը: Նշվեց գործին համաժողովրդական բնույթ տալու անհրաժեշտությունը:

Հոգուտ կամավորական շարժման էր նաև արևմտահայ մտավորականության, երիտասարդության, հոգևորականության ընդհանուր տրամադրությունը: Ինչպես գրել է Վահան Փափազյանը, «քուրքահայ և կովկասահայ երիտասարդությունը դաշնակցության դուռները սփ առած էր, կպահանջեր հրապարակ իջնել և ձեռք առնել կամավորական գունդեր կազմավորելու գործը: Ամեն կողմէ բարոյական ճնշում կլրուէր դրական կերպով լուծելու կամավորական գունդերու խնդիրը և ստանձնել կազմակերպության ղեկավարությունը»¹¹: Թիֆլիսում նման ակտիվություն նկատել է և Կարո Սասունին: «Կովկասահայության ոգևորության ալիքը իր գագաթնակետին էր հասել», – գրել է նա¹²: Այսպիսով, քուրքահայերի համար կամավորական շարժումը, «աղետաբեր և չափազանց վտանգավոր» համարող գործիչները համակերպվեցին Կովկասում տիրող քաղաքականությանը, հարեցին նրան և, Բ.Բորյանի ձևակերպմամբ «վերածվեցին հնագանդ զենքի ռուսական դիվանագիտության ձեռքում»¹³: Հայկական գաղթօջախներում հայրենիքի ազատագրման համար կամավորական շարժման մեջ ներգրավվելու գաղափարով տոգորված երիտասարդության մղումը չէին կարող չտեսնել նաև նրանք, ովքեր համամիտ չէին նման խմբերի կազմակերպմանը: «Տուն, գործ,

¹¹ Կոմս, Իմ հուշերը, հ.Բ, էջ 282:

¹² Տես Կ.Սասունի, Տաճկահայաստանը ռուսական տիրապետության տակ, 1914-1918թթ., Բոսթոն, 1927, էջ 26:

¹³ Б.Борян, Армения, Международная дипломатия и СССР, т.1, М-Л, 1928, с.346.

բուլեզ, կամ համալսարան կլքեն, դեպի Հայաստանի ռազմաճակատ վազելու աճապարումով», – գրում է Հ.Երենյանը¹⁴: Բժիշկ Իսահակ Տերտերյանը խորհում էր, «հազարավոր հայ մարդիկ կամավորական շարժման անդիմն լծվեցին չմտածելով թե ինչի համար է այդ շռայլությունը, եթե առանց այն Լ է ցարը գորահավաքի էր ենթարկել մեր ժողովրդին»¹⁵: Կարծեք թե պատասխանելով Ի.Տերտերյանի հարցադրմանը, Արամայիս Երզնկյանը գրում է. «Լորոնցով-Դաշկովը շատ լավ զիտեր, որ զինվորական տեսակետից, որպես ռեալ ուժ, կամավորական շարժումն արժեք չուներ, սակայն ռուսական զորքի աշխուժացման ընթացքին նրան անհրաժեշտ էր, որ տաճկահայերի ամբողջ համայնքը լիներ ռուսական զորքերի կողմը, և այդ բանին զերագանցապես կարող էր նպաստել կամավորական շարժումը»¹⁶:

Իրենց մոտեցումներն ունեին նաև Անդրկովկասի բուլճիկները, որոնք փաստորեն կրկնում էին բուլճիկյան կուսակցության կենտրոնի մոտեցումները և պատերազմի մասին նրանց որոշումները: Ելնելով Առաջին համաշխարհային պատերազմի լենինյան բնութագրից, նրանք բացասական էին վերաբերվում՝ պատերազմին ռուսական բանակի կազմում հայ կամավորական լսմբերի մասնակցությանը: Դրանում բուլճիկները տեսնում էին հայերի կողմից ցարական կառավարության զավթողական, իմպերիալիստական քաղաքականության սատարում: Հայ բուլճիկները միաժամանակ մտածում էին, որ ռուսական բանակի կազմում զինված ջոկատների առկայությունը կարող է առիթ ծառայել բուրքերի կողմից ավելի դաժան վերաբերմունքի: Պահանջելով դադարեցնել կամավորական շարժման կազմակերպումը, ցրել լսմբերը, այդ գործընթացը համարելով «վնասակար և

¹⁴ Հ.Երամյան, Հուշարձան Վան – Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1929, էջ 320:

¹⁵ Ի.Տերտերյան, Հայկական գոյամարտը, մեր ցեղի դառնադետ անցյալի սեղմ պատմությունը, հ.6, Թեհրան, 1956, էջ 192:

¹⁶ Ա.Երզնկյան, Աշխատավորության դատաստանին, Թիֆլիս, 1927, էջ 62:

անընդունելի», Կովկասի բոլշևիկները հանդես եկան հատուկ հայտարարությամբ¹⁷:

«Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» կոլեկտիվ աշխատության մեջ ասված է. «Հայ բուրժուազիայի քաղաքական պարտիաները՝ դաշնակցությունը, կադետները և մյուսներն անվերապահ կերպով լծվեցին Անտանտի ինպերիալիստների ռազմակարգին: Նրանք ցարական կառավարության գիտությամբ ու նյութական օժանդակությամբ կազմակերպեցին խմբեր և դրանք դրեցին ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տրամադրության տակ: Կովկասյան փոխարքայության պաշտոնյաները ուրախությամբ գեկուցում էին կենտրոնական կառավարությանը, որ դաշնակցությունը «ոչ մի բանում հակակառավարական գործունեություն չի ցուցաբերում, բոլոր անձնական ուժերը և նյութական միջոցները գործադրելով կամավորական ջոկատներ կազմակերպելու համար»: Կողմնորոշվելով դեպի ցարիզմի ռազմաքաղաքական պլանների իրագործումը, կամավորական շարժման կազմակերպիչները՝ արևելահայ բուրժուազիան և նրա մարտական սպարտիան՝ դաշնակցությունը, նորից բռնում են արևմտահայ ժողովրդի ազատագրման այն սխալ և ավանտյուրիստական ուղին, որ անցյալում այնքան դաժան փորձանքներ էր բերել արևմտահայ ժողովրդին»¹⁸:

Խորհրդահայ պատմագիտությունը ընդունում էր, որ Արևմտյան Հայաստանի ազատագրումը հուզում էր ամբողջ հայ ժողովրդին: Հազարավոր մարդիկ պատրաստ էին իրենց կյանքի գնով օգնել իրենց եղբայրների ազատագրմանը քուրքական բռնակալության դաժան լծից: Հենց այդ հայրենասիրական մղումով էլ զգալի քվով աշխատավոր տարրեր մտան կամավորական զնդեր: Բոլշևիկները հասկանում էին, որ կամավորական շարժմանը

¹⁷ Մ.Արզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907-1917թթ., Ե., 1959, էջ 476:

¹⁸ Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1963, էջ 63:

մասնակցող շարքային զինվորները տոգորված էին արևմտահայերի ազատագրման ազնիվ նպատակով: Նշելով դա, խորհրդային հայ սլատմագիտությունը ընդգծում էր, որ բուլշևիկները կանխատեսում էին նաև այն վնասակար հետևանքները, որ ունենալու էր այդ շարժումը՝ անկախ նրա շարքային մասնակիցների նպատակներից և կամքից: Նրանք ուղղակի նախագգուշացնում էին, որ թուրք ջարդարարներն օգտագործելու են հայերի կամավորական շարժումը՝ արևմտահայությանը դաժան հալածանքների ենթարկելու համար: Հեղինակների եզրակացությունն էր. «հետագա դեպքերը ցույց տվին, բե որքան արդարացի էին բուլշևիկները, և որքան կործանարար էր սլատերազմի տարիներին հայ նացիոնալիստների որդեգրած ուղեգիծը: Օգտագործելով սլատերազմական իրադրությունը, երիտարուքների կառավարությունը, գերմանական իմպերիալիստների հովանավորությամբ, որոշեց կենսագործել արևմտահայերի ֆիզիկական բնաջնջման իր նալսաալեսս մշակված հանցավոր ծրագիրը մի այնալիսի ծավալով, որր անօրինակ է նույնիսկ թուրքական բռնակալության սլատմության համար»:

Նման եզրակացության հետ համաձայնել չի կարելի, հայերի ցեղասլանությունը և կոտորածները չի կարելի վերագրել կամավորական շարժումներին և այդ առիթով առաջացած «թուրքական ցասումին»: Դա սլատմական երևույքների գնահատման ինդաթյուրում է՝ տուրք գաղափարալիտությանը: Չալեսար է անտեսել թուրք կառավարողների սլանթուրքիստական և սլանթուրանական նկրտումները, թուրքական «աշխարհը անհավատներից» մաթրազարդելու տեսչը, նրանց թուրքացնելու, իսլամացնելու մուլուցքը. «Մեր կրոնական զգացմունքները քելադրում են մեզ ազատել իսլամական աշխարհն անհավատների տիրաալետությունից», – ազղարարում էր երիտարուքների կուսակցության կենտրոնական վարչությունը 1914թ. նոյեմբերի 12-ին տարաւածած շրջաբերականում¹⁹:

¹⁹ В.В.Готлиб, указ. раб., с.153, տե՛ս նաև Е.Ф.Лудшувейт, указ. раб., с.25-33.

Հայերի տեղահանումները, կոտորածները, ցեղասպանությունը, ընդգծել է Հ.Ավետիսյանը, «եղել են օսմանիզմի, համաթուրքիզմի, երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության հետևանք, կամավորական և ֆիդայական շարժումները մոծվել են ոչ թե .դրսից, հրահրվել օտարի կողմից, այլ հանդիսացել են հայ ժողովրդի պատմական տենչերի, ազգային-ազատագրական ձգտումների, բռնության դեմ ցասման ինքնարոլխ արտահայտություն: Այդ շարժումների շնորհիվ էր, որ փրկվեց արևմտահայության 1/3-ը»²⁰: Գերմանական հասարակական գործիչ, հոգևորական Էդվալդ Շտիրը նշել է, որ հայերի շարժումը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրենց ազգակիցներին բռնությունից, կոտորածներից, իսլամացումից ապահովելու միջոց: «Եվ եթե հայերը դիմեցին ինքնապաշտպանության և հայացք ձգեցին ռուսների վրա, որոնց շարքերում կռվում էին ռուսահայերը, դա իհարկե հասկանալի էր», – գրել է Շտիրը 1917թ. նոյեմբերի 14-ին հրատարակված «Հայկական հարցի առթիվ» հոդվածում: Դա պատասխան էր 1917թ. սեպտեմբերի 24-ի «Միություն և առաջադիմություն» կուսակցության համագումարում Թալեաթ փաշայի առաջ քաշած այն կեղծիքին, թե հայերի կոտորածները եղել են նրանց անհնազանդության, ռուսական կողմնորոշման, արտասահմանից եկած հորդորանքների և քաջալերումների հետևանք: Ժխտելով այդ և հայերի տեղահանումները, պատերազմի արամաքանությամբ կատարված լինելու մասին քալեաթյան վարկածը, նա սպացուցում էր, որ հայերի տեղահանումները եղել են նաև Կիլիկիայում, որը պատերազմական թատերաբեմ չի եղել, հաստատում, որ տեղահանումների և նրա հետևանքների մեղքն ամբողջովին ընկնում է Թուրքիայի կենտրոնական կառավարության վրա: Նշելով, որ «արևմտյան վիլայեթներում, որոնք ենթարկվում են անմիջապես Կ.Պոլսի կառավարությանը, մասնավորապես Թալեաթ փաշային, տեղահանումների ժամանակ բարի կամքը

²⁰ Հ.Ավետիսյան, Հայկական հարցը 1918թ., էջ 25:

բացակայում էր», Է.Շաիրն աներկբայորեն գրում էր. Թալեաթի մեկնարանությունները «Հասարակական կարծիքը մոլորեցնում էին»²¹:

Նորից հիշեցնենք Կովկասյան բանակի հետախուզական բաժանմունքի պետ, կապիտան Դրոցենկոյի նախազգուշացումը՝ Թուրքիան հայերին կճնշի քե՛ պարտության դեպքում, քե՛ հաղթանակի դեպքում: Առաջին դեպքում վրեժից, երկրորդ դեպքում՝ իրենց գործը հեշտացնելու համար, որպես քուրքերին և քաթաբներին մեկ ամբողջության մեջ միաձուլվելու խանգարիչ տարր: Այդ կանխելու համար պետք է կազմակերպել հայերի ինքնապաշտպանությունը և սպառազինությունը²²:

Պատմագրության վերջին շրջանի նվաճումները, արխիվային նոր նյութերի անաչառ ուսումնասիրություններն ու հրատարակումները մերժում են քուրք պատմաբանների և քաղաքագետների, դիվանագետների հորջորջանքը, Թալեաթի, Ջեմալի և այլոց «մտքերի» կրկնությունները, քե իբր կամավորական շարժումները պատճառ հանդիսացան հայերի կոտորածների: Նրանք ժխտում են նաև առանձին հայ պատմաբանների, հրատարակախոսների, դիվանագետների քաղաքական կոնյուկտուրայից բխող հետևությունները՝ ինչպես Գ.Լազյանի եզրակացությունը. «Այս կամ այն չափով կամավորական շարժումը պատճառ ծառայեց քուրքերուն համար որպեսզի կատարուի հայերու տարագրությունը և որպեսզի մեկ միլիոն զոհեր տանք»: Մեղքը զցելով Ռուսաստանի վրա, Գ.Լազյանը գրում է. «Գերագույն այս զոհողությունը տեղի ունեցած ատեն ի՞նչ վերաբերմունք ունեցավ Ռուսաստան դեպի հայերը»²³: Գ.Լազյանը և մյուսները մոռանում են Թուրքիայի՝ Գերմանիայի կողմից պատերազմի մեջ մտնելու նպատակը, նրանց պանթուրանական ընդհանուր պետու-

²¹ Նույն տեղում, էջ 23-24:

²² Ռ. ԿՊՌ-ՊԱ, ֆ.2000, ց.1, գ.3851, ք.9-11:

²³ Գ.Լազյան, Հայաստան և հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, էջ 180:

բյուն ստեղծելու մարմաջը, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբների նրանց ոճրագործությունները, հայաջինջ և հայահալած քաղաքականությունը:

Հիշատակենք հայոց ազգային Բյուրոյի երկու փաստաբուրք՝ մեկն ազգային Բյուրոյի նախագահ Հ.Խունունցի գեկուցագիրն է, մյուսը՝ Նիկոլ Աղբալյանի՝ 1917թ. հոկտեմբերի 10-ի գեկուցումն ազգային համախորհրդակցության նիստում: Հ.Խունունցը երախտագիտությամբ հիշում է այն ծառայությունը, որը կամավորները մատուցել են հայ տառապյալ ժողովրդին՝ ուղեկցելով դեպի կովկասյան սահմանը, Տանկահայաստանի և Պարսկաստանի մեր սարաքախտ գաղթականներին: Այս թշվառները սարսափներից փախչելով կարող էին ճանապարհին թուրք և բուրդ հրոսակների հարձակումներին ենթարկվել և կոտորվել առանց խտրության, սեռի և հասակի, եթե հայ կամավորների կողմից չգտնեին պաշտպանություն և հայրախնամ հոգատարություն:

«Կամավորական շարժման մասին վճիռ արձակելը բողոքելով ապագա հայ պատմագրին» Ն.Աղբալյանն ազգային համախորհրդակցության հոկտեմբերի 10-ի նիստում «որպես ականատես հարկ համարեց մաքեր բանաձևել այդ շարժման մասին և ցույց տալ իր վերաբերմունքը»: Ն.Աղբալյանի բանաձևման հիմնական դրույթները հանգում են հետևյալին. երբ ակնհայտ դարձավ, որ Թուրքիան որպես հակառակորդ կռվի է դուրս գալիս հայերի դաշնակիցների դեմ, այդ ժամանակ ինքնաբերաբար շարժում սկսվեց հայկական բոլոր խավերում: Կամավորներ երևացին անգլիական և ֆրանսիական բանակներում: Կամավորական շարժում սկսվեց նաև դեպի ռուսական բանակը: Յրիվ, անկազմակերպ շարժմանը որոշակի ուղղություն տալու համար ստեղծվեց համահայկական ազգային կենտրոն՝ Կարգադրիչ Մարմին: Ռուսական բանակում հայ կամավորներին հանձնարարվում էր լինել օժանդակ ուժ, որպես երկրին ծանոթ սարք զբաղվել հետախուզական գործողություններով:

Այդ զբաղմունքին համահունչ կամավորական շարժումն

ապրել է երկու փուլ՝ սկզբից մինչև 1915թ. ապրիլի 1-ը և մյուս շրջանը մինչև 1916թ. մարտ՝ կամավորական խմբերի կազմացումը և հայկական ազգային գումարտակների ստեղծումը: Կամավորական խմբերը ցույց են տվել զինված աջակցություն քե՛ռուս պետությանը, և քե՛ր դաշնակիցներին, քե՛ր պաշտպանողական, քե՛ր հարձակողական կռիվներում լինելով միշտ առաջավոր դիրքերում: Նրանք կարևոր դեր խաղացին հատկապես Սարիղանիշի, Գիլմանի, Ռեանդուզի, Բերկրի-Կալայի, Բիքլիսի, Մուշի, Խնուսի, Վանի, Էրզրումի վճռական ճակատամարտերում:

Արձանագրելով, որ կամավորներն ապացուցեցին «հայերի զինվորական կազմակերպվածության ոգին, ժողովրդի հոգեկան կորովը», նրանց «հասարակական մեծ արժեքը, Հայոց վերածնության նախօրեին», Ն.Ադրայանը կամավորական շարժման արդյունքներն ամփոփեց հետևյալ բանաձևով. «Այդ շարժումով հայ ժողովուրդն ապրեց ամբողջ երեք տարի: Դա բարոյական վերածնունդի տարեթիվ է հայ ժողովրդի համար: 10.000-ոց անձնվեր բանակ հանել, մեր պատմության մեջ եզակի երևույթ է: Վերջին դարում, կորովագուրկ հայ ժողովուրդն առաջին անգամ էր այդքան մեծ, կազմակերպված ուժ և կորով ցուցաբերում: Նախքան կամավորական շարժումը, մենք ենքադրում էինք, քե կարող էինք պետականորեն կազմակերպել և պաշտպանվել, իսկ հիմա մենք այդ բանի ապացույցն ունենք: Կամավորական շարժման մի շարք քերություններ նսեմանում են այս մեծ, դրական կողմերի առաջ, իսկ մնացածը պատկանում է պատմությանը»: Սի կարևոր եզրակացություն ևս, կամավորական շարժումը ցույց տվեց, որ «հայ ցեղը կարող է կազմակերպված պաշտպանել իր երկիրը, ցուցադրել ռազմական ոգին և ուժեղացնել հայի ինքնազգացումը»: Կամավորական շարժումն իր մեծ նշանակությունն ունեցավ հայկական հարցը միջազգային հրապարակ հանելու գործում²⁴:

²⁴ Տե՛ս «Հորիզոն», 1917թ., 18-ը հոկտեմբերի, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ.221, ց.1, գ.21, ք.24-35:

Հետաքրքիր է նաև Ս.Վրացյանի գնահատականը նույն համախորհրդակցությունում. «Կամավորական խմբերի վարիչները մեր ցեղի ազնվական կորովի վարիչներ են եղել», – մատնանշելով դահիճում գանվող Անդրանիկին և Դրոյին²⁵:

3. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻ ՍՏԵՂՇՈՒՄԸ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ

Հայկական կամավորական խմբերի կազմավորման գործընթացը նոր քափ ստացավ ռուս-թուրքական Կովկասյան ճակատի բացվելուց հետո: Բազմաթիվ հեռագրերը ապացուցում են հայարմակ տարբեր քաղաքներում կամավորական շարժմանը զինվորագրվելու և կամավորներին անհապաղ Կովկասյան ճակատ ուղարկելու ահազանգումների մասին: «Այժմ քաղաքում կան հարյուր հոգուց ավելի կամավորներ, բոլորին ասում են, որ իրենց գործին կենան և սպասեն իմ հրավերին: Միմֆերոպոլից և Գրիգորիպոլից դիմում են ինձ իրենց առաջարկություններով, Բուլղարիայից և Ռումինիայից էլ գալիս են ամեն օր երկու-երեքական հոգի՝ ցամաքային ճանապարհով: Ոգևորությունը շատ մեծ է և եթե ըստ կարևորությանը նշանակություն չտրվի՝ աստիճանաբար կսառի», – 1914թ. նոյեմբերի 3-ին գրում էր Թիֆլիս Ս.Հարությունյանին, Օդեսայի հայ եկեղեցու ժխտալետ Հովհաննես քահանա Չուրաբյանը: Մինչև Ռուսաստանի՝ Թուրքիային պատերազմ հայտարարելը, Օդեսայից մեկնել էր մինչև 40 կամավոր՝ ռուսական ընկերության շոգենավով և երկաթուղով, պետության հաշվին, գեներալ-նահանգապետի քույլավորությամբ:

²⁵ Նույն տեղում:

Կամավորական նոր խմբերի մեկնմանը, որոնց մեծ մասը տանկահայ փախստականներ էին և նավահանգստի բանվորներ, խոչընդոտում էր Կովկասյան բանակի շտաբը, որն Օդեսայի զինվորական օկրուգի հարցադրմանը «հայկական խմբեր ընդունվող կամավորականներից ստացվում են բազմաթիվ դիմումներ, հայտնեցեք ենթակա՞ են նրանք ուղարկվելու երկաթուղով». պատասխանել էր՝ «ենթակա չեն»: Մինչ այդ օդեսահայերի խնդրանքը մերժել էին քաղաքապետը և գեներալ-նահանգապետը: Վիճակը փոխվեց Պետրոգրադ հղած դիմումի պատասխանով. «դամտնում է գեներալ-նահանգապետի լիազորությունների մեջ»: Տեղեկացնելով ազգային Բյուրոյին այս բոլորի և կամավորների օգտին հանգանականությունների մասին, Հովհաննես քահանա Չուբարյանը գրում էր. «րոպեն լուրջ է և պատմական, ցանկալի է, որ գաղութների կապը Մայր Հայրենիքի հետ լինի ոչ միայն դրամական, այլ ավելի խորը և պինդ: Ժողովուրդն ազահորեն կլանում է ամեն բան ինչ որ գրվում է հայերիս մասին: Պետք է այդ ձգտմանը գոհություն տալ, մատակարարելով մաքուր և առողջարար սնունդ»¹:

Հայրենասիրական աշխույժ գործունեություն էր սկսվել նաև Թուրքեստանյան երկրամասում, բայց այնտեղ ևս զգացվում էր լրատվության քաղց: «Եթե հնարավոր է ժամանակ առ ժամանակ, գոնե շաբաթը մեկ անգամ, հաղորդեք մեզ այն նշանավոր դեպքերի ու անցքերի մասին, որ կատարվում են հայության և հայկական խնդրի շուրջ, որովհետև հազարավոր վերստերով կարված և անջատված Հայրենիքից ու հայության կենտրոնից, միմիայն կցկտոր տեղեկություններ ստանում ենք լրագրերից, որոնք անգոր են լի ու լի, հագուր ու բավարարվածություն տալ մեր հուզված, խռովահույզ մտքին և անհամբերությամբ արոփվող սրտերին», քախանձագին խնդրում էին Աշխաբադի հայ կամավորների օգնության կոմիտեի ղեկավարները: Տեղեկացվում էր, որ այդտեղ ստեղծված կանպնց հանձնաժողովը բացելով իր արհեստանոցը, նշանդով պատրաստել

¹ ՀՀ ՊՊԿԱ, ֆ.288, ց.1, գ.1, ք.11:

է կամավորների համար տաք հագուստ և կատարել հանգանակություն, իրերով և մթերքով: Կամավորների առաջին խումբը՝ 40 մարդ, նոյեմբերի սկզբներին ուղևորվել է Կովկաս՝ գործող խմբերի մեջ մտնելու համար. «մեծ շուքով, ցույցերով և զինվորական երաժշտությամբ»²:

Երկաթուղային կայարանում կամավորներին ճանապարհել էին հայ և ռուս հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ, հոգևորականներ, զինվորականներ, քաղաքային վարչության ծառայողներ: «Բոլոր կամավորներին բաժանվել էր արծաթյա խաչեր շղթաներով»³:

Մեծ շարժում էր սկսվել նաև Անդիջանում և Կոկանդում, որտեղ սակայն հակահայկական և հակառուսական գործունեություն էին ծավալել Թուրքիայից ներթափանցած էմիսարները: Հայերը, ռուսները և վրացիները համախոհ էին: Հայ կամավորական խմբերին և գաղթականներին օգնելու համար հավաքվել էր 50 հազար ռուբլի: Աշխատանք էր տարվում Կովկաս մեկնած առաջին կամավորների ընտանիքներին արքունական գանձարանից օգնություն ցույց տալու համար⁴: Ակտիվ գործունեություն էր ծավալել նաև Աշխաբադի հայ կանանց ընկերությունը՝ Շուշանիկ Մամիկոնյանի ղլխավորությամբ⁵: Պետրոգրադի հայ խնամատար համայնքի նախագահ Սուլբանշահը, տեղեկացնելով մայրաքաղաքից Կովկաս ճանապարհված հայ կամավորների առաջին խմբի մասին, հայտնում էր և տեղի զինվորական հիվանդանոցներում ապաքինվող մարտիկների ցանկությունը՝ «շուտ ապաքինվել և կովկասյան զորքերի շարքում նորից մարտի նետվել Թուրքիայի՝ քրիստոնյաների հավերժ բշնամու դեմ»: Սուլբանշահը խնդրում էր Մեսրոպ սրբազանին միջնորդել Կովկասի փոխարքայի առաջ՝

² Նույն տեղում, ք.36-37:

³ Նույն տեղում, գ.28, ք.10:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ.3, ք.4-5:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ.28, ք.37:

ապաքինվող հայ զինվորներին ուղարկել Կովկասյան զինվորական օկրուգի պահեստային զոմարտակներ⁶: Մոսկվայի հայկական կոմիտեի նախագահ Մտևփան Մամիկոնյանը հայտնում էր Թուրքիայի հետ պատերազմ սկսվելուց հետո ուսանողների ցանկության մասին՝ կամավոր մեկնել որպես սանիտարներ: Հայ ինժեներներն առաջարկում էին կազմակերպել օդային ջոկատ՝ իրենց ներգրավումով: Հայտնվում էր նաև Մյունխենից և Փարիզից հայ բժիշկների՝ որպես կամավոր ճակատ մեկնելու ցանկության մասին⁷: Գ.Չալխուշյանը և առաջնորդական տեղապահ Գևորգ Վարդապետը Դոնի Ռոստովից հայտնում էին քուրքերի դեմ պատերազմ սկսվելու կապակցությամբ Նոր Նախիջևանի համայնքում տիրող աշխուժության մասին: Անգլիայի, Ֆրանսիայի և Բելգիայի հյուպատոսների մոտ ցուցակագրվել էին կամավորական ջոկատներ և կազմակերպվել դրամական հանգանակություններ: Բոլոր կամավորներն էլ անցնում էին Ռոստովով, որը վեր էր ածվել յուրահատուկ հավաքատեղիի և փոխադրման կետի⁸: Գ.Չալխուշյանը մեկ այլ գրությամբ տեղեկացնում է, որ Ռումինիայից ցանկություն են հայտնել Կովկաս մեկնել 70 կամավոր հայեր, Օդեսայից՝ 5, հարցնում էր ի՞նչ անել, ճանապարհել նրանց, քե սպասել⁹:

Մեծ շարժում էր սկսվել Գրիմում, Տալանրոզում, Եկատերինբուրգում, Ստավրոպոլում, Դերբենտում, Աստրախանում: Հատկանշական է, որ Ստավրոպոլի հայերի 15 հոգիանոց խմբին ցանկացել էին միանալ և ռուս կամավորներ՝ կոզակներ: «Ռոսների և իշխանությունների վերաբերմունքը դեպի հայերը և կամավորները շատ լավ է: Առանձին խնամքով կազմվել է կամավորական խումբ, որի բոլոր պիտույքները հայրայքել է հայերի տեղական կոմիտեն:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ.114, ք.124:

⁷ Տե՛ս նույն տեղում, ք.87-93:

⁸ Տե՛ս նույն տեղում, ք.92-93:

⁹ Տե՛ս նույն տեղում, ք.130:

Ձեռքը ստացվել է զինվորական իշխանություններից, մարզվել են զորամասերում, ճանապարհ են դրվել շուքով: Դրոշակն օրհնելուց հետո, այն կամավորներին հանձնել է Կուրանյան զորքերի շտաբի պետը», – հայտնում էին Թիֆլիս Եկատերինոգրադի կամավորական խմբեր կազմակերպող կոմիտեի նախագահ Գեղամ Տեր-Պետրոսյանը և նրա տեղակալ Նիկոլայ Սաթունյանը: Հայկական համայնքը նվերներ և հանդերձանք էր ուղարկել նաև Կուրանի կոզակներին և Կարսի շրջանում գտնվող կուրանցիներին¹⁰:

1914թ. նոյեմբերի 18-ին, 500 կամավորների համար տար սալիտակեղեն, վերնաշապիկներ, վարտիք, զլխանոց, փորակապեր, ոտքի փաքաքաններ և բամբակե բաճկոններ էր ուղարկել Տազանրոզի հայկական կոմիտեն¹¹:

Կամավորներ էին գրվում նաև կանայք: Բաքվի հիվանդանոցի օրդինատոր, բժշկուհի Ելենա Չոհրաբյանը գրում էր Թիֆլիսի հայոց ազգային Բյուրոյին. «Բռուն ցանկություն ունենալով բժշկական օգնություն հասցնել մեր կամավորներին, խնդրում եմ կռփի դաշտ բժշկական խմբեր ուղարկելիս, կամ ուր որ դուք հարմար կգտնեք բժիշկ ուղարկելու, ինձի նկատի ունեցեք»¹²:

Հայ կամավորականներին օգնելու և զաղրականներին խնամելու համար լուրջ գործունեություն ծավալեց 1914թ. հոկտեմբերի վարջին ստեղծված Ղարաբաղի «Եղբայրական օգնության Բյուրոն»: Թիֆլիսի հայոց ազգային Բյուրոյին փոխանցվեց 500 ռուբլի, մթերք և հագուստ: Ղարաբաղի հայոց ազգային Բյուրոն 1914թ. դեկտեմբերի 14-ին, Թիֆլիս ուղարկած մամակում գտնում էր, որ «Ներկա պատմական օրերին, երբ պետք է ամեն միջոցով օգնության գալ տարագիր տաճկահայերի դատի պայտապանությանը, Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը կարող է և պետք է ավելին անել, եթե ոչ դրամով, զոնե օգնական ուժերով: Քանի որ

¹⁰ Տե՛ս նույն տեղում, գ.3, ք.3-4:

¹¹ Տե՛ս նույն տեղում, գ.1, գ.114, ք.140:

¹² Նույն տեղում, ք.7:

Ղարաբաղի հայ ժողովուրդը ևս իրապես զգում է, որ ներկայումս Տաճկաստանում հայի ինքնուրույն գոյության խնդիր է առաջացել, հարցի հաջող լուծմանը պետք է նպաստենք բոլոր հայերս, Ղարաբաղի հայերը ուստի չեն կարող անտարբեր մնալ հայության այս ճակատագրական րոպեին և նա պատրաստ է ամեն զոհողության, հանձն առնել և իր մասնակցությունը ցույց տալ մեր հայրենիքի փրկության սրբազան գործին»: Շեշտելով, որ տաճկահայ դատի պաշտպանության համար Ղարաբաղի հայությունը տվել է մի շարք ակամավոր հերոսներ, հայտնվում էր, որ «այսօր ևս նա պատրաստ է հեծյալ և հետևակ կամավորների զնդերով օգնության գալ Տաճկահայաստանում գործող մեր եղբայրներին»: Բյուրոն հույս էր հայտնում, որ իր ձեռքով կազմած դարաբաղի կամավորների զունդը «թե՛ բարոյապես, թե՛ գործնական մասնակցությամբ մեծ նեցուկ կարող է լինել ներկայումս գործող հայ կամավորներին»¹³: Սահմանն անցնելու նպատակով Թիֆլիսի իշխանություններին դիմեցին նաև պարսկահայ մի խումբ կամավորներ: Փոխարքայի տեղակալ Պետերսոնի պատասխանն էր. «այդ սահմանում ևս արգելքը հայերի համար վերացած է»¹⁴:

Կամավորական շարժումը և Թուրքիայի դեմ պատերազմին իրենց մասնակցության ցուցաբերման մղումը լայն քափ ստացավ նաև արտասահմանյան հայ համայնքներում՝ Եգիպտոսում, Կիպրոսում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Բուլղարիայում, ամենուր, ուր ապրում էին հայերը: Ըստ Կիպրոսում Ռուսաստանի դեսպանորդի վկայության, մինչև 1915թ. փետրվար դիմել էին մոտ 1000 հայեր: Ռումինիայից, հաղթահարելով մի շարք խոչընդոտներ (կառավարության քույլություն, անցագրերի սպառնալուծ, ճանապարհաձախս և այլն) Թիֆլիս եկան կամավորական երեք խմբեր, որոնցից առաջինը՝ 107 կամավոր, գլխավորում էր իր

¹³ Նույն տեղում, գ.4, ք.2:

¹⁴ Նույն տեղում, գ.3, ք.11:

սխրագործություններով ու քաջությամբ հայանի դարձած և ռազմաճակատում մարտերի ընթացքում նահատակված Անդրանիկ Երիցյանը: Հնչակյան կուսակցության Աստրախանի «Էդիկ» մասնաճյուղը հավաքագրեց 150 կամավոր և կամավորական 6-րդ խմբի սպազու հրամանատար Հայկ Բժշկյանի (Գ-այ) ղեկավարությամբ ուղարկեց Թիֆլիս: Այդ կուսակցության Սուխումի մասնաճյուղը կազմակերպեց 50 հոգուց կազմված մեկ ջոկատ և կամավորուհիներից բաղկացած կարմիր խաչի մի խումբ և ուղարկեց ռազմաճակատ: Պարսկաստանի մասնաճյուղը կազմեց 30 հոգանոց կամավորական մի խումբ, որը Ռ-շատունու գլխավորությամբ մտավ Համազասպի հրամանատարությամբ գործող 3-րդ կամավորական խմբի կազմի մեջ: Անդրանիկի գլխավորած 1-ին կամավորական խմբի մեջ մտան Արևմտահայաստանից գաղթած մի խումբ հնչակյաններ, Ֆրանսիայի մասնաճյուղը հավաքագրեց շուրջ 40 կամավոր, որոնք Գորգեն Թահմազյանի գլխավորությամբ մտան ֆրանսիական բանակի մեջ և եվրոպական ռազմաճակատներում կռվում էին Թուրքիայի դաշնակից զերմանական բանակի դեմ: Կամավորագրությունը հատուկ աշխուժություն ստաց բերեց նաև Ամերիկայի հնչակյան մասնաճյուղում: Ամերիկայի Գործադիր Մարմինը հրատարակեց կամավորագրության հրավիրող հայանի «Կարմիր կոչը», որին արձագանքեցին շրջանի բոլոր մասնաճյուղերը: Ամերիկայում կամավորագրության կազմակերպման գործին մեծ ներդրում ունեցավ Պանդուխտը, որը շրջելով մասնաճյուղից մասնաճյուղ, իր հրապարակային ելույթներով և կազմակերպչական հանդիպումներով ստեղծում էր խանդավառություն և լուծում շատ գործնական դժվարություններ¹⁵:

Եգիպտոսում ռուսական դեսպանորդ Սմիրնովը, 1915թ. փետրվարի 22-ին հայտնում է Պետրոգրադ, որ երկրում հավաքվել են ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և այլ երկրներից ժամանած մոտ 1000

¹⁵ Տես Ե.Ճերէնյան, Պանդուխտ, էջ 13-14:

հայ կամավորներ: 15 հազար հայերի պատրաստակամության մասին թուրքերի դեմ կռվելու համար, 1915թ. փետրվարի 25-ին արտաքին գործերի նախարարությանը հայանում էր Մոֆիայում Ռուսաստանի դեսպանորդ Սավիցկին: Դեսպանորդը ներկայացնում էր և «Պրո Արմենիա» քերթի խմբագիր Մ.Վարանդյանի խնդրանքը, առաջարկված կամավորական խմբերի կազմակերպման գլխավոր կոմիտեի կողմից՝ հնարավորություն տալ սեծովյան Կիլիկյան ափերի և փոքր Հայաստանի, Ամերիկայում գտնվող հայությանը վերադառնալ երկիր, զինել նրանց թուրքերի դեմ կռվում: Մ.Վարանդյանը նման առաջարկություն արել էր նաև Մոֆիայում Անգլիայի և Ֆրանսիայի դեսպաններին¹⁶:

Քրիստոնյաների դարավոր թշնամու դեմ կռվելու համար կիլիկիահայության ցանկության մասին ԱՄՆ-ում Ռուսաստանի դեսպան Բալամենտսկին դիմել էր Ադամայի ջարդերից փրկված և Ամերիկա գաղթած հոգևոր առաջնորդը: Նրա՝ 1914թ. հոկտեմբերի 30-ի նամակից երևում է, որ տարագրության մեջ գտնվող կիլիկիահայությունն իր վրա է վերցնում կամավորների հանդերձավորման և Ռուսաստան մեկնելու ծախսերը: Չինման և ռազմաճակատ ուղարկելու հարցերը թողնվում էր ռուսական իշխանություններին¹⁷: Ամերիկահայ կամավորների առաջին խումբը դուրս եկավ 1915թ. մարտի 12-ին; որը Արխանգելսկի վրայով հասավ Կովկաս, դեկավարն էր մշեցի Պանդուխտը: Երկրորդ խումբը, նույն ճանապարհով դուրս եկավ մարտի 10-ին Ալեքսանդր Մնացականյանի գլխավորությամբ, երրորդ խումբը, նոյեմբերի 21-ին՝ Ս.Շահենի գլխավորությամբ:

Ամերիկահայ կամավորները՝ շուրջ 350 հոգի, Պանդուխտի հրամանատարությամբ մեկնեցին Կարս և սկսեցին զբաղվել զինավարժություններով: Հետագայում, երբ որոշվեց կազմավորել

¹⁶ Տե՛ս Ռ Կ ՊՌ ՊԱ, ֆ.2000, ց.1, գ.38, ք.164:

¹⁷ Տե՛ս АВПР, ф Политархив, 1914г., оп.1, д.3420, л.164.

6-րդ կամավորական խումբը, Պանդուխտի ջոկատը միացավ Հովհաննես Ջանվոլայանի հրամանատարության տակ կազմված 6-րդ խմբին¹⁸:

Հայկական կամավորական խմբերի անձնակազմի մասին ամփոփ թվեր չկան: Բերվում են տարբեր թվեր: Հայոց ազգային Բյուրոյի՝ 1914թ. դեկտեմբերի 28-ի նիստում խնդիր դրվեց կամավորների թիվը հասցնել 6000 հոգու: Փոխարքա Վորոնցով-Գաշկովին, 1915թ. հոկտեմբերին ուղղված զեկուցագրում Մեսրոպ արքեպիսկոպոսը, Ս.Հարությունյանը, Ա.Խատիսյանը հայտնում էին, որ կազմակերպված է 6 խումբ՝ 5000 հոգանոց անձնակազմով¹⁹: Կոպկասյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ Գ.Ղորղանյանը բերում է 6000 թիվը, նախնական շրջանում նշելով 2400²⁰: Կարգադրիչ Մարմնի փաստաթղթերում, 1915թ. փետրվարին նշվել է 4500 կամավոր²¹: "Армянский Вестник" ամսագիրը 1917թ.²² և Ն.Աղբալյանը բերում են 10000 թիվը²³, նշելով, որ խմբերը գտնվում են փորձված մարդկանց հրամանատարության տակ, յուրաքանչյուրը բաղկացած էր 450-ական մարդուց, միայն ստաջին զունդն էր, որ 1000-ից ավելին էր: Խմբերը նպաստ էին ստանում պետությունից և ազգային Բյուրոյից: Թվաքանակի պարզաբանման հարցում մեր կողմից նոր ճշտումներ են կատարվել արխիվներում հայտնաբերված նոր փաստաթղթերի հիման վրա: Դրանք են խմբերի անձնակազմի ամփամացուցակները՝ հաստատված իրենց հրամանատարների կողմից, հրամանատարների զեկուցագրերը՝ ուղղված բարձրագույն հրամանատարությանը և

¹⁸ Տե՛ս Ե.ճերէճյան, նշվ. աշխ., էջ 19:

¹⁹ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.288, ց.1, գ.3, թ.7:

²⁰ Տե՛ս Գ.Ղորղանյան, նշվ. աշխ., էջ 12:

²¹ Տե՛ս Գ.Լազյան, Հայաստանը և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրե, 1942, էջ 116-123:

²² Տե՛ս Մ.Շատիրյան, Армянские добровольческие дружины 1914-1916гг., Армянский вестник, М., 1917, №10-14.

²³ Տե՛ս «Հորիզոն», 1917թ., 18-ը հոկտեմբերի, նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ.221, ց.1, գ.21, թ.24-35:

ազգային Բյուրոյին, ավյալներ խմբերի դրամական շրջանառության՝ մուտքի և ելքի մասին: Կամավորական խմբերի համար մուտք եղել է 1 մլն 8584 ռուբլի 72 կոպեկ: Ծախսվել է 752 հազար 647 ռուբլի 30 կոպեկ: 1915թ. չորս ամսվա ընթացքում հատկացված գումարն ավելի էր, քան 1914թ. հինգ ամսվա գումարը: Երկու անգամ ավելի էին և ծախսերը²⁴: Բազրատ եպիսկոպոսի կազմած մի գեկուցագրից հայտնի են դառնում որոշ նվիրատուների անուններ: Այսպես օրինակ, 542 ռուբլի էր ստացվել Օրբազարի Օկսենտ Հայրունի քահանայից: 3445 ռուբլի ստացվել էր Լուգանսկի երեսփոխան Հազարապետյանից, 1355 ռուբլի Նյու Յորքից, Պետրոգրադի ռուսական արտաքին առևտրի բանկի միջոցով: 450 ռուբլի 0.7 կոպեկ Նյու Յորքից՝ սեբաստահայերի Ուլաշ խմբից, 3409 ռուբլի 10 կոպեկ Ամերիկայի ազգային պաշտպանության հանձնաժողովից: 50 ռուբլի էր ուղարկել Տուսիսի շրջանի Ղոյթի հայաբնակ գյուղի Գրիգորիս քահանա Գարաբյանը: 35.000 ռուբլի՝ Աստրախանի հայկական կոմիտեն: Ատրախատականի հայկական կոմիտեն ուղարկել էր 3000 բուման, 2400 ռուբլի՝ Շուշվա կոմիտեն, 2000 ռուբլի՝ Թիֆլիսի դարաբաղցիների կոմիտեն: Գամարլուում կամավոր ցուցակագրվել էր 4000 մարդ²⁵: 1915թ. հունվարի 10-ի դրությամբ, մինչև ծախսերի մախահաշվի կազմելը, կամավորական յուրաքանչյուր խմբին հատկացվել էր 5500-ական ռուբլի: Անդրանիկի խմբին՝ 9500, զինվորական մարմնին՝ 6000 ռուբլի²⁶:

Շատ փաստաթղթեր, նամակագրություններ վկայում են մահայն չկամության, բաշքշուկների, արգելքների, բյուրոկրատիզմի մասին, որոնք գոյություն ունեին պետական գերատեսչություն-

²⁴ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.57, ց.5, գ.102, ք.1, նակ ֆ.288, ց.1, գ.3, ք.4-5:

²⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁶ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.288, ց.1, գ.3, ք.4-5, գ.114, ք.7, 42, նակ «Հորիզոն», 1916թ., հուլիսի 12 և 23, նույն տեղում, 1917թ., 14-ը մարտի, նակ Համառոտ տեղեկագիր Հայոց Ազգային Բյուրոյի գործունեության 1915-1917թթ. ընթացքում, Թիֆլիս, 1917, էջ 7-11:

ներում հայկական կամավորական խմբեր կազմակերպելու գործում: Բերենք բուլղարահայերի օրինակը: 1500 հայերի՝ Կովկաս գալու ցանկության, կամավորական խմբերում ընդգրկվելու և թուրքերի դեմ կռվելու պատրաստակամության ու նրանց տեղափոխվելու հարցով, միջնորդությամբ 1914թ. նոյեմբերի 1-ին արտաքին գործերի նախարարություն դիմել էր Սոֆիայում Ռուսաստանի դեսպանորդ Սավինցկին: Համաձայն չլինելով Կովկասի փոխարքա Վրոնցով-Ղաշկովի՝ նրանց Բուլղարիայում թողնելու առաջարկության հետ, Սավինցկին գտնում էր, որ հայ կամավորների ջոկատը պետք է ուղարկվի Կովկաս, ձևավորվի, զինվի, մարզվի և պահանջ առաջանալու պահին ուղարկվի ռազմաճակատ²⁷: Արագործնախարար Սազոնովի՝ 1914թ. դեկտեմբերի 10-ի նամակը բավարար. պատասխան ստացավ գերատեսչություններում 11 ամիս շրջապտույտից հետո, այն էլ վերապահունով: Ռուսաստանի ճանապարհային հաղորդակցության նախարարը, 1915թ. դեկտեմբերի 10-ին, ի պատասխան վերոհիշյալ նամակի, հնարավոր էր գտնում բուլղարահայ կամավորներին՝ Թուրքիայի դեմ կռվելու համար, Կովկաս տեղափոխել 3-րդ, 4-րդ կարգի երկաթուղային վագոններով՝ Սոֆիայից Ռուսաստանի դեսպանորդից ստացված վկայականի ներկայության պայմանով²⁸: Հարցը, ինչպես վերոհիշվեց, բարձրացրել էր Բուլղարիայում՝ Ռուսաստանի դեսպանը:

Կամավորական շարժման գործընթացը իրավունք էր տալիս ազգային Բյուրոյին պաշտոնական զեկուցագրում արձանագրել. «Գործը չափազանց նոր էր, և ոչ մեկը չէր կարող պատկերացնել, քե հայ ժողովուրդը, որ դարերով ապրել էր ստրկական վիճակում, կարող կլիներ երևան հանել մի այնպիսի մեծ ուժ, որ ինքնակամ կգար նահատակվելու հայ ժողովրդի ազատագրության համար: Կամավորական շարժման ժամանակ էր ահա, որ հայ ժողովուրդը

²⁷ Տե՛ս Ռ ԿՊՌՊԱ, ֆ.2000, ց.1, գ.3860, ք.237:

²⁸ Տե՛ս АВПР, ф Политархив, 1914г., оп.1, д.3940, л.6.

ցույց տվեց միանման ոգևորություն: Հազարներով էին վազում կամավոր գրվելու, ծեր, պատանի, առողջ և հիվանդ, զինավարժ և ոչ զինավարժ, լավ և վատ դնում էին իրենց ամձը Կարգադրիչ Մարմնի տրամադրության տակ, մերժել անկարելի էր: Երկրագնդի ամենահեռավոր անկյուններից, ուր ոտք էր դրել հայ մարդը, նույնիսկ Նոր Բուխարան և Ամերիկան, բաժին հանեցին կամավորներին՝ ազեա և կրթված, բոլորն էլ ոգևորված էին միայն մի գաղափարով: Բոլորն էլ փաստորեն զգում էին, որ գնում էին փշրելու դարերով ծանրացած իրենց վրայի շղթաները և գալիս էին շարանշարան, զիշեր ու ցերեկ, օրերով ու շաբաթներով, մաշում էին այն շենքերը, ուր տեղի էր ունենում կամավորների ցուցակագրությունը: Առաջարկում, խնդրում, երբեմն սպառնում, մինչև իսկ լալիս էին մինչև որ կարողանում էին ցուցակագրվել»: Այս հանգամանքը, գրում էին գեկուցագրի հեղինակները, «ապացուցում է, թե հայ ժողովրդի հոգու ներսը որքան մեծ առաքինություններ են քարքված»²⁹:

Պատասխանելով ռուսական կառավարության հայասիրական հայտարարություններին և ոգևորված նրանցով, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը տեղեկացնում է հայ կամավորական համաժողովրդական շարժման և Ռուսաստանի շահերի սատարման հարցում հայության պատրաստակամության, հայերի մոտ արմատավորված այն մտքի մասին, թե միայն Ռուսաստանը կարող է ապահովել նրանց ֆիզիկական և կուլտուրական զարգացումն Արևմտյան Հայաստանում: Վերոնցով-Դաշկովին, 1914թ. նոյեմբերի 8-ին գրած նամակում, վեհափառը միաժամանակ հիշեցնում էր, որ «այն ամենը, ինչ որ կայսրական կառավարությունը, եվրոպական պետությունների հետ ձեռնարկել է սկսած վերջին ռուս-թուրքական պատերազմից

²⁹ Հայաստանի Հանրապետության հասարակական և քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ (այսուհետև ՀՀ ՀՔԿՓԿՊԱ), ֆ.4047, ց.1, գ.91, ք.1:

քուրքահայ ժողովրդի վիճակի բարելավման տեսակետից, դրական արդյունքներ չի տվել»: Վեհափառը խնդրում էր, որպեսզի «կայսեր անունից հայտարարվի Վանի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիի ու Խարբերդի հայկական վիլայեթների, Կիլիկիայի հետ միասին, ինքնավարություն շնորհելու մասին, որով կավարտվեր Ռուսաստանի պատմական առաքելությունը, Թուրքիայի լծի տակ դարերով ճնշված քրիստոնյա ժողովրդի ազատագրման գործում»³⁰: Այդ միտքն տվելի ամրապնդվեց 1914թ. նոյեմբերին Կովկաս ժամանած կայսր Նիկոլայ II-ի հետ վեհափառի համեղիպումից հետո: Տիրակալը փստահեցրել էր, որ «հայերին պայծառ ապագա է սպասվում», «հայկական հարցը կլուծվի հայերի սպասումների համաձայն»: Նրա հավաստումն՝ իր մեջ ուներ մեծ խորհուրդ: Օգտագործել հայ ժողովրդի ռուսական կողմնորոշումը, պետք էր շահել արևմտահայության համակրանքը, այն ուղղել Թուրքիայի դեմ Ռուսաստանի կողմից ակտիվ գործունեության: Նոյեմբերի 24-ին, քուրքահայերին ուղղված կոչում, կայսրը երաշխավորում էր «Հայաստանին ինքնավարություն Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների սահմաններում և նրանց հետ անխզելի կապված Կիլիկիայում, մեծ Ռուսաստանի հզոր հովանու տակ, որին պետք էր հասնել դաշնակիցների հետ հատուկ համաձայնությամբ»: «Թուրքահայերի բախտը սերտորեն կապված է մեր հաղթանակի հետ, և նրանք պետք է ամեն կերպ օգնեն մեր կողմից վերջնական հաղթանակին հասնելուն, որը զգալիորեն կթեթևանա տեղական բնակչության ակտիվ համագործակցության շնորհիվ», – ասված էր կոչում³¹:

Հայ հասարակական շատ գործիչներ, պատերազմի առաջին իսկ օրից, զարգացնում էին այն միտքը, թե կամավորական շարժման գործընթացը պետք է ընթանա անկախ քաղաքական, կուսակցական պատկանելության: Գտնելով, որ կամավորներին պետք

³⁰ ՀՀ ՊՊԿԱ, ֆ.57, ց.2, գ.733, ք.1-3:

³¹ АВПР, ф. Политархив, 1914г., оп.1, л.36-38.

է ազատել կուսակցությունների նեղ հարցադրումներից, հայ մտավորականության ներկայացուցիչները գտնում էին, որ ջուկատների ստեղծման նպատակը համազգային է, Թուրքիայի հայերի ազատագրումը համընդհանուր գործ է, ինչը սլահանջում է համախոհ և համատեղ գործունեություն: Շրջաբերական նամակով տեղեկացնելով, որ կամավորների կազմակերպման գործը՝ զինվորներ հավաքելը, խմբեր կազմելը, խմբապետեր և արշավանքի կետեր նշանակելը հանձնարարված է ՀՀ Դաշնակցությանը, արևելյան Բյուրոն այնուհանդերձ գտնում էր, որ կամավորական շարժումը տարվում էր անկուսակցական սկզբունքով, «սառճկահայ մեր ընկերների կատեգորիկ սլահանջով»³²:

Հետևելով ՀՀ Դաշնակցության գործունեությանը, Թիֆլիսի ժանդարմերիական նահանգային վարչությունը զեկուցում էր, որ կուսակցությունը գործում է քուրքական կառավարության դեմ այն հրահանգով, «որը քույլ է տվել Կովկասում նորին կայսրական մեծության փոխարքան»³³:

Այնուհանդերձ, ռուսական քանակի բարձր հրամանատարության կազմում կային բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք դեմ էին հայերի կամավորական շարժմանը և նրանց Կովկաս ուղարկելուն: Մերժելով Պետրոգրադի ԲՈՒՀ-երի հայ ուսանողներից կամավորական ջուկատ ստեղծելու մասին մայրաքաղաքի քաղաքազուխ կոմս Ի.Ի.Տոլստոյի միջնորդությունը, 1914թ. նոյեմբերի 16-ին գլխավոր շտաբի պետ Յանուշկևիչը գրում էր. «Կովկասում հայերին հատուկ շրջաններում առանձնացնելն անցանկալի է»³⁴: Սաղրիչ մոտեցում ունեին զեներալ Արաքիկը և այլ բարձրաստիճան սպաներ, որի մասին զրել են ռազմաճակատ մեկնած Հ.Թումանյանը, Ա. Շիրվանզադեն և այլ մեծեր: 1914թ. հոկտեմբերի 31-ին հրատարակված «Երրորդ զարկը» հոդվածում իր

³² ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ.4077, ց.1, գ.79, ք.1-2:

³³ Նույն տեղում, գ.154, ք.2:

³⁴ ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.33, ք.1-4:

սրտի խոսքը կամավորների մասին արտահայտեց Հ.Թումանյանը: Որպես «Առաջին զարկ» մեծ լոռեցիկն ներկայացնում էր 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմում աչքի ընկած Աղասուն՝ Խ.Արովյանի «Վերք Հայաստանի» պատմավեպի հերոսին: «Երկրորդ զարկը» պատկերում էր Վարդանին՝ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոսին, նկարագրված Բաֆֆու «Խենքը» պատմավեպում: Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական Կովկասյան ճակատում ռուսների կողմից հայերի հանդես գալը Հ.Թումանյանը դիտում էր որպես «ավանդական երրորդ զարկ», գտնելով, որ «երրորդ զարկն է որոշում, վճռում խնդիրը»: «Երրորդ զարկով հյուսիսի հսկան, մեծ Ռուսաստանը վճռում է հայոց ազգի հին, արյունոտ խնդիրը, ապահովում է նրա ապագան և առաջնորդում է դեպի ազատ ազգերի եղբայրությունը», – գրում էր Թումանյանը³⁵:

Ժողովրդին քաջալերող ազդակ էր նաև 1914թ. նոյեմբերի 3-ին Բաքվում գրած և նոյեմբերի 5-ին տեղի «Արև» թերթում հրատարակած «Վերջին տազնասյը» բանաստեղծությունը: Նրանում արտահայտված է թուրքական լծից ազատվելու հայերի իղձը, այդ հարցում Ռուսաստանի պատմական առաքելությունը: Այն պատկերվել է անպաճույճ, Թումանյանին հատուկ պարզ բանաձևով.

Ու ամպերում, բարձր ուսից Մասիսի,
Սլանում է մեծ արծիվը հյուսիսի,
Շիտակ դեպի բարձրունքները հայկական,
Իր հետևից հայի բախտն ու ապագան:

³⁵ Հ.Թումանյան, Ուսումնասիրություններ և հրատարակումներ, Ե., 1964, հ.2, էջ 354:

Կամավորական շարժմանը Հ.Թումանյանը նպաստում էր նաև գործով: Այդ մասին են վկայում մասնավորապես բանաստեղծի հանդիպումները Բարձրի հայ աշակերտության և մտավորականության հետ 1914թ. նոյեմբերի 5-ին, երբ մի խումբ բարձրեցի հայորդիներ կամավորական խմբեր էին մտնում և զորակայաններ ներկայանում: Կամավորական խմբեր մտնելու համար ցուցակագրվեցին նաև Էջմիածնի Գևորգյան ճեմարանի 27 սաներ, չնայած Հ.Թումանյանը հորդորել էր «առժամանակ քողնել հայրենասիրական որոշումը և շարունակել ուսումը»³⁶:


Հայ մտավորականությունն իր հայրենասիրական պարտքն էր համարում նաև ռազմաճակատ մեկնելը, տեղում իրավիճակին ծանոթանալը, կամավորներին ու զորականներին ոգևորելն ու սատարելը, լայն հասարակայնության իրավիճակի ճիշտ ներկայացնելը: Հայ կամավորներին հոգեպես միախմբելու համար ռազմաճակատ մեկնեցին Հովհաննես Թումանյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խունունցը, Թիֆլիսի Վերայի վանքի քահանա Նիկողայոս Բավոյանը, Երևանի քաղաքագլուխ Սմբատ Խաչատրյանը: Խումբը գլխավորում էին Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսները³⁷: Մտավորականների խումբը Էջմիածնից անցավ Իգդիր, Կարս, Բայազետ, Ալաշկերտ, Բասսեն, Գելիբարա, Խորասան, Ջևին: Իգդիրում խումբը երկու անգամ հանդիպեց կորպուսի հրամանատար, զեներալ Օզանովսկու և շտաբի պետ, զեներալ Լյախովի հետ: Օզանովսկու կարծիքը կամավորների մասին չափավոր էր: «Կամավորներն ունեն իրենց դերը, այդ դերը գլխավորապես երկրի հետազոտությունը և քշնամու դիրքերի որոշումն է: Նրանք ճանաչում են երկրի բոլոր անկյունները, գիտեն լեզուն, ծանոթ են տեղական պայմաններին»: Գեներալը բարձր է գնահատել Անդրանիկի դերը, նրա հետ կապելով Վանի ապագա զրավման խնդիրը: Գե-

³⁶ «Հորիզոն», 1914թ., 11-ը նոյեմբերի, №250:


³⁷ Տե՛ս «Ձիթենի», Թիֆլիս, 1914թ., էջ 10:



Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V-ը օրհնում է հայ կամավորականներին, Էջմիածին, 1915թ.



Դրոյի խումբը ուզգմաճակատ մեկնելուց առաջ






Անդրանիկ, հայկական 1-ին կամավորական խմբի
հրամանատար



Դրո, հայկական 2-րդ կամավորական խմբի իրամանատար





*Հայկական 4-րդ, 3-րդ և 5-րդ խմբերի հրամանատարներ Քնոի,
Համազասպ և Վարդան*



7. Ջանփոլաջյան, հայկական 6-րդ կամավորական խմբի հրամանատար






Յ. Արղուբյան, հայկական 7-րդ կամավորական խմբի հրամանատար



Սանիտար կամավորների մի խումբ



Հայ կամավորները հանգստի պահին






Գեներալ Նիկոլասը իր շտաբի և հայ հրամանատարներ Արամի, Վարդանի, Դրոյի, Խնչոյի հետ Վանի ազատագրումից հետո, Վան, 1915թ.



Հայկական 3-րդ կամավորական խմբի հրամանատար Համազասպը գերված քուրդ ավագակների հետ, 1915թ.



Գնդապետ Պավել (Պողոս) Բեկ-Փիրունյան, հայկական 5-րդ հրաձգային գումարտակի հրամանատար



Փոխգնդապետ Արտեմ Գոլսեփյան, հայկական 4-րդ գումարտակի հրամանատար



Փոխգնդապետ Ա. Սամարցյանի զունարտակի մի խումբ սպաներ, Խնուս, 1917.

ներալը կատակելով խոսել և և իր հայկական ծագման մասին, «գիտեր իմ արյան մեջ էլ մի քիչ Կարապետ կա», «ես կփափագեի, որ այս անգամ ձեր թուրքահայ եղբայրների խնդիրը վերջապես լուծվեր»³⁸:

Մտավորականների խումբը հանդիպել է նաև Արմեն Գարոյին, Գրոյին, հայատյաց գեներալ Աբացիկին, կոզակային զորքերի պետին, որը նշել էր կամավորների առաքելությունը, մանավանդ երկրին ծանոթ լինելը, լեզուն և ավանդույթները, գյուղերն ու տները իմանալը: Ժխտվել և ճիշտ են ներկայացվել կամավորների շուրջ հորինված արացիկյան բանասարկությունները և սադրանքը, հերյուրանքները, թե իբր «կամավորները գնում էին ռուսական զորքի հետևից»³⁹: "**Кавказское слово**" քերթում տպագրվեց Ա.Շիրվանզադեի հոդվածաշարը «Պատերազմի վայրերում» վերտառությամբ, որն իրավիճակի ճշմարիտ վերարտադրությունն էր: Սակայն այստեղ ևս զգացվում էր խմբագիր Դուլուխանյանի ցենզուրական ձեռքը: Հ.Թումանյանը վրդովված էր, որ Դուլուխանյանը Հայկական հարցի մասին շատ բաներ կրճատում էր, «կարևոր կետեր հանում»: «Ամեն ինչ մեզ հետաքրքրում է, բացի դրուժինաներից, և խմբերի մասին չի ուզում տպագրել պատճառաբանելով, որ դա վնաս կրերի Հայկական հարցին»⁴⁰: Այդպիսին էր քերթի խմբագրի մոտեցումը:

³⁸ ՀՀ ՊՊԿԱ, ֆ.288, ց.1, գ.7, ք.31, նաև "Кавказское слово", Тифлис, 1914г., №53-54.

³⁹ «Չիքենի», Թիֆլիս, 1914թ., էջ 41-42, նաև ՀՀ Գրականության և արվեստի քանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Թումանյանի ֆոնդ 258, №52, ք.3:

⁴⁰ ԳԱԹ, Թումանյանի ֆոնդ, գ.258, ք.9-10:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՆՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՍԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Յարական գորահրամանատարությունը հայկական խմբերի կազմավորմանը ձեռնամուխ եղավ 1914թ. օգոստոսից: Սկզբնապես բույլատրվեց կազմավորել չորս կամավորական խումբ՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ: Այս խմբերի հրամանատարներ նշանակվեցին հայ ազգային-ազատագրական պայքարի մեջ քրծված հայդուկներ՝ Անդրանիկը, Դրոն, Համազասպը, Քեռին: Նախնական ծախսերի համար հատկացվեց 3500 ռուբլի գումար, ռազմական ֆոնդից բաց քողնվեց ևս 5100 ռուբլի, որից 4500-ը տրվեց Թիֆլիսի քաղաքազույս Ա.Խատիսյանին, որը այդ ժամանակ նաև հայոց ազգային Բյուրոյի նախագահի տեղակալն էր: Սահմանվեց նաև պետական գանձարանից յուրաքանչյուր կամավորի համար ծախսերի, այդ քվում և ամսական ռոճիկի չափը: Խմբերի անձնակազմը, որը պահվելու էր պետական գանձարանի հաշվին, չպետք է գերազանցեր 1-ին խմբում՝ 1200-ից, իսկ 2-րդում, 3-րդում և 4-րդում՝ յուրաքանչյուրում 400-ից: Այս քանակից ավելին ընդգրկված կամավորները ռոճիկ չէին ստանալու¹:

Հայկական առաջին կամավորական խումբը (հրամանատար՝ Անդրանիկ) կազմավորվեց 1914թ. հոկտեմբերի 23-ին, Սալմաստում (Հյուսիսային Իրան), հիմնականում արևմտահայերից, Կովկասյան քանակի Ադրբեջանյան զորաջոկատի կազմում²: 2-րդը (հրամանատար՝ Դրո) հոկտեմբերի 25-ին Իզդիբում, Բայազետի զորաջոկատի կազմում: Կազմավորման պահին այս խմբում կար

¹ Տե՛ս Ռ.ԿՊՌՊԱ, ֆ.2000, ց.1, գ.3797, ք.1-2:

² Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.3, ք.1-31:

472 կամավոր, որից 354-ը՝ արևելահայ, իսկ 118-ը՝ արևմտահայ³: 3-րդը, Համազասայի հրամանատարությամբ, կազմավորվեց Կաղզվանում՝ հետևակային 1-ին կոզակային (պլաստունյան) բրիգադի կազմում, սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում: Կազմավորման պահին, նրա կազմում կար 350 հետևակ և 70 հեծյալ կամավորական⁴: 4-րդ խումբը (հրամանատար՝ Քեռի), կազմավորվեց Սարիղամիշում՝ Կովկասյան 2-րդ Թուրքեստանյան կորպուսի կազմում⁵:

Հայկական կամավորական չորս խմբերում կազմավորման պահին կար 2400 մարդ: 1915թ. գարնան սկզբին հայկական բոլոր խմբերը համալրվեցին նոր կամավորներով: Ապրիլին 2-րդ, 3-րդ և 4-րդ խմբերը միավորվեցին, նրանցից կազմավորվեց Արարատյան զորաջոկատը Վարդանի ընդհանուր հրամանատարությամբ, որը հատկապես աչքի ընկավ Վանի գրավման ժամանակ:

Կամավորական առաջին խմբերը ռազմաճակատ մեկնեցին 1914թ. հոկտեմբերի վերջին՝ 1-ին խումբը՝ Սալմաստ-Վան, 2-րդը՝ Իգդիր-Բայազետ-Բերկրի-Վան, 3-րդը՝ Կաղզվան-Ալաշկերտ-Մանազկերտ-Բիթլիս, 4-րդը՝ Սարիղամիշ-Օրգան-Ջյոփրիքոյ-Էրզրում ուղղություներում գործելու համար:

Անդրանիկի գլխավորած հայկական 1-ին կամավորական խումբը 1914թ. հոկտեմբերի 23-ին Սալմաստից տեղաշարժվելով դեպի Խոյ, մտավ գեներալ Չերնոզուբովի գլխավորած Ադրբեջանյան ռուսական զորաջոկատի կազմը (զորաջոկատը Ադրբեջանյան էր կոչվում Հյուսիսային Պարսկաստանում տեղակայված լինելու պատճառով): Առաջին լուրջ ընդհարումը թշնամու հետ խումբը ունեցավ նոյեմբերի 5-ին, Դիլմանի ուղղությամբ գտնվող Աշնակ գյուղի մոտ, այն ավարտվեց խմբի փայլուն հաղթանակով և այդ գյուղի գրավմամբ: Այնուհետև, Անդրանիկի խումբը նոյեմ-

³ Տե՛ս նույն տեղում, գ.6, թ.13:

⁴ Տե՛ս նույն տեղում, գ.9, թ.78-79:

⁵ Տե՛ս նույն տեղում, գ.3, թ.18:

բերի 7-ից մինչև 17-ը Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի կազմում, որն այդ ժամանակ գլխավորում էր՝ 1877-1878 թվականների ռուս-թուրքական և 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմների մասնակից զեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը, պոլտավյան գնդի կոզակների հետ մասնակցեց քրդաբնակ Քաշկուլ, Կոթուր և Արաքել գյուղերի շրջանում մղվող մարտական գործողություններին և նրանց զրավմանը: 10 օր տևած այդ ծանր կռիվներում խումբը ոչնչացրեց համիդետական զնդերի (ալայների) զգալի ուժեր: Այս կռիվներում զերի հանձնվեցին քրդական ջախջախված զնդերի չորս բեկ սպաներ, որոնց Անդրանիկը ուղարկեց զեներալ Չերնոգուբովի ճամբար: Այնուհետև խումբն անցնելով իրանա-թուրքական սահմանը՝ Շարապխանեով, նոյեմբերի 18-ին մտավ և զրավեց Սարայ քաղաքը: Նոյեմբերի 26-ին զեներալ Չերնոգուբովի հրամանով խումբը Սարայից տեղաշարժվեց դեպի Ասուրլի գյուղ: Մյուս օրը, նոյեմբերի 27-ին խումբը կռվի բռնվեց թուրքերի հետ Քերքեզ և Մերքոհին բնակավայրերի մոտ, որտեղից կարողացավ մարտով դուրս քշել քջնամուն: Առաջանալով Վանի ուղղությամբ, նոյեմբերի 29-ին Անդրանիկի խումբը թե՛ կռվի բռնվեց քջնամուն հետ Քարքալու գյուղի մոտ, որտեղ մինչև ուշ երեկո համառ դրմադրություն ցույց տվեց հարձակման անցած թուրք-քրդական զորամասերին, իսկ մութն ընկնելուն պես հետ շարժվեց դեպի Ասուրլի, որտեղ մնաց մինչև 1914թ. դեկտեմբերի 1-ը: Այստեղից Վան հասնելու համար, որտեղ նա սկզբնապես ուղարկվել էր, խմբին մնում էր կատարել ընդամենը երկու անցում: Սակայն, խմբի քիկունքում հակառակորդի զգալի ուժերի հայտնվելու պատճառով զեներալ Չերնոգուբովի հրամանով խումբը նորից հետ քաշվեց դեպի Սարայ:

1914թ. դեկտեմբերի 4-ին, զիշերը, 1-ին կամավորական խումբը Սարայից շտապ ուղարկվեց Պարսկաստան՝ Ռազի և Շարապխանե բնակավայրեր, այստեղ մարտնչող զեներալ Չերնոգուբովի Կովկասյան 4-րդ դիվիզիայի կոզակներին օգնություն ցույց տալու համար: Դեկտեմբերի 5-ի կռիվներում մարտով դուրս քշելով

Հալեպդադի լանջերին ամրացած թշնամուն, խումբը գրավեց Բելեդյանուք բնակավայրը: Բելեդյանուքում խումբը մնաց մինչև 1914թ. դեկտեմբերի 23-ը, երբ ստացվեց գորաջոկատի հրամանատար գեներալ Չերնոզուրովի ընդհանուր նահանջի մասին հրամանը, որը կապված էր ոչ միայն Մարիդամիշի շրջանում ծավալված մարտական գործողությունների, այլև Թավրիզի ուղղությամբ քուրքական մեծ ուժերի անսպասելի հայտնվելու հետ:

Դեկտեմբերի 24-ին հայկական 1-ին խումբը դուրս եկավ Բելեդյանուքից և Ջիրի ու Խոյի վրայով 1915թ. հունվարի 2-ին հասավ Ջուլֆա: Այդ նահանջի ժամանակ 1-ին կամավորական խումբը իրականացրեց Դիլմանի շրջանի ավելի քան 150 հազար հայ ազգաբնակչության ներգաղթը դեպի Կովկաս, որի շնորհիվ քուրքական կոտորածներից փրկվեցին հազարավոր հայ կյանքեր:

1915թ. հունվարի 11-ից կամավորական 1-ին խումբը կրկին կռիվների մեջ էր: Հունվարի 13-ին արշավելով Ջուլֆայից, խումբը Զարաթափի վրայով հասավ Մարաքանդ: Հաջորդ օրը նա Կարա-Ղաչով և Յամայի լեռնանցքով շարժվեց դեպի Մոֆյան, որտեղ այլ գորամասերի հետ այետք է մասնակցեց Մոֆյանի մեծ ճակատամարտին: Սակայն ճանապարհին խումբը հանդիպեց հորդացած զետերի հետևանքով սուռջացած արզելքներին և կարողացավ տեղ հասնել միայն հունվարի 15-ի երեկոյան, երբ ռուսական զենքի համար փառավոր և հաղթական՝ այդ ճակատամարտն արդեն ավարտվել էր քուրքերի լիակատար ջախջախմամբ և Թավրիզի ու Մարագուի շրջանների ազատագրմամբ:

Կովկասյան ռազմաճակատի մարտական գործողություններին պատերազմի առաջին իսկ օրերից ակտիվ մասնակցություն ունեցան նաև 2-րդ, 3-րդ և 4-րդ հայկական խմբերը:

Հայկական 2-րդ կամավորական խումբը, Դրոյի հրամանատարությամբ, որի կազմում կար 472 մարդ, որից 354-ը արևելահայ, իսկ 118-ը արև մտահայ, ռազմի դաշտ մեկնեց 1914թ. հոկտեմբերի 25-ին: Դուրս գալով Իգդիրից խումբը գործուղվեց գեներալ Նիկոլաևի գլխավորած բայազետյան ռուսական գորաջոկատ, որն

այդ ժամանակ գտնվում էր Կիզիլդիզում՝ Բայազետի մոտ: Առաջին ընդհարումը հակառակորդի հետ խումբը ունեցավ հոկտեմբերի 30-ին, Թափարիզի լեռնանցքի մոտ: Հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 1-ը, երկու օր տևած այդ ծանր մարտում, խումբը գրավեց Գյավրե-Շամիյե գյուղը: Նոյեմբերի 1-ի մարտում վիրավորվեց խմբի հրամանատար Դրոն, որին ժամանակավորապես փոխարինեց Արմեն Գարոն:

Հայկական 2-րդ խմբի Գյավրե-Շամիյեի հաջող մարտական գործողությունները համընկան Բասենի դաշտում՝ Մինդինդվանի և Հոսլիկի ուղղությամբ գործող ռուսական զորքերի ունեցած անհաջողությունների և դեպի Յուզվերան նրանց նահանջի հետ: Այդ իսկ սլաոճառով, նոյեմբերի սկզբին, զեներալ Նիկոլակի առաջ անցած զորաջոկատին հրամայվեց հետ քաշվել դեպի սահմանային լեռը: Հայկական 2-րդ խմբին կարգադրվեց բողոնել Գյավրե-Շամիյեն և Թափարիզի լեռնանցքով հետ քաշվել դեպի Կիզիլդիզ, այնտեղից շարժվել Ալաշկերտի Դարաքիլիսա, այստեղ գոծող զեներալ Արաքիևի զորաջոկատին միանալու համար: Գեներալ Արաքիևը հայկական 2-րդ խմբին հանձնարարեց կենտրոնանալ Դուքախ գյուղում՝ Կլիչ-Գյաղուկից հարավ, թուրքերի կողմից ուժգին կրակի տակ առնված դիրքերը պաշտպանելու համար: Ամրանալով այս դիրքերում, խումբն իրականացրեց պահակային և հետախուզական ծառայություն: Գեներալ Արաքիևի զորաջոկատի կազմում մինչև 1914թ. դեկտեմբերի 13-ը, հայկական 2-րդ կավորակի խումբը մասնակցեց 9 մարտերի: Նոյեմբերի 22-ին, 24-ին, 28-ին և դեկտեմբերի 7-ին՝ Դուքախի շրջանում և Տունտինում, դեկտեմբերի 10-ին՝ Դերիկի շրջանում, իսկ դեկտեմբերի 11-ին, 12-ին և 13-ին՝ Տունտինում⁶: Խումբը դիրքերը շտապաբարձր քողեց սարիղամիշյան դեպքերի հետ կապված, ռուսական բանակի ընդհանուր նահանջի մասին հրամանի համաձայն: Այդ նահանջի

⁶ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.16, ք.3:

ժամանակ, չափազանց ծանր պայմաններում, հայկական 2-րդ կամավորական խումբն ուղարկվեց հանգստի և համալրման: Մի շարք մարտերում հասնելով հաղթանակի, միայն 1914թ. հոկտեմբերի վերջից մինչև դեկտեմբերի 13-ը, 24 օր տևած կռիվներում, խումբն ունեցել էր մարդկային զոհեր, տվել էր 13 սպանված և 29 վիրավոր⁷:

Գեկտեմբերի 25-ին խումբը հասավ Իգդիր: Երևանում համալրվելով. խումբը մտավ Վարդանի գլխավորած ջոկատի մեջ, Իգդիրի վրայով անցավ հարավ նոր առաջադրանքներ կատարելու համար:

Հայկական 3-րդ կամավորական խումբը (հրամանատար Համազասպ), որը գործում էր Կադզվան-Բիքլիս ուղղությամբ, զեներալ Պրժևալկու զորախմբի կազմում ռազմի դաշտ մեկնեց 1914թ. նոյեմբերի 1-ին: Դուրս գալով Կադզվանից խումբը, որի կազմում կային 350 հետևակ և 70 հեծյալ կամավորներ, նոյեմբերի 4-ին հասավ Դալի-Բաբա, որտեղ միացավ Սարիղամիշի ջոկատի ձախ թևը պաշտպանող, զեներալ-մայոր Կուլեբյակինի գլխավորած Կարադերբենոյան ռուսական զորաջոկատին: Նոյեմբերի 5-ին խումբը տեղակայվեց Էնդեկ գյուղում և ստացավ հատուկ առաջադրանք՝ հսկել Թիք-դաղի լեռնային զանգվածներից հարավ տեղավորված Սարիղամիշյան ջոկատի ձախ թևը, զեներալ Կուլեբյակինի ջոկատի տեղամասում: Առաջին լուրջ ընդհարումը քուրքական զորքերի հետ հայկական 3-րդ կամավորական խումբն ունեցավ 1914թ. նոյեմբերի 6-ին, Ալազյազ գյուղի մոտ, որը և գրավվեց նրա կողմից: Չարգացնելով առաջխաղացումը, ջախջախելով քշնամու նշանակալից ուժերին, Համազասպի գլխավորած խումբը սեփական ուժերով գրավեց նաև Փիրհասան, Կասյանակ և Խոսրովերան գյուղերը: Սակայն խմբի հետագա առաջխաղացումը զեներալ Կուլեբյակինի կողմից կասեցվեց, նրա չափից դուրս

⁷ Տե՛ս նույն տեղում, գ.3, ք.8:

առաջխաղացման և բշնամու կողմից նրան ծուղակի մեջ վերցնելու վտանգից խուսափելու նպատակով: Ջորաջոկատի պետի հրամանով հայ կամավորները ետ քաշվեցին, գորաջոկատի մյուս գորամասերի հետ հարմար դիրքեր բռնեցին Փինաղուզ լեռնային զանգվածի մոտ, որն արդեն գրավվել էր Կարադերբենտյան գորաջոկատի մյուս գորամասերի կողմից: Նոյեմբերի 15-ին հայկական 3-րդ խումբը նորից հրամանով տեղակայվեց Ալազյազ գյուղում և ժամանակավորապես մտավ գեներալ Գուլիզայի գլխավորած 2-րդ պրաստունյան կոզակային բրիգադի կազմի մեջ, որի գորամասերը, համալրելով Կարադերբենտյան գորաջոկատի ուժերը, դիրք էին գրավել Էնդեկ-Թիք-դաղ-Փինաղուզ մարտական ուղղությամբ: Այդ պահից սկսած այս հատվածում սկսվեցին քեժ, երկարատև պաշտպանական մարտեր, և 3-րդ հայկական խումբը հաջողությամբ մասնակցեց այդ բոլոր կռիվներին, անընդմեջ իրականացնելով պահակային, հետախուզական ծառայություններ, միաժամանակ ետ մղելով բշնամու անդադար հարձակումները: Գեներալ Գուլիզայի վկայությամբ, «հայ կամավորականները հատկապես մեծ ծառայություն մատուցեցին գորաջոկատին 1914թ. դեկտեմբերի 2-ին, Սիզման, Փիրհասան և Կապլանակ գյուղերի շրջակայքի մանրակրկիտ հետախուզությունն իրականացնելով, որը սկսված ցրտերի, խորը ձյան և հաճախակի մառախուղների հետևանքով, խիստ դժվարացրել էր անկանխատեսելի բշնամուն հետևելը»³: Այսպես, դեկտեմբերի 6-ին, օգտվելով մառախուղից, մեծ քվով քուրքեր, ավազակ քրդերի հետ միասին, սպիտակ համագզեստներով, որը թույլ էր տալիս իրենց աննկատ մնալ, շարքից հանելով հայ կամավորներից կազմված պահակագործը, մտան Ալազյազ գյուղ և հանկարծակիի բերեցին այստեղ գտնվող գորաջոկատին, որի կազմում Համազասպի 3-րդ խմբի հայ կամավորականներից բացի, կար լեռնամոզողկյան զնդի ռուս կոզակների եր-

³ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.3, ք.14:

կու հարյուրյակ: Առաջացավ խուճապ, որի ժամանակ ներխուժած քուրքերը հասցրեցին իրագործել դաժան կոտորածներ, որի հետևանքով հայ կամավորներն ունեցան 30 սպանված և 40 վիրավոր, իսկ կոզակները 4 սպանված և 30 վիրավոր: Չորաջոկատը ստիպված եղավ բողոքել գյուղը: Ամրանալով Ալազյազի մոտակա բարձունքներում և կարգի բերելով իրենց, հայ կամավորները և կոզակները ուժեղ կրակ բաց արեցին թշնամու կողմից արդեն զրավված գյուղի վրա: Լուսաբացին, Ալազյազյան զորաջոկատը ուժով նորից ետ թշնց քուրքերին, ապա Թիք-դաղի կողմից օգնության հասած ռուս կոզակների հետ միասին, անցավ հարձակման և նորից ամբողջությամբ մաքրեց Ալազյազը և շրջակա տարածքը թշնամուց, հասցնելով նրան զգալի կորուստներ: Դրանից հետո, փոխհրաձգություններն Ալազյազի մոտ՝ քուրք-քրդական զորամասերի հետ շարունակվեցին ընդհուպ մինչև դեկտեմբերի 18-ը, սակայն ավելի քիչ ուժգնությամբ: 1914թ. դեկտեմբերի 19-ին, հայկական 3-րդ կամավորական խումբը Ալազյազից հրամանով տեղափոխվեց Բաշգյուղ և մտավ զեներալ Կուլեբյակիևի գլխավորած Բաշգյուղի ռուսական զորաջոկատի սռաջապահ զորքերի կազմը: Դեկտեմբերի 20-ին 3-րդ կամավորական խումբը գնդապետ Ռաժեի գլխավորած ջոկատի կազմում մասնակցեց քրդարմակ Բալիքլի գյուղում իրականացված մարտական գործողություններին, որը կազմակերպել էր Բաշգյուղի (Բաշքեյի) ռուսական զորաջոկատի պետ, զեներալ Կուլեբյակիևը՝ գյուղի բնակիչներին պատժելու համար, որոնք թշնամական գործողությունների էին դիմել ռուսական զորքերի նկատմամբ: Այդ արշավանքից հետո, դեկտեմբերի 25-ին, հայկական 3-րդ կամավորական խումբը դուրս բերվեց Բաշգյուղի զորաջոկատի կազմից, ապա վերադարձավ Կաղզվան՝ հանգստի և համալրման համար⁹:

Համազասպի և նրա գլխավորած 3-րդ հայկական կամավոր-

⁹ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.3, ք.15:

րական խմբի կամավորականների մարտերում դրսևորած բարձր ռազմական ոգու, կուռ կարգապահության և իրենց վրա դրված պարտքի կատարյալ գիտակցության մասին լավագույնս վկայված է Բաշզյուղի զորաջոկատի պետ, գեներալ-մայոր Կուլեբյակինի՝ Կովկասյան 1-ին բանակային կորպուսի հրամանատարին, 1914թ. դեկտեմբերի 25-ին ուղղած գեկուցագրում: «Այսօր հայկական 3-րդ խումբը ժամանակավորապես դուրս է գալիս ինձ վստահված ջոկատի կազմից Կաղվաճ՝ վերակազմավորման և իր կորուստը լրացնելու համար: Ծառայությանս և խղճիս պարտքով, ինձ պարտավոր եմ համարում վկայել այդ խմբի և հատկապես նրա հրամանատարի՝ Համազասպի, ամենաբարեխիղճ, անմնացորդ աշխատանքը:

Չնայած տարբեր վայրերից հավաքված, մեծամասնությամբ ռազմական գործին անժանոք, զինվորական կարգապահությանը չսովորած, կառավարման ոչ մի համակարգի չվարժված հայերի կառավարման դժվարություններին, պ-ն. Համազասպը, իր խմբի լավագույն մարդկանց օգնությամբ (ռուսահայ և քուրքահայ հպատակներից), կարողացավ իր ոչ մեծ ջոկատում, հաստատել երկաթյա կարգապահություն և կարգ ու կանոն: Բոլոր մարտերում, խմբի կամավորականները անվախ գնում էին դեպի անխուսափելի մահ և մեռնում էին ազնվաբար, ինչպես իսկական հերոսներ, լցված սիրո խորը զգացմամբ իրենց հայրենիքի նկատմամբ:

Մեր մյուս զորամասերին հավասար ներգրավվելով տարբեր մարտական առաջադրանքների մասնակցության, իմ բոլոր պահանջները նրանք կատարեցին ուրախությամբ: Երբ ես նրանց կանչեցի մեր զորամասերին օգնության գիշերային պահակային ծառայության համար, դա ևս նրանք կատարեցին ջանասիրությամբ և աննկուն: Ինչպես և մյուսները, Համազասպը անձամբ իմ աչքերում իրեն դրսևորեց որպես իր ջոկատի հիքրավի առաջնորդի, անսահման խիզախ, անձնուրաց և անհողողող, բարձր հրամանատարության ցուցումները լսող և բայրացական կատարող, մարտում անողոր և սրընթաց, ինչպես և պարտված թշնամու նկատմամբ

արդարամիտ և զքառատ պետի»։ Նկատի առնելով այս բոլորը, Կուլեբյակինը գտնում էր, որ Համազասպը արժանի է ամենաբարձր խրախուսման, և արտահայտում էր իր ուրախությունը նորից տեսնելու հայկական 3-րդ խումբը իր ջոկատի կազմում¹⁰։

Կովկասյան ռազմաճակատում ծավալված մարտական գործողություններում իրեն փայտն դրսևորեց նաև 4-րդ հայկական կամավորական խումբը, քաջարի և փորձառու մարտիկ Քեռու գլխավորությամբ։ Խումբը առաջին անգամ ռազմաճակատ մեկնեց 1914թ. նոյեմբերի 6-ին։ Գործելով Թուրքեստանյան 2-րդ կորպուսի կազմում, խումբը Սարիղամիշից՝ Կարաուրզանի ճանապարհով, հասավ Ադվերան, ապա Խոշաբ։ Նոյեմբերի 16-ին խումբը ունեցավ իր առաջին ընդհարումը հակառակորդի հետ Կարաբալիկ գյուղում և հաջող մարտական գործողություններից հետո անցնելով Չաքիր-բաբա լեռնաշղթան և Կողբի ճանապարհին, ճնշելով քշնամու գորամասերի դիմադրությունը, գրավեց Լյավսոք և Կիզիլքիլիսա գյուղերը։ Էնվեր փաշայի Սարիղամիշյան օպերացիայի սկզբին, 1914թ. դեկտեմբերի 22-ին և 23-ին, Էքրեկ և Նորաշեն գյուղերի մոտ տեղի ունեցած կռիվներից հետո, խումբը հրամանով ետ կանչվեց դեպի Կողբ՝ միանալու գեներալ Իստոմինի գլխավորած Օլթիի ռուսական ջոկատին։ Սակայն, այդ ժամանակ ռուսական զորքերն արդեն բողբլ էին Կողբը, և Քեռու խումբը ստիպված եղավ միայնակ, մեծ դժվարություններ հաղթահարելով, անցնելով բուրբերի կողմից գրավված լեռնային տեղանքները, դուրս գալ Նարիման, ապա, բաժանվելով երկու մարտական զորասյան, մեծ կորուստներ տալով վերադարձավ Սարիղամիշ։ Այստեղ, խումբը գործելով Սարիղամիշյան ռուսական զորաջոկատի աջ թևում հարձակման անցած բուրբերի դեմ, ակտիվ մասնակցություն ունեցավ Սարիղամիշի օպերացիայի, 1914թ. դեկտեմբերյան վերջին մարտերին, որոնք ավարտվեցին թուրքական զորքերի

¹⁰ Տե՛ս նույն տեղում, գ.5, ք.20։

(9-րդ և 10-րդ կորպուսներ) լիակատար ջախջախմամբ և ռուսական բանակի փայլուն հաղթանակով: Հրամանատարության՝ զորքերին ուղղված հրամանում, ի քիվս մյուս զորամասերի, հատուկ շնորհակալություն էր հայտնվում նաև 4-րդ հայկական կամավորական լամբին՝ նահանջի ժամանակ, կիրճի մոտ նրա կողմից թուրքական մի ամբողջ դիվիզիային մի քանի ժամ կանգնեցնելու համար: Մարիդամիշի օպերացիայի ավարտից հետո, Քեռու գլխավորած 4-րդ կամավորական խումբը, ինչպես մյուս հայկական կամավորական զորամասերը, խիստ հյուծված և թուլացած վերադարձավ Երևան՝ հանգստի ու համալրվելու: Պատերազմի միայն առաջին երկու ամիսների ընթացքում, 1914թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, հայկական չորս կամավորական լամբերը տվեցին 156 սպանված, 743 վիրավոր, հիվանդ և ցրտահար, կորցնելով ընդհանուր անձնակազմի 1/3-ը¹¹: Ավելի մեծ էր հակառակորդի կորուստը:

Հայ կամավորական լամբերի քիկունք վերադառնալուն պես, սկսիվ աշխատանքներ տարվեցին նրանց համալրման, քվաքանակի ավելացման, ինչպես նաև պատերազմի առաջին փուլում նկատված թերությունների և բացթողումների վերացման ուղղությամբ: Կամավորական լամբերի համալրումը և նրանց քվակազմի ավելացումը համապատասխանում էր նաև հայ ժողովրդի ազգային ձգտումներին: Ռազմական տեսակետից, այդ երկու ծանր ամիսներին, բացի զուտ մարտական ծառայություններից, հայկական կամավորական լամբերը իրենց հնարավորությունների չափով, մեծ օգնություն ցույց տվեցին նաև Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը, փրկելով նրանց թուրքերի անմարդկային հաշվեհարդարից՝ իրենց ռուսական կողմնորոշվածության համար: Արդեն նշվել է, որ հայկական 2-րդ կամավորական խումբը Դ-րոյի հրամանատարությամբ, նահանջելով Ալաշկերտի դաշտավանդից 1914թ. դեկտեմբերին, ապահովեց Ալաշկերտի մեծ քվով հայ ազ-

¹¹ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.3, ք.12:

գարնակչության նահանջը դեպի Արևելյան Հայաստան, իսկ 1-ին կամավորական խումբը, Անդրանիկի հրամանատարությամբ, նույն դեկտեմբեր ամսին դուրս բերեց հայ ազգաբնակչությունը Դիլմանի շրջանից:

Ռուսական հրամանատարությունը գոհ էր հայ կամավորական խմբերի մատուցած ծառայությունից, քանի որ դրանով հայ կամավորականները մասնակիորեն ազատում էին այդ անխուսափելի պարտականությունից ռուսական զորամասերին, որոնք այդ ժամանակ զբաղված էին բազմաթիվ խոշոր, արագ տեղաշարժեր պահանջող տակտիկական գործողություններով, ինչը պահանջում էր Կովկասյան ռազմաճակատի արագ փոփոխվող մարտական իրադրությունը:

Սակայն, հարկ է նշել որ, չնայած կամավորական խմբերի արևմտահայության նկատմամբ ցուցաբերած այդ աջակցությանը, այնուամենայնիվ, ոչ բոլոր արևմտահայերը հասցրեցին վերաբնակվել, իսկ որոշ գյուղեր էլ կամովի հրաժարվեցին միանալ գաղթականական շարժմանը և ենթարկվեցին թուրքական դաժան կոտորածների:

Կամավորական խմբերի թվակազմի մեծացման հետ միասին, Կովկասյան գործող բանակի հրամանատարությունը նպատակահարմար գտավ նաև հայկական բոլոր խմբերն այսուհետև կենտրոնացնել ռազմաճակատի միայն մեկ ուղղությունում, որտեղ գերակշռում էր հայ ազգաբնակչությունը, որպեսզի դրանով ավելի էական օգնություն ցույց տրվի տեղացի հայ բնակչությանը, և նրանք առավել մեծ ցանկությամբ ներգրավվեն օգնության ռուսական զորքերին՝ Արևմտյան Հայաստանում նրանց առաջխաղացման ժամանակ: Եվ այդպիսին, 1915թ. ապրիլ-մայիս ամիսներին, ճանաչվեց Վանի ուղղությունը: Վերոնշյալ ճակատում նկատառումներով, Կովկասի փոխարքա, կոմս Վորոնցով-Դաշկովը հավանություն տվեց Կովկասյան բանակի շտաբի՝ հայ ազգային-քաղաքական ներկայացուցիչների, մասնավորապես հայոց ազգային Բյուրոյի հետ համաձայնեցված, հայկական խմբերի

համալրման և վերակազմակերպման իրեն ներկայացված նոր նախագծին, և այն ներկայացրեց ռուսական բանակի Գերագույն գլխավոր հրամանատարի հաստատմանը: Ռուսական բանակի Գերագույն գլխավոր հրամանատար Նիկոլայ II-ի՝ 1915թ. ապրիլի 6-ին հաստատված նոր հաստիքային ցուցակի համաձայն, որը ստորագրել էր գլխավոր շտաբի պետ գեներալ Յանուշևսկիչը, հայկական յուրաքանչյուր կամավորական խումբ այսուհետև պետք է բաղկացած լիներ 984 մարտիկից, որից 42-ը ավագ ու կրտսեր սպա, 4-ը՝ ֆելդֆեբել, 5-ը՝ կապտենարմուս և 32 օժանդակ կազմից (գինագործներ, ֆելդշերներ, գրագիրներ և այլն): Խումբը կազմված էր 4 վաշտից, որից յուրաքանչյուրում պետք է լիներ 200 շարքային կամավորական, 10 ավագ ու կրտսեր սպա, 10 Լֆրեյտոր, 1 կապտենարմուս, 1 ֆելդֆեբել, 1 փողհար և 14 օժանդակ կազմ, ընդամենը 237 մարդ: Հստակ սահմանված էր նաև զինվորների, սպաների, գինագործների և այլ ծառայողների աշխատավարձը¹²:

Նույն թվականի մայիսին ռուսական բանակի Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով կազմավորվեցին ևս երեք նոր խմբեր՝ 5-րդը (հրամանատար՝ Վարդյան), 6-րդը (հրամանատար՝ կապիտան Հ.Ջանփոլադյան) և 7-րդը (հրամանատար՝ Հ.Արդուբյան): Այսպիսով, 1915թ. ամռանը հայկական կամավորական խմբերի թիվը հասավ յոթի, որոնցում ընդգրկված էր մոտ 7000 կամավորական:

Հայկական 5-րդ կամավորական խումբը կազմավորվեց Երևանում: Նրա ձևավորման աշխատանքները սկսվել էին դեռևս 1914թ. դեկտեմբերից: Սակայն, Կովկասյան բանակի հրետանային վարչությունում հրացաններ չլինելու պատճառով, խումբը չսպառազինվեց և չկարողացավ մասնակցել պատերազմի առաջին շրջանի մարտական գործողություններին:

¹² Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.2, գ.30, ք.17-18, նաև Ռ ԿՊՌՊԱ, ֆ.521, ց.5, գ.178, ք.130-131:

6-րդ կամավորական խումբը (կոչվել է նաև հնչակյան 6-րդ խումբ) կազմավորվեց Կարակուրտում՝ գեներալ Բարաթովի գլխավորած ռուսական զորաջոկատի կազմում: Նրա առաջին հրամանատարը ռուսական բանակի սպա, կապիտան Հ.Ջանփոլալյանն էր, իսկ քիչ ուշ նրան փոխարինեց պորուչիկ Գ.Ավչարյանը, որն էլ զոհվեց 1915թ. ամռանը, Շարյան գետի ափին ծավալված ռազմական զործողությունների ժամանակ: Ավչարյանին փոխարինեց Հայկ Բժշկյանը (Գայ), սպա Պանդուխտը:

7-րդ հայկական խումբը կազմավորվեց 1915թ. աշնանը Երևանում և հանդիսանում էր հայկական խմբերի պահեստային ուժը¹³:

Ինչպես ասվել է, արդեն 1915թ. սկզբից, ռուսական հրամանատարությունը որոշել էր բոլոր հայկական կամավորական խմբերը այսուհետև կենտրոնացնել Վանի ուղղությամբ: Վանի գրավումը դարձել էր ռուսական բանակի հրամանատարության առաջնային խնդիրը: Այդ իսկ նպատակով, Կովկասյան բանակի հրամանատարի՝ 1915թ. ապրիլի 24-ի հրամանով, ռուսական երեք խոշոր զորաջոկատներին հրահանգվեց արշավել Վանի ուղղությամբ՝ գրավել Վանը և Վանա լիճը: Այսպես, Վանի ուղղությամբ զործող և ամենախոշոր՝ Ադրբեջանյան ռուսական զորաջոկատին (հրամանատար գեներալ-լեյտենանտ Չերնոզուբով) կարգադրեց ձեռնարկել Խալիլ փաշայի բուրբակյան ջոկատի հետապնդումը, որը, 1915թ. ապրիլին խոշոր պարտություն կրելով Գիլմանի ճակատամարտում, նահանջում էր Վանի ուղղությամբ: Ալաշկերտի զորաջոկատին (հրամանատար գեներալ-մայոր Վորոպայնով) հրամայված էր շարժվել դեպի Մալազկերտ-Կոստ ուղղությամբ և գրավել Վանա լիճը արևմուտքից: Բայազետի ռուսական զորաջոկատին (հրամանատար գեներալ-մայոր Նիկոլաև) հրամայվեց Բայազետից շարժվել դեպի Չինգիլի լեռնանցք և գրավել Վանը արևելքից:

¹³ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.3, ք.19:

Այս գորաջոկատի կազմում դեպի Վան էին առաջանում նաև հայ կամավորական խմբերը:

1915թ. ապրիլի 15-ին Արարատյան գորաջոկատը (2-րդ, 3-րդ և 4-րդ խմբեր), որի կազմում կար 2300 հետևակ և 500 հեծյալ կամավորական, Վարդանի ընդհանուր հրամանատարությամբ դուրս գալով Երևանից ուղևորվեց դեպի Իգդիր՝ Չինգիլի լեռնանցքի ուղղությամբ: Ապրիլի 21-ին հասնելով Կիզիլդիզ, Արարատյան գորաջոկատը ներգրավվեց զեներալ Նիկոլաևի գլխավորած Բայազետի ռուսական գորաջոկատի կազմում: Այդ գորաջոկատին Կովկասյան բանակի հրամանատարի՝ ապրիլի 24-ի հրամանով կարգադրված էր անցնել բուրքերի գրաված Տափաթիզի կիրճը (Բայազետից դեպի հարավ) և, ճեղքելով բուրքական գորքերի դիմադրությունը, բացել Վան տանող ճանապարհը: Այս խնդիրը իրականացնելու նպատակով, դեռևս ապրիլի 23-ի հրամանի համաձայն, Բայազետի գորաջոկատը բաժանվեց 3 գորաշարասյան: Չորաջոկատի աջ շարասյանը, որի հիմքը կազմում էր հայկական 2-րդ կամավորական խումբը՝ 1022 մարդ, որոնցից 678-ը արևելահայեր էին, իսկ 344-ը՝ արևմտահայեր, Գրոյի գլխավորությամբ, հանձնարարվեց եղած ուժերով ապրիլի 24-ին դուրս գալ Չուրավա գյուղից և շարժվել Սարինգյոլ լճի ուղղությամբ, ապա ետ շարտել հակառակորդին Սարինգյոլ և Դասինգյոլ լճերի մոտից: Առաջին ընդհարումը հակառակորդի հետ 2-րդ խումբը ունեցավ 1915թ. ապրիլի 24-ին՝ Քյալասարում, երկրորդը՝ Դասինգյոլում ապրիլի 25-ին, երրորդը՝ ապրիլի 28-ին՝ Բայազետասոյի մոտ¹⁴:

Չորաջոկատի միջին շարասյանը՝ Վարդանի ընդհանուր հրամանատարությամբ, հանձնարարված էր Արարատյան գորաջոկատի 3-րդ հայկական խմբի (հրամանատար՝ Համազասպ) և ռուսական մյուս գորամասերի հետ միասին, միացյալ ուժերով ապրիլի 24-ին շարժվել Բեյլավսոր գյուղից և գրավել Գյավրեշամիս

¹⁴ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.16, ք.3:

գյուղը, ոչնչացնել և այնտեղից դուրս բշել քշնամուն: Չորաջոկատի ընդհանուր պահեստագորին, որը կազմում էր Արարատյան զորաջոկատի հայկական 4-րդ խումբը՝ Ջեռու հրամանատարությամբ, հրահանգված էր դուրս գալ Բելյավտորից և հետևել միջին զորաշարասյանը և անհրաժեշտության դեպքում օգնության հասնել նրան: Վերուհիշյալ ուղղություններով հայկական խմբերի՝ Վանին մոտենալու ժամանակ և կռիվների քեժ պահին, Վան քաղաքից հասան լուրեր քուրքերի դեմ Վանի հայ բնակչության ապստամբության մասին: Ապստամբությունը բռնկվել էր 1915թ. ապրիլի 7-ին, դեռևս մինչև Երևանից Արարատյան զորաջոկատի դուրս գալը և աստիճանաբար զարգանալով, ապրիլի վերջին, հասել էր իր գագաթնակետին: «Վանում բռնկված հայ բնակչության ապստամբության հետևանքով, – գրում էր իր հուշերում դեպքերի անմիջական ակամատես զեներալ Կուլեբյակինը, – հայ կամավորականների տրամադրությունները դարձել էին լարված: Նրանք բոլորը անհամբերությամբ սպասում էին լուսարացին, երբ այետք է սկսվեին քաղաքի համար մղվող առաջին մարտերը: Բոլորի հայացքները, մտքերը և զգացմունքները ուղղված էին դեպի Վան: Վանի գրավումը դարձել էր հայ կամավորականների պայծառ երազանքը: Ոչ մի դժվարություն չէր կարող խոչընդոտել առաջ շարժվելու նրանց պոռթկումը, որը ընդգրկել էր հայ կամավորների»¹⁵:

1915թ. ապրիլի 24-ին սկսվեց Բայազետի զորաջոկատի ընդհանուր հարձակումը ամբողջ ճակատով: Արարատյան ջոկատը ունեցավ առաջին մարտական ընդհարումը թուրքական խմբերի և քրդական զորամասերի հետ, որի արդյունքում հայկական 3-րդ կամավորական խումբը, Վանի զորաջոկատի միջին զորասյան կազմում, համառ և կատաղի կռիվներից հետո գրավեց Գյալրեշամիյե գյուղը: Ապրիլի 27-ին, Արարատյան զորաջոկատի հայկա-

¹⁵ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 1, գ. 6, ք. 1-8:

կան երեք կամավորական խմբերի միացյալ հեծելազորը, 4-րդ խմբի հրամանատարի տեղակալ Մ.Արզումանովի հրամանատարությամբ, կռվով գրավեց Շարայխանն, Բայազետադա և Նուշիրադա, իսկ հաջորդ օրը՝ ապրիլի 28-ին, նաև Դավթիշ գյուղերը և ետ շարսեց թշնամուն այս դիրքերից: Այնուհետև, զարգացնելով առաջխաղացումը դեպի Բերկրիի դաշտավայր, որը հանդիսանում էր կարևոր ստրատեգիական կայան Վան տանող ճանապարհին, 3-րդ կամավորական խումբը ապրիլի 29-ին քուրքական գործերից գրավեց նաև Գենդուրմա գյուղը, իսկ 2-րդ և 4-րդ հայկական խմբերի միացյալ ուժերը ապրիլի 30-ին ազատագրեցին Գյումիշ և Հավիդան բնակավայրերը, որի շնորհիվ ճանապարհ բացվեց դեպի Բերկրի: Նույն օրը, ապրիլի 30-ին, շարունակելով առաջխաղացումը, հայկական 2-րդ, 3-րդ, 4-րդ կամավորական խմբերը շարժվեցին Բերկրիի դաշտ և ջախջախելով քրդական՝ համիդեական ճանակալից ուժերը, գրավեցին Բերկրի-Կալան, որը կամավորականների համար դարձավ վերջին կայանը Վան արշավելուց առաջ:

1915թ. մայիսի 1-ին, գեներալ Նիկոլաևը հրահանգեց Վարդանին անմիջապես «շարժվել դեպի Վան, այնտեղ պաշարված հայերին ազատագրելու համար»: Նույն օրը, կատարելով գորաջոկատի հրամանատարի հրահանգը, Արարատյան գորաջոկատը՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ կամավորական խմբերով, սպավինելով միայն սեփական ուժերին (Բայազետի գորաջոկատի մնացած զորամասերը ուղարկվել էին գեներալ Աբացինի տրամադրության տակ Արճեշը գրավելու համար, որին համառ դիմադրություն էին ցույց տալիս Ջելան-Դարասիի զինված քրդերը), առանց հրանոթի և զնդացրի, շարժվեց առաջ՝ Վանի ուղղությամբ և քրդերի հետ ունեցած երկարատև, քեժ մարտերից հետո գրավեց Վանի մոտ գտնվող Քորսոր, Շևեքյար, Դերկաշեն, Փանգ և մի շարք այլ գյուղեր: Հաջորդ օրը՝ մայիսի 2-ին, Արարատյան գորաջոկատը, ընդունելով համապատասխան մարտական կարգ (2-րդ խումբը ձախ քևում, 4-րդը կենտրոնում, իսկ 3-րդը՝ աջ քևում), շարունակեց իր առաջխաղացումը և արյունահեղ կռիվներից հետո հասավ մինչև Թի-

մարի շրջան: Այստեղ հայկական 3-րդ խումբը քրդերի հետ ունեցած քեթև կռիվներից հետո գրավեց Աստվածածին գյուղը և շարժվեց ավելի խորը՝ դեպի հարավ: Միևնույն ժամանակ 4-րդ հայկական խումբը թշնամու հետ ունեցած մի քանի քեթև ընդհարումներից հետո շարժվեց Արթավե և Պողոս գյուղերի ուղղությամբ և դուրս եկավ Արչակ լճի արևմտյան հատված, Քիզիլջա գյուղի մոտ: Հայկական 2-րդ խումբը նույն օրը երեկոյան գրավեց Հասփիշատ գյուղը (Վանա լճի հյուսիսում): Քրդերը, որոնք դիրքեր էին բռնել Ջանիկ-Քելբայրիկ-Ածբուլաղ գծի վրա, չկարողանալով լուրջ դիմադրություն ցույց տալ հայ կամավորներին, նահանջեցին և դիրքեր գրավեցին Խոշարում: Թշնամու այս ճակատի դիմադրությունը ճեղքվեց հայկական 4-րդ կամավորական խմբի արագ առաջխաղացմամբ: Հայ կամավորները, ներխուժելով հակառակորդի ուժերի կենտրոն, փախուստի մատնեցին թշնամուն: Խոշարի գրավմամբ որոշվեց նաև Վանի ճակատագիրը: 1915թ. մայիսի 3-ից 4-ը Վանի շրջակայքում քրդերի հետ տեղի ունեցան մի շարք կարճատև, բայց արյունահեղ մարտեր, որից հետո, Արարատյան գորաջոկատի 2-րդ և 4-րդ հայկական կամավորական խմբերի հեծյալ գորամասերը Խեչոյի ընդհանուր հրամանատարությամբ մտնեցան Վանի մատույցներին և մայիսի 5-ի երեկոյան առաջիններից մտան Վան: Գեներալ Նիկոլակի՝ Բայազետի գորաջոկատի մյուս գորամասերի հանդիսավոր մուտքը Վան քաղաք տեղի ունեցավ մայիսի 6-ին:

Այսպիսով, Վարդանի գլխավորած Արարատյան գորաջոկատը կրելով աննկարագրելի դժվարություններ և կորուստներ, միաժամանակ ցուցաբերելով քաջության և հերոսության բազում օրինակներ, գեներալ Նիկոլակի գլխավորած Բայազետի ռուսական գորաջոկատի առաջագործի կազմում առաջինը մտավ և գրավեց Վանը: Քաղաք մտած հայ կամավորականներին մեծ ցնծությամբ դիմավորեց Վանի հերոսական հայ բնակչությունը:

Այնուհետև հայ կամավորականները ակտիվ մասնակցություն ունեցան Վանա լճի հարակից շրջանների՝ Շատախի, Ոստանի և այլ բնակավայրերի գրավմանը և ազատագրմանը:

Վանի գրավմանն ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Անդրանիկի 1-ին հայկական խումբը: Դեռևս 1915թ. փետրվարի 17-ին Անդրանիկի խումբը հրաման ստացավ Մարանդայից տեղաշարժվել դեպի Դիզադիզ: Այստեղ խումբը փետրվարի 19-ին գեներալ Նազարբեկյանի զորաջոկատի կազմում մասնակցեց Ադի լեռան՝ Դուզ-դադի (Խոյի մոտ) համառ մարտերին: Դրանից հետո խումբը որոշ ժամանակ հակառակորդի հետ մարտական ընդհարումներ չունեցավ և սահմանափակվեց միայն պահակազորային և հետախուզական ծառայություններ իրականացնելով: Տեղանքի, բուրբերենի և բրյերենի՝ կամավորականների իմացության և տեղաբնիկ բնակչության հետ շփվելու շնորհիվ կարևոր տեղեկություններ ձեռք բերվեցին, որոնք անհասանելի էին սովորական ռազմական հետախուզությանը: Փետրվարի 27-ին Անդրանիկի խումբը տեղաշարժվեց դեպի Խոյ և տեղակայվեց Սեխյավաք գյուղում, որտեղ մնաց մինչև մարտի 14-ը, իսկ հետո վերադարձավ Դիզադիզ, որտեղից էլ ապրիլի 7-ին տեղաշարժվեց դեպի Թաքիրալի գյուղ և, ճամբար դնելով այստեղ, իրականացնում էր Սլավ, Շաբեկ, Չարսուլու և Աշնակ գյուղերը շրջապատող բարձունքների հետախուզումը: 1915թ. ապրիլի 15-ին Անդրանիկի խումբը գեներալ Չերնոգուբովից հրաման է ստանում տեղաշարժվել դեպի Դիլման, որտեղ հարավից հարձակվող Խալիլ փաշայի թուրքական զորքերի կողմից շրջապատման մեջ էր վերցվել գեներալ Նիկոլակի ռուսական զորաջոկատը: Այդ նույն գիշեր Անդրանիկի խումբը, դուրս գալով Շաքիրալի գյուղից, շարժվեց Դիլմանի ուղղությամբ և մյուս օրը հասավ Յարբուզադադ: Ապրիլի 17-ին խումբը դիրքեր գրավեց Խամզաքենո գյուղի մոտ, 18-ին մտավ կռվի մեջ: Դիլմանի պատմական ճակատամարտում, որտեղ փայլուն դրսևորեց իրեն նաև Անդրանիկի 1-ին հայկական խումբը, սկզբում հաջողությունը բուրբերի կողմն էր, ռուսական զորաջոկատը սկսեց նահանջել, մեծ խուճապ առաջացավ քիկունքում, որը ստիպեց գեներալ Չերնոգուբովին ձեռնարկել բոլոր միջոցները ստեղծված ծայրահեղ վտանգավոր իրավիճակից դուրս գալու համար: Մարտի դաշտ

ժամանեց Կովկասյան 2-րդ հրաձգային բրիգադի հրամանատար գեներալ Թ.Նազարբեկյանը, որն իր կարգադրություններով կարգի բերեց և նորից մարտի մեջ մտցրեց խուճապի մատնված ու կառավարումը կորցրած ռուսական զորաջոկատին: Մարտը շարունակվեց կրկնակի ուժգնությամբ: Գեղապետ Նսուրյանի պոլտավյան զնդի կողակները հեծելագորային հարձակումներ իրագործեցին հակառակորդի դեմ՝ քեից ու քիկունքից, իսկ մնացած հեծելագորն անցավ հարձակման կենտրոնից: Գեներալ Չերնոզուբովի վկայությամբ. «Այդ ականավոր ճակատամարտում Անդրանիկի հայկական խումբը ցուցաբերեց աննկարագրելի քաջություն և անմնացորդ պոռթկում: Հակառակորդի թվական գերազանցությունը մեկուսացվեց հանդիպակաց սրբնթաց հարձակմամբ և հեծելագորի քիկունքային հարվածներով, դրա արդյունքում Խալիլ բեյը գլխովին ջախջախվեց և արագ նահանջեց»: Այդ ճակատամարտում հայկական 1-ին կամավորական խումբը սովեց 21 սպանված և 55 վիրավոր (այդ թվում՝ 2 վաշտի հրամանատար)¹⁶:

Դիվանի արյունահեղ ճակատամարտում ռուսական զորքերը ունեցան մեծ գոհեր, սակայն ջախջախված հակառակորդի կորուստներն անհամեմատ ավելի մեծ էին, թշնամին նահանջեց՝ թողնելով ռազմադաշտում բազմաթիվ դիակներ, զենք ու զինամթերք: Շարունակելով նահանջող հակառակորդի հետապնդումը՝ Անդրանիկի խումբը, անցնելով Փերատղի, Սաքաբյան և Բալասար գյուղերը, ապրիլի 19-ին մտավ Շայթանավան: Ապրիլի 20-ին անցնելով Դիվանի վրայով խումբը հասավ Մուխանջիկ, որտեղ իրականացրեց տեղանքի, ապա Բուրուշքրանի և նրա շրջակայքի մանրակրկիտ հետախուզությունը: Ապրիլի 21-ին, Սանամեռիկի վրայով խումբը հասավ Բարդան գյուղ, որտեղ մնաց մինչև 1915թ. մայիսի 1-ը: Մայիսի 3-ին նորից առաջ շարժվելով և ճանապարհին՝ լեռների մոտ, ջախջախելով քրդական զորամասերին, հայկական

¹⁶ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.3, ք.1-31:

առաջին խմբի կամավորները մայիսի 4-ին գրավեցին Խանասորը: Հաջորդ օրը, մայիսի 5-ին, Անդրանիկի խումբը գնդապետ Նալգիկի կողակների հետ միասին կռվով գրավեց Բաշ-Կալան: Գրանից հետո Անդրանիկի խումբը մտավ Վան: Անդրանիկի կողմից Խալիլ փաշայի զորքերին հասցրած ծանր հարվածները խափանեցին Վան քաղաքի վրա գրոհող Ջեդեթ բեյի զորամասին օգնություն հասցնելը: Եթե Անդրանիկի խումբը «չի կտրեր Խալիլ փաշայի առաջը և չի վերցնեք Բաշկալեն, Խալիլի նպատակն էր Վան երթալ ու կոտորել Վանը»¹⁷:

Վանի ազատագրումից հետո, 1915թ. մայիսի կեսերից, հայկական բոլոր չորս՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կամավորական խմբերը ժամանակավորապես միավորվեցին, նրանք մտան գեներալ Տրուխինի գլխավորած Վանի ռուսական հատուկ զորաջոկատի կազմը (գեներալ Տրուխինը այդ սլաշտոնում փոխարինեց գեներալ Չերնոզուբովին, որը, թողնելով Վանի զորաջոկատը, մեկնեց Խոյ, որտեղ տեղակայված էր 4-րդ Կովկասյան կորպուսի շտաբը): Նույն քվականի մայիս-հուլիս ամիսներին, հայ կամավորական խմբերը, ռուսական զորամասերի հետ միասին, մասնակցեցին ռազմական գործողություններին և համառ մարտեր մղեցին հակառակորդի՝ թուրք-թրդական ուժերի դեմ, Վանա լճի հարավային շրջաններում: Հայ կամավորականները, պարտության մատնելով թշնամուն, նրանցից ազատագրեցին Ջեյվա, Թախաման, Ախթամար, Սուրբ Հակոբ, Վարկունիս, Թուխ-Թաքվան և Սորփի հայկական գյուղերը ու բնակավայրերը: Սորփի գրավման կապակցությամբ, գեներալ Տրուխինի՝ զորաջոկատին ուղղված հրամանում ասված էր. «Հուլիսի 6-ից 7-ը տևած երկօրյա կռիվներում, ինձ վստահված քաջարի զորքերը դուրս քշեցին թշնամուն նրա գրադեցրած դիրքերից: Հաղթանակը գլխավորապես հետևանք էր մեր հետևազորի վարած

¹⁷ Լ.Լյուկեճյան, Չորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը, 1914-1917թթ., էջ 21:

ուժգին կրակային մարտի, որը 2/3-ով կազմված էր հայ կամավորականներից, և գրեթե երկու օր է աչք չէր փակել: Թշնամին ջախջախվեց մեր հրետանու դիպուկ կրակոցից»: Միայն Ջեյվայի գրավման ժամանակ քուրքերը տվեցին 300 սպանված և 100 վիրավոր, հայ կամավորների կորուստն էր 14 սպանված և 23 վիրավոր¹⁸:

Վանի ազատագրումից անմիջապես հետո հայկական 2-րդ խումբը Վանից անցավ Շատախ, որն էլ գրավեց մայիսի 12-ին: Նախքան Շատախը գրավելը, քշնամու հետ մի քանի ընդհարումներ ունեցավ Գիրանի դաշտում: Մայիսի 16-ից 20-ը Սոքանց, Գյավաշ, Կառկառ և Առինջ գյուղերի մոտ տեղի ունեցած կռիվներից հետո, խումբն այնուհետև գրավեց Մոկսը, քաղաք առաջինը մուտք գործեց Մեսրոպի գլխավորած հայկական վաշտը: Մայիսի 22-25-ը ընկած ժամանակահատվածում քշնամին մեծ ուժերով փորձեց շրջանցել խմբին քիկունքից, նախապես ունենալով կարել Շատախի և Ախթամարի ճանապարհը, սակայն ջարդվեց և ետ շարտվեց: 1915թ. հունիսի 2-ին հայ կամավորական խմբերը գրավեցին նաև Ազատկերտի շրջանը: Ազատկերտի հայ բնակչությունը՝ մոտ 4000 մարդ, զարթեց սկզբում Մոկս, սպալ՝ Վան: 1915թ. հունիսի կեսերին, Դրոն հիսունի հասնող հեծյալներ թողնելով Գիրանի դաշտում, այնուհետև մեկ հետևակ ջոկատ Շատախում և մի վաշտ էլ Մոկսում, 3/4 վաշտով, այսինքն հինգ ջոկատով և մեկ հեծյալ խմբով միանալով 1-ին, 3-րդ և 4-րդ հայկական խմբերին, մի շարք կատաղի կռիվներ տվեց Սորփի և Դատվանի շրջաններում: Այնուհետև, շաբաթի հրամանով հայկական 2-րդ խումբը շտապ վերադարձավ Բերկրի-Կալա, այստեղ մի քանի օր կարողացավ դիմադրել քշնամու գրոհները, որը հարձակումներ էր գործում Արճնշի կողմից: Այդ ժամանակ 2-րդ հայկական խումբն ապահովեց նաև Բերկրիի ճանապարհով Արևելյան Հայաստան անցնող

¹⁸ ՏԵՆ ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.1, ք.1-18:

200.000 հայ գաղթականության անվտանգությունը: Բերկրիից նահանջելով, մեկ օր անց Դրոն՝ հեծյալ մի խմբով կրկին վերադարձավ Բերկրի-կուրի կամուրջը և այստեղից Արևելյան Հայաստան հասցրեց մեծ քանակությամբ հայ որբերի: Միայն 1915թ. ապրիլից մինչև հուլիս ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած կռիվներում հայկական 2-րդ խումբը սպեց 39 սպանված և 76 վիրավոր¹⁹:

Վանա լճի հարավային շրջաններն ազատագրելուց հետո հայ կամավորական խմբերն անցան դեպի Մուշ և Բիրիխ, որտեղ ակտիվ մասնակցություն ունեցան այդ շրջանում ծավալված ռազմական գործողություններին՝ Մուշի և Բիրիխի համար մղված կռիվներին և նրանց ազատագրմանը: Այս կռիվներում հատկապես աչքի ընկան 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ հայկական խմբերը: Սակայն, 1915թ. հուլիսի 16-ին, մարտական գործողությունների քեժ պահին, ելնելով տակտիկական նկատառումներից, Կովկասյան բանակի հրամանատարությունը ռուսական բոլոր զորքերին և զորաջոկատներին հրամայեց բողոքել նախկինում գրավված տարածքները, ինչպես նաև Վանը և նահանջել: Ռուսական զորքերը, լքելով ճակատը և Արևմտյան Հայաստանի գրավված տարածքները, նահանջեցին դեպի Արևելյան Հայաստան: Նահանջող զորքերի մեջ էին նաև հայկական կամավորական խմբերը: Համատարած նահանջի ալիքները 1915թ. հուլիսին հայկական 1-ին և 2-րդ խմբերին բերեցին Իգդիր, իսկ 3-րդ և 4-րդ խմբերին՝ Դիլման:

Ռուսական զորքերի ընդհանուր նահանջը, որը ծանր անդրադարձավ Արևմտյան Հայաստանի, մասնավորապես Վանի շրջանի բնակչության վրա, ճակատագրական նշանակություն ունեցավ նաև հայկական կամավորական խմբերի համար: Վարդանի գլխավորած Արարատյան զորաջոկատը, որը վայրում ավարտեց Վանի օպերացիան և հերոսական հաղթանակներ ունեցավ

¹⁹ Տե՛ս նույն տեղում, գ.16, ք.3-5:

մայիսի 10-ից հուլիսի 19-ը Վան-Բիթլիս ուղղությամբ շուրջ երկու ամիս սևած մարտական գործողություններում՝ վերջնականապես կազմալուծվեց:

Արյունահեղ կռիվների և մեծ գոհողությունների գնով ձեռք բերված մարտական հաղթանակների կորստից հուսալքված ու ճնշված հայ կամավորականները՝ հատկապես արևմտահայերը, քողնելով գինվորական ծառայությունը, սկսեցին ցրվել: Կամավորներից խմբերը վերադարձնելու՝ ռուսական հրամանատարության ու հայոց ազգային Բյուրոյի ջանքերը արդյունք չավեցին: Կամավորների շարքերը շարունակեցին անդադար նոսրանալ և 1915թ. օգոստոսին, հայկական բոլոր չորս խմբերում, եղած մոտ 4000 կամավորականներից մնացել էր ընդամենը 1200 մարդ²⁰: Չնայած դրան, ազգային Բյուրոն, որը ևս լսիստ հիասթափված ու հուսալքված էր ռուսական հրամանատարության անսպասելի գործելակերպից, որոշեց անկախ ամեն քանից, վերականգնել հայկական կամավորական խմբերը և շարունակել Թուրքիայի դեմ պայքարի գործը: Ազգային Բյուրոյի այդ որոշմանը մեծապես նպաստեցին նաև նոր ձևավորված 6-րդ և 7-րդ հայկական կամավորական խմբերի առկայությունը, որոնք արդեն պատրաստ էին ռազմաճակատ մեկնելու: Համալրվեց նաև 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կամավորական խմբերի անձնակազմը:

Հայկական 3-րդ և 4-րդ կամավորական խմբերը համալրվեցին Դիլմանում: Նրանց համալրման համար Երևանից՝ 7-րդ կամավորական խմբի (հրամանատար Հ.Արդուրյան) անձնակազմից Դիլման ուղարկվեց 750 կամավորական: Անդրանիկի 1-ին խումբը համալրվեց Երևանում, ապա՝ Իզդիբում: Հայկական խմբերը նոր կամավորականներով համալրելու, ինչպես նաև հին կամավորականներին իրենց խմբերը վերադարձնելու գործում կարևոր նշանակություն ունեցավ Անդրանիկի՝ 1915թ. սեպտեմբերի 4-ի կոչը՝ ուղղված կամավորներին և ժողովրդին: «Երչ եմ անում Ձեզ

²⁰ Տե՛ս նույն աեղում, գ.8, ք.5-44:

անմիջապես ժամանել մեր գորախումբ՝ Երևան, – ասված էր կոչում, – իմ բարեկամներ, տասը ամսվա ընթացքում մենք տանջվեցինք սարերում և լեռնանցքներում, կրեցինք ամեն անասկ գրկանք, անցանք հսկայական տարածքներ, հաճախ դիմանալով սովին և կոշիկի պակասությանը: Բայց այդ ամենը մեզ չպետք է հուսաբափի: Հասել էրոպեն, երբ մենք պետք է կրկին ցուցաբերենք քաջություն և խիզախություն և մեր կողմից սիրած գործը, մեզ կշարժի վրեժխնդրության և ազատության կարոտ մեր Հայրենիք: Գունդը հնարավորություն ունի նոր կամավորներ ընդունելու, մասնավորապես... ձիավորների: Եկողները պիտի լինեն քաջառողջ, չարքաշ կյանքի և գրկանքների ընդունակ: Գունդը շնորհակալությամբ կընդունի նվերներ, հատկապես մեծ կարիք կա սպիտակեղենի, գուլխայի, ծխախոտի, գալեստի, պարսիմատի, շաքարի՝ առհասարակ չոր ուտելիղենի: Նվերները կարելի է ուղարկել ազգային Բյուրոյի կամ Կարգադրիչ Մարմնի միջոցով: Ժամանակը կարճ է, պետք է շտապել»²¹:

1915թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին հայկական կամավորական խմբերը վերակազմավորվեցին, համալրվեցին և վերականգնեցին իրենց նախկին մարտական կազմը: Նույն թվականի օգոստոսի 3-ի, Կովկասյան 4-րդ կորսյուսի հրամանատարի №61 հրամանով, հայկական կամավորական խմբերը միավորվեցին և մտցվեցին զեներալ Յուրկեևիչի հրամանատարությամբ գործող Կովկասյան 1-ին աշխարհագորային բրիգադի կազմի մեջ: Այդ հրահանգը լիովին համընկնում էր հայոց ազգային Բյուրոյի ցանկությանը, որն Արարատյան գորաջոկատի կազմալուծումից հետո ձգտում էր հայկական խմբերը պահել միասնության մեջ: Դրանով մեծանում էր հայկական խմբերի մարտունակությունը, և ռազմաճակատում նրանք հնարավորություն էին ստանում իրագործել ավելի խոշոր մարտական խնդիրներ: Չնայած վերոհիշյալ հրամանին և հայկական խմբերին միասնական ղեկավարության ներքո

²¹ Ռ. ԿՊՌՊԱ, ֆ.521, ց.5, գ.413, ք.161-162:

պահելու ուղղությամբ 1-ին աշխարհագորային բրիգադի շտաբի պետ, գնդապետ Պ.Բեժանբեկի ձեռնարկած մեծ ջանքերին, ճակատ մեկնելու և մարտական գործողությունների վերսկսվելուն պես, հայկական խմբերը նախկինի պես նորից ցրվեցին՝ 4-րդ կորպուսի և Ադրբեջանյան զորաջոկատի զբաղեցրած ճակատներում, ու կրկին կորցրեցին կապը միմյանց միջև: Գեներալ Կուլեբյակինի կարծիքով, «հայկական կամավորական խմբերի մասնատվելուն մեծապես նպաստում էր Ադրբեջանյան զորաջոկատի հրամանատար գեներալ-լեյտենանտ Չերնոգուբովը, որը բարձր գնահատելով հայ կամավորականների մատուցած ծառայությունները, մշտապես միջնորդում էր հրամանատարությանը նրանց թողնել իրեն վստահված զորաջոկատի կազմում»²²:

1915թ. աշնանը և 1916թ. ձմռան ամիսներին ռուսական Կովկասյան բանակը նարից անցավ վճռական գործողությունների Թուրքիայի դեմ: Այդ մարտական գործողություններին մասնակցեցին նաև հայ կամավորները, որոնք, ինչպես միշտ, գործում էին ռուսական զորքերի առաջագործում: Հայկական 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կամավորական խմբերը, Կովկասյան 4-րդ կորպուսի կազմում, 1915թ. հոկտեմբերի 9-ից մինչև 1916թ. փետրվար ամիսները, թեժ ու արյունահեղ մարտեր մղեցին թշնամու թվապես գերազանցող ուժերի դեմ: Մասնակցեցին Արևմտյան Հայաստանի՝ Վանի, Ոստանի, Խնուսի, Մուշի, Բիթլիսի և մի քանի այլ հայկական քաղաքների և գյուղերի ազատագրմանը:

1915թ. նոյեմբերի 7-ին, հայկական 1-ին կամավորական խումբը Սմբաթի ժամանակավոր հրամանատարությամբ, Վանից մեկնեց Արճեշ, որտեղ գնդապետ Ալեքսանդրովի գլխավորած Արճեշի ռուսական զորաջոկատի կազմում մասնակցեց Վանա լճի հյուսիսային և արևմտյան շրջանների ազատագրմանը: Հասնելով Արճեշ, նոյեմբերի 12-ին, հայկական 1-ին խումբն ուղարկվեց հետախուզության՝ շրջակայքում գտնվող քրդական ուժերի

²² ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.3, ք.1-31:

քվաքանակը և նրանց տեղաբաշխվածությունը ճշտելու համար: Հետախուզությունն իրականացնելու ընթացքում խումբը մարտի բռնվեց Արճեշի մոտակայքում գտնվող քրդական ջոկատների հետ և պարտության մատնեց նրանց: Քրդերը, գրեթե շրջապատված լինելով, կարողացան մի կերպ դուրս պրծնել և բողնելով մոտ 30 սպանված, դիմեցին փախուստի: Ազատագրվեցին Արճեշին հարակից Արտիշատ-Գմրեք-Չարքուն շրջանները: Սակայն դրանից հետո էլ քրդերը շարունակում էին դեռևս սպառնալ Արճեշին, տեղավորվելով մոտակա Աղբաշի գյուղի շրջակայքում: Անհրաժեշտ էր քշել քշնամուն ավելի հեռու, դեպի Ջիլան-դարասի-Սու գետը: Այդ խնդիրն իրականացնելու նպատակով, Վանի գորաջոկատի նոր պետ նշանակված գեներալ Կուլեբյակինը, հրամայեց Արճեշի գորաջոկատի պետ, գնդապետ Ալեքսանդրովին անմիջապես արշավանք կազմակերպել քրդերի դեմ, որը և իսկույն իրականացվեց: Արշավախումբը, որի հիմքը կազմեց հայկական 1-ին կամավորական խումբը, քրդական ջոկատների հետ առաջին ընդհարումը ունեցավ նոյեմբերի 30-ին, Աղբաշիում: Չորաջոկատի առաջին իսկ հրանոթային կրակներից հետո քշնամին, լքելով Աղբաշիի դիրքերը, նահանջեց դեպի Ալի-Քեթել լեռը, որը գտնվում էր Աղբաշի գյուղից դեպի հյուսիս արևելք և դիրքեր բռնեց նշված լեռան վրա: Հետապնդելով քշնամուն, հայկական 1-ին խմբի 1-ին և 2-րդ վաշտերը, հրանոթների կրակոցների սլաշտապանության ներքո, սկսեցին մարտական շոքաներով բարձրանալ լեռը: Ի վիճակի չլինելով կասեցնել հայ կամավորականների կողմ մարտական շոքաների համառ առաջխաղացումը, քշնամու ջոկատները թողնելով մոտ 100 սպանված, ստիպված եղան դիմել փախուստի, աճապարելով դեպի կիրճի խորքերը: Թշնամուց ազատագրվեց Աղբաշիի ամբողջ շրջանը և 15 քրդաբնակ գյուղեր, որի շնորհիվ կապ հաստատվեց նաև Պոնտոսում գտնվող Կովկասյան 4-րդ կորպուսի և Վանի ռուսական գորաջոկատի միջև: Այդ կռիվների ժամանակ, հայկական 1-ին կամավորական խումբը սվեց 4 սպանված և 8 վիրավոր՝ (վիրավորների թվում էր նաև հեծյալ հարյուրյակի հրամանատարի տե-

դակալ Արշակը)²³: Այդ արշավանքի ավարտման պես Անդրանիկի 1-ին խումբը կրկին վերադարձավ և տեղակայվեց Արճեշում: Դրանից հետո մարտական օպերացիաներն Արճեշի ուղղությամբ այսուհետև ճանաչվեցին ոչ նպատակահարմար. Երկարավոր էր պահպանել Արճեշի ռուսական զորաջոկատի առանց այդ էլ փոքրաքանակ ուժերը և պաշտպանել նրա կապը Վանի հետ:

Շուտով թշնամին նորից վերսկսեց հարձակումները Արճեշի զորաջոկատի վրա, որի հետևանքով կրկին խափանվեց Վանի զորաջոկատի հաղորդակցությունը Պոնտոսի ռուսական զորաջոկատի հետ: Այդ իրավիճակը տևեց մինչև 1915թ. դեկտեմբերի վերջը, երբ Արճեշի զորաջոկատին կրկին հանձնարարվեց միջոցներ ձեռնարկել թշնամու անդադար հարձակումների դեմ: Արճեշի զորաջոկատը, որի հիմքը կազմում էր հայկական 1-ին կամավորական խումբը, թշնամու սպառնալիքներին վերջ դնելու նպատակով իրագործեց երկու արշավանք: Առաջին արշավանքը տեղի ունեցավ 1915թ. դեկտեմբերի 27-ին, իսկ երկրորդը՝ դեկտեմբերի 29-ին: Երկու արշավանքներն էլ վերածվեցին թեժ, արյունահեղ մարտերի քրդական զինված հրոսակախմբերի դեմ: Առաջին արշավանքի ժամանակ զորաջոկատի խնդիրն էր դուրս բլել քրդերին Սու Սողունից և նրա մոտակա գյուղերից, իսկ երկրորդի՝ մաքրել քրդերից Պոնտոս տաևող ճանապարհը և մշտական, անխափան կապ հաստատել Պոնտոսի և Արճեշի զորաջոկատների միջև:

Արճեշի զորաջոկատի և հայ կամավորականների մարտական գործունեության մասին մանրամասն տեղեկություններ են ներկայացված հայկական 1-ին կամավորական խմբի հրամանատար Անդրանիկի՝ Վանի զորաջոկատի պետ, գեներալ Կուլեբյակինին ուղղված զեկուցագրերում: 1915թ. դեկտեմբերի 29-ին տեղի ունեցած մարտական գործողությունների մասին զեկուցագրում ստված է. «Առավոտյան ժամը 9-ին, զորաջոկատը դուրս եկավ Արճեշից և

²³ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 1, գ. 8, ք. 5-44:

Ադրաշիի վրայով շարժվեց դեպի Ադի-Գ-յադուկ, Պոնտոսի գորաջոկատին հանդիպելու համար: ... Առաջանալով ընդամենը 1/2 վերստ, գորաջոկատը կանգ առավ սպասելով ետ մնացած առաջալահ հարյուրյակի և Պերմի 292-րդ աշխարհագորային վաշտի մոտենալուն: Քրդերը թվով 400 հեծյալ և հետևագոր, հետասլնդելով ետ մնացած հարյուրյակին, իջան բարձունքներից, միևնույն ժամանակ ձախ կողմից՝ Ադիջևագի ուղղությամբ, երևաց նրանց մի ուրիշ խումբ՝ թվով ևս 200 մարդ: Օգտվելով գորաջոկատի անգործությունից, քաջալերված քրդերը մոտեցան կրակային հեռավորության: Յերեկվա ժամը 3-ին գորաջոկատն անցավ հարձակման հակառակորդի միանգամից երկու խմբերի դեմ: Հայկական խմբի հեծելագորին հրանոթների օգնությամբ հաջողվեց գրավել Մայդան-Դադի բարձունքները, միաժամանակ քրդերը ետ շարավեցին նաև Ադիջևագի կողմում: Գիշերելով Մաջորիսից դեպի հյուսիս գտնվող մի գյուղում, մյուս օրը առավոտից հայկական խումբը գրավեց Ջիլան-Դարասիից քրդերին դուրս բշելով: Այդ գործի իրականացումը հանձնարարված էր հայերի 3-րդ վաշտին և հայկական հեծելագորին: Հրետանու աջակցությամբ իջնելով դեպի կիրճը, այդ գորամասերը բշեցին և փախուստի մասնեցին քրդերին, սյրեցին 7 գյուղ և գնդապետ Ալեքսանդրովի հրամանով վերադարձան իրենց զբաղեցրած նախկին դիրքերը: Այդպես վերջացավ դեկտեմբերի 30-ի օրը: Գիշերեցինք Մաջորիսում: Մյուս օրը, դեկտեմբերի 31-ին, ժամը 8-ին, գորաջոկատը շարժվեց Ասսեսնակ և Շուրյուֆրական գյուղերի ուղղությամբ՝ Պոնտոսի գորաջոկատին հանդիպելու համար: Ջիլանի կողմից հակառակորդը այլևս չէր երևում, իսկ Ադիջևագի կողմից չնայած քրդերը երևում էին, բայց ակտիվ գործողություններ չէին ձեռնարկում: Դեկտեմբերի 31-ին ցերեկը, կայացավ Պոնտոսի առաջավոր գորամասերի հետ հանդիպումը, որով և սվարտվեց արշավանքը, և մեր գորաջոկատը վերադարձավ Արճեշ: Արճեշում գտնվելու երկու ամսվա ընթացքում հայկական 1-ին կամավորական խումբը տվեց 5 սպանված և 17 վիրավոր: Արճեշից դեպի Ախլաքի և Բիթլիսի ուղղությամբ շարժվելու

պահին հայկական 1-ին խմբում կար 800 մարդ, որից 110-ը հեծյալներ»²⁴։

1916թ. հունվարի 19-ին Վանի գորաջոկատի պետ, գեներալ Կուլեբյակինի կողմից Արճեշի ջոկատին, որի կազմում շարունակում էր մնալ 1-ին կամավորական խումբը, կարգադրություն արվեց շարունակել արշավանքը՝ շարժվել Արճեշից դեպի արևմուտք՝ Սիմակ լեռան արևելյան ստորոտներ, և Ալսալք տամոդ ճամապարհին գրավել Նորաշեն գյուղը։ Հունվարի 20-ին, դուրս գալով Արճեշից Անդրանիկի խումբն ընդամենը 10 վերստ հեռավորության վրա կռվի բռնվեց քրդերի հետ, որոնք դիրքեր էին գրավել Նորաշեն տամոդ ճամապարհի բարձունքներում։ Անցնելով հարձակման հայ կամավորականները, ռուս կոզակների հետ միասին, երկու ժամ տևած քեժ կռիվներից հետո ստիպեցին քշվածուն քողնել դիրքերը, նահանջել դեպի Ջերաբլու և երեկոյան, գրավեցին Նորաշենը։ Այդ մարտում խումբը չունեցավ կորուստներ, իսկ հակառակորդի կորուստները հասնում էին տասնյակների։ Թշնամուց գրավվեց նաև մեծ քանակությամբ անասուն, ալյուր և զանազան տեսակի պարենամթերք²⁵։

Նորաշենում հայկական խումբը մնաց 8 օր և միայն հունվարի 29-ին ստացված հրամանի համաձայն շարժվեց Ադիլջևազի ուղղությամբ։ Ինչպես Նորաշենի գրավման ժամանակ, այնպես էլ այս առաջխաղացման ընթացքում, հայկական 1-ին կամավորական խումբը գնում էր ռուսական զորքերի առաջագործում։ Եվ, ընդհանրապես, Վանա լճի հյուսիսային և արևմտյան շրջաններում իրականացված բոլոր մարտական գործողությունների ընթացքում խումբը շարժվում էր միայն առջևից՝ իր վրա կրելով արշավանքի ողջ ծանրությունը։

Նորաշենի գրավումից հետո, Արճեշի գորաջոկատին այնուհետև հանձնարարվեց գրավել Ադիլջևազը։ Մարտը սկսվեց

²⁴ Նույն տեղում։

²⁵ Տե՛ս նույն տեղում։

1916թ. հունվարի 29-ին, ժամը 10-ին: Անդրանիկն իր հեծելագործով, կոզակային հարյուրյակի օգնությամբ, իրագործեց հակառակորդի ձախ քեի սրընթաց ճեղքում: Քրդերը խարխուլվելով և չկարողանալով այլևս ուշքի գալ իրենց հասցված ծանր հարվածից, դիմեցին փախուստի դեպի Ադիջևազ: Սինակ լեռան և Վանա լճի միջև քրդական դիրքերի գիծը ճեղքվեց: Միաժամանակ ծանր հարված հասցվեց հակառակորդի նաև աջ քեին, որտեղ գտնվում էին նրա հիմնական ուժերը: Հայ կամավորականների հետևագործը նեղ օղակի մեջ վերցրեց Քոչեսոր գյուղը, որտեղ տեղակայված էին բշնամու հիմնական ուժերը, իսկ հայկական հեծելագործը՝ Սմբարի գլխավորությամբ սկսեց հետապնդել փախչող բշնամուն: Շրջապատված բոլոր կողմերից, բայց չցանկանալով կամավոր հանձնվել, քրդերը Քոչեսոր գյուղում ցույց տվեցին համառ դիմադրություն: Հայ կամավորականների հետևագործի և հրետանային ուժգին կրակոցներով բշնամու դիմադրությունը վերջնականապես կոտրվեց, իսկ գյուղը գրավվեց: Քոչեսորում հակառակորդի լիակատար պարտությամբ որոշվեց նաև Ադիջևազի ճակատագիրը, որը գրավվեց հաջորդ օրը՝ հունվարի 30-ին, առանց մարտի: Թողնելով ամբողջ շրջանը՝ բշնամին հեռացավ դեպի Ախլար: Ախլարում ևս բշնամին չկարողացավ երկար դիմանալ և կարճատև մարտից հետո թողեց քաղաքը ու հայկական կամավորականների ճնշման տակ նահանջեց դեպի Թաղվան: Չորաջոկատը տեղակայվեց Ախլարում: Հենց այդ ժամանակ էր, որ Մուշի մոտ ծավալված ռազմական գործողությունները տվեցին դրական արդյունքներ:

1916թ. փետրվարի 2-ին, գեներալ Նազարբեկյանի գլխավորած ռուսական ջոկատները և հայ կամավորականների 2-րդ և 4-րդ խմբերը գրավեցին Մուշը: Դրանից հետո գեներալ Աբացիևին հրամայվեց գրավել նաև Բիթլիսը, որին ևս ակտիվ մասնակցություն ունեցան հայ կամավորները: 1916թ. փետրվարի 6-ին, հայկական 1-ին կամավորական խումբը հրամանով մտցվեց Բիթլիսյան ռուսական խմբավորման՝ զնդապետ Ֆիլիպովի գլխավորած գործառայան կազմի մեջ և ուղարկվեց Թաղվանի ուղղությամբ, որը և գրավ-

վեց փեսարվարի 7-ին: Այնուհետև, զեներալ Աբացիևի հրամանով, հայկական 1-ին խումբը, 292-րդ ռուսական աշխարհագորային խմբի հետ միասին, Թաղվանից տեղաշարժվեց Ռահվիժովա դաշտավայր, ունենալով առաջադրանք՝ գրավել հակառակորդից Բիթլիսի կիրճի մութերը: Չնայած թշնամու ուժերի քվաքանակի հսկայական առավելությանը (8 թուրքական գումարտակ, քրդական ջոկատներ և մեծաքանակ հրետանի), Անդրանիկն առաջինը հարձակման անցավ թշնամու ձախ քևի վրա, նպատակ ունենալով ճեղքելով դուրս գալ Մուշ-Բիթլիս ճանապարհ: Առաջ էին շարժվել հայկական խմբի 1-ին և 2-րդ վաշտերը: Բռնկվեց քեժ մարտ, որն առանց թուլանալու տևեց մինչև երեկո: Այդ մարտում խումբը սվեց 4 սպանված և 9 վիրավոր²⁶: Նույն օրվա կանի փետրվարի 15-ին հայկական 1-ին խումբը Բիթլիսյան ռուսական զորաջոկատի կազմում մասնակցեց նաև Բիթլիս քաղաքի ճանապարհին տեղակայված Ալամիս-խան, Բաշ-խան գյուղերի, ինչպես նաև Բիթլիս քաղաքի մոտ գտնվող բարձունքների գրավմանը: Այդ կռիվների ժամանակ խումբը սվեց 15 սպանված և 55 վիրավոր²⁷:

Փետրվարի 18-ից 19-ի գիշերը, հայկական 1-ին կամավորական խումբը, Անդրանիկի անմիջական հրամանատարությամբ, Բիթլիսյան զորաջոկատի միջին զորասյան կազմում (հրամանատար՝ զնդապետ Ֆիլիսով), հայկական մյուս կամավորական խմբերի հետ միասին, ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Բիթլիս քաղաքի համար մղված մարտերին և նրա զրավմանը: Բիթլիսի զրավման ժամանակ աչքի ընկան հատկապես խմբի 1-ին, 2-րդ հեռևակային վաշտերը և 1-ին խմբի հեծելազորը՝ Սմբաթի հրամանատարությամբ: Անցնելով թուրքական խրամատները, 2-րդ հայկական վաշտը առաջիններից մեկը մտավ և զրավեց Բիթլիսը: Բիթլիսի ազատագրումից հետո, զեներալ Աբացիևի No.636 հրամանով, հայկական 1-ին խումբը տեղակայվեց Բիթլիսից հյուսիս

²⁶ Տե՛ս նույն տեղում:

²⁷ Տե՛ս նույն տեղում:

գտնվող Մորիս-Կեսարանի գյուղում ունենալով առաջադրանք սպա-
հովել Բիբլիսի զորաջոկատի աջ քեր թշնամու հարձակումներից և
հետախուզություն իրականացնել Մուշի ուղղությամբ և Բիբլիսից
հարավ-արևմուտք: Այդ ժամանակ, Բիբլիսի հայերից ստացվեց
տեղեկություն, որ քաղաքից դեպի հարավ-արևելք գտնվող Էլևև,
Վերին և Ներքին Օլակ, Խումաչ, Արձանավանք, Գևրոզ, Կարմուջ
և այլ գյուղերում կա գերության մեջ գտնվող մեծ թվով հայ
բնակչություն: Անդրանիկի կամավորականները, որոնց մեջ քիչ չէին
ծնունդով բիբլիսցիներ, շտապ շարժվեցին դեպի այդ գյուղերը՝
իրենց արյունակիցներին ազատագրելու համար: Քրդերից
փրկվեցին հարյուրավոր հայեր, որոնց մեջ քիչ չէին նաև կանայք
ու երեխաներ²⁸:

1916թ. փետրվարի 22-ին, No.782 հրամանով Անդրանիկի
1-ին խումբը կրկին մտցվեց գնդապետ Ֆիլիպովի գլխավորած զո-
րաջոկատի կազմի մեջ, որին հանձնարարված էր՝ «ուչնացնել Բիբ-
լիսի և Մուշի միջև գտնվող քրդերին, սպա առաջադրանքը կատա-
րելուց հետո, անցնել գեներալ Նազարբեկյանի՝ Մուշի զորաջո-
կատի կազմի մեջ»: Կատարելով այս կարգադրությունը, փետրվա-
րի 23-ին հայկական 1-ին կամավորական խումբը Բիբլիսից
շարժվեց Մորիս-Կեսարանի, սպա այնտեղ 4 օր մնալուց հետո,
շարժվեց դեպի Մուշ և տեղակայվեց Մուշ-Բիբլիս ճանապարհին
գտնվող Չուխուդ-Նորաշեն (1-ին վաշտ), Հասբեյ (3-րդ վաշտ) և
Մոռնիկ (2-րդ վաշտ) գյուղերի տարածքում, որտեղ և մնաց մինչև
մարտի սկիզբը: Քիչ անց, մարտի 12-ին, Անդրանիկի խումբը, հրա-
մանատարությունից ստացավ նոր կարգադրություն՝ «Վերադառ-
նալ Բիբլիս, որի վրա մեծ ուժերով հարձակում են սկսել թուրքերը»:
Մարտի 12-ից մինչև 31-ը սկսվեց Բիբլիսի հերոսական պաշտպա-
նության առաջին շրջանը, որին հայ կամավորականներն ունեցան
ամենաակտիվ մասնակցությունը: Մարտի 16-ին Բիբլիս հասած

²⁸ Տե՛ս նույն տեղում, ք.54-60:

հայկական 1-ին խումբն այդ պաշտպանության գործում խաղաց մեծ դեր, որն արտահայտվեց Բիթլիսից արևմուտք գտնվող Կարպ գյուղում տեղի ունեցած մի շարք մարտերում, որտեղ, հայ կամավորների համառ դիմադրության շնորհիվ քուրքական թվով մի քանի անգամ գերազանցող ուժերի առաջխաղացումը Բիթլիսի վրա կասեցվեց: Ամբողջ երկու օր, մարտի 26-ից 27-ը թուրքերը ոչ միայն չէին կարողանում ճեղքել հայ կամավորների պաշտպանությունն արևմուտքից և հարավից Բիթլիս ներխուժելու համար, այլև հակառակը, մարտի 27-ի գիշերը, հանդիպելով հուժկու դիմադրության, ստիպված եղան դադարեցնել հարձակումները և նահանջել ետ՝ դեպի հարավ՝ Քեղ գյուղի ուղղությամբ²⁹:

1915թ. նոյեմբերի 26-ին, Գ-րոյի գլխավորած հայկական 2-րդ կամավորական խումբը, որի կազմում կար 1240 մարդ, որոնցից 585-ը արևելահայ, իսկ 655-ը արևմտահայ, դուրս գալով Երևանից, շարժվեց Ղարաքիլիսայի ուղղությամբ: Դեկտեմբերի 12-ին, հակառակորդի ուժերը սլարգելու նպատակով, Գ-րոն հեծյալ մի խմբով հարձակում գործեց Կոփի վրա: Վերադարձի ճանապարհին ցրտահար եղան խմբի 35 կամավորականներ: Դեկտեմբերի 29-ին Գ-րոյի խումբը, ռուսական զորամասերի հետ միասին, շարժվեց Արճեշի ուղղությամբ և տեղի ունեցած մի քանի փոքր ընդհարումներից հետո, Հաղինի կիրճի մոտ, միացավ Արճեշի ռուսական զորաջոկատին և տեղակայվեց Բաղնուսում: 1916թ. հունվարի 9-ին, հայկական 2-րդ կամավորական խումբը Բաղնուսում թողնելով կես վաշտ հետևակ և 25 հեծյալներ, շարժվեց Խնուսի ուղղությամբ: Հունվարի 12-ին, խումբը ռուսական Լաբինսկյան զնդի հետ միասին, անցնելով Չիանակ լեռը, Կարա-Կիրփիի մոտ ջախջախեց և պարտության մատնե այս ուղղությամբ նահանջող թշնամու զորամասերին, որից հետո, հունվարի 13-ի գիշերը, թեթև մարտերից հետո գրավեց Խնուսը: Հունվարի 18-ին 2-րդ խումբը

²⁹ Տե՛ս նույն տեղում, ք.62-66:

Խնուսից տեղափոխվեց Կարա-սողաջ, որտեղ և մնաց մինչև հունվարի 25-ը՝ մի շարք կռիվներ ունենալով հակառակորդի գործածանքների հետ: Հունվարի 26-ին 2-րդ կամավորական խումբը վերադարձավ Խնուս: Այստեղ երկու օր մնալուց հետո, հունվարի 28-ին Չաուրմայի ուղղությամբ շարժվեց դեպի Մուշ և հնգօրյա ծանր կռիվներից հետո խմբի հեծյալ ջոկատը առաջինը մտավ և գրավեց Մուշը: Դրանից միայն մի քանի օր հետո ռուսական զորքը մանում է քաղաք:

1916թ. փետրվարի 5-ին հայկական 2-րդ խումբը Մուշից անցավ Բիթլիս, ճանապարհին գրավելով Խաս, Նորք, Մառնիկ և մի շարք այլ գյուղեր: Փետրվարի 18-ին 2-րդ խմբի՝ Դավի Ղազարի գլխավորած վաշտը, ռուսական զորքերի հետ միասին գրավում է Բիթլիսը: Բիթլիսի գրավումից հետո հայկական 2-րդ խումբը կենտրոնանում է Մառնիկ գյուղում, սպա շարժվում է դեպի Նաստիկ-գյուղի շրջան, սեփական ուժերով այդ տարածքները ազատագրելու համար: Յոթ օր Նաստիկ-գյուղի շրջանում հաջողությամբ գործելուց հետո, խումբը մարտի 5-ին կրկին վերադառնում է Մուշ: Հաջորդ օրը, մարտի 12-ին, Դրոյի գլխավորած խումբը Մուշից շարժվում է դեպի Կոլտաղաջ, որտեղ ևս մի շարք կռիվներ է ունենում բուրջական կանոնավոր զորքերի հետ: Վերջին անգամ հայկական 2-րդ խումբը կռվի է բռնվում թշնամու հետ Կոտամու-Գյաստակ գյուղի մոտ, ապրիլի 12-ին և 23-ին: Այդ արյունահեղ մարտերում զոհվում են խմբի հրամանատարի օգնական Հարություն Ավոյանը (Զյոսան), խմբապետ Մարտիրոս Խաղկիհանյանը, ֆելդֆեբել Վիհրաբ Եղոյանը, վիրավորվում են վաշտապետ Մարտիրոս Աբրահամյանը և խմբապետ, կապիտան Հակոբջանյանը:

1916թ. մայիսի 1-ին շտաբի հրամանով հայկական կամավորական 2-րդ խումբը Մուշի վրայով վերադառնում է Խնուս և մինչև մայիսի վերջը տեղակայվում է Խնուսում, Գյում-Գյում ու Տափան գյուղերում: Խնուսում խումբը ցրվելով կառավարությանն է հանձնում ձիերն ու զենքը. հունիսի 7-ին խմբի շտաբը տեղափոխվում է Երևան: Միայն 1915թ. նոյեմբերի 26-ից մինչև 1916թ. հունվարի

4-ը ընկած ժամանակահատվածում Դրոյի գլխավորած 2-րդ կամավորական խումբը տվեց 51 սպանված, 104 վիրավոր և 44 ցրտահար³⁰:

Բիթլիսի համար մղված մարտերին, ռուսական զորքերի կազմում ակտիվ մասնակցություն ունեցան նաև 3-րդ և 4-րդ հայկական խմբերը: Համազասպի գլխավորած 3-րդ կամավորական խմբին հանձնարարված էր Բիթլիսի ձախ կողմի՝ Գյուղեթ-Դիրիկի կիրճի և Կարմուջի շրջանի կարևոր ուղղության սաշտալանության գործը, որտեղ տեղի ունեցան ամենաքեժ մարտերը: Այդ կռիվներում հայկական խմբի և նրա հրամանատարի դրսևորած մարտական բարձր հմտության մասին վկայում է 1915թ. օգոստոսի 17-ին Բիթլիսի զորաջոկատի պետ, գեներալ Նազարբեկյանի՝ Համազասպին ուղարկված հեռագիրը, որում ասվում է. «Տեղի ունեցած բոլոր մարտերում, խմբի հետևակային և հատկապես հեծյալ զորամասերը, մարտական տեսակետից դրսևորվեցին իրենց լավագույն կողմերով, որը չեմ կարող չվերագրել Ձեր սկանավոր ռազմական և կազմակերպչական ունակություններին:

Բոլոր կռիվներում և հետախուզության ժամանակ, Ձեր կողմից ցուցաբերվեց ռազմական ճշմարիտ տեսակետ և դրված նպատակին հասնելու համար համառություն: ... Դուք, բազմաթիվ անգամ վտանգելով Ձեր կյանքը, ցուցաբերում էիք քաջության օրինակներ և դրանով, անձնական իսկ օրինակով ազդում Ձեր ենթակաների վրա:

Բոլոր դեպքերում էլ Դուք ներ էիք դնում Ձեր եռանդը, ընդունակությունները, աշխատանքը և ասպետական վերաբերմունքը գործին, բացառապես հայրենասիրական զգացմունքներով, այլ ոչ քեղեկավարվելով անձնական բնավորության դրդմամբ:

Այժմ, բաժանվելով Ձեզանից, իմ բարոյական սպարտքն են համարում ծառայության և իմ անձնական անունից Ձեզ հայանել խորին շնորհակալություն, և հաջողության լավագույն ցանկություն-

³⁰ Տե՛ս նույն տեղում, գ.16, ք.3-5:

ներս Ձեր հետագա գործունեության ընթացքում, և խնդրում եմ փոխանցել կտրիճ-կամավորականներին իմ սրտագին շնորհակալությունը՝ իրենց անմնացորդ ծառայության համար»³¹:

4-րդ հայկական կամավորական խումբը, որի կազմում կար 2461 մարդ, որոնցից 1551-ը արևմտահայեր էին, 472-ը՝ արևելահայեր, 186-ը՝ ռումինահայեր, 252-ը՝ ամերիկահայեր, հունիսի վերջին, Սորփից անցավ Թուխ-Թաթվան, այնտեղից հունիսի 1-ին հասավ Բիթլիս, որտեղ հայկական մյուս զորամասերի հետ ակտիվորեն մասնակցեց Բիթլիսի գրավմանը՝ հատկապես աչքի ընկավ հուլիսի 1-ից մինչև 3-ը և հուլիսի 7-ին տեղի ունեցած քեժ կռիվներում: Այնուհետև, 1915թ. դեկտեմբերի 12-ից Քեռու գլխավորած 4-րդ կամավորական խումբն անցավ Պարսկաստան և մինչև 1916թ. հուլիսի 11-ը, Սուլդուզի ռուսական զորաջոկատի կազմում մասնակցեց ավելի քան 24 տարբեր մարտերի: 1915թ. դեկտեմբերին խումբը մարտեր տվեց Ուշնուդի, Դալի-Դերբենտի, Շիրվան-Շալի շրջաններում, 1916թ. հունվարից մինչև դեկտեմբեր՝ Ուշնու֊Նաջիի, Դերվիշի, Շեյխին-Գյարուսի, Ռևանդուզի, Դերգյալի, Գալլայի, Ռայաթի և այլ շրջաններում: Նշանակալից հաջողությունների կողքին մեծ էին և կորուստները:

Միայն 1915թ. օգոստոսի 1-ից մինչև 1916թ. հուլիսի 16-ը ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած կռիվներում 4-րդ հայկական կամավորական խումբը կորցրեց 1233 մարտիկ, որից 411-ը՝ սպանված³²:

Կովկասյան ճակատում 1915-1916թթ. ծավալված մարտական գործողություններին ակտիվ մասնակցություն ունեցավ նաև 6-րդ կամավորական խումբը՝ կապիտան Հ.Ջանփուլադյանի գլխավորությամբ: 1915թ. գարնանը, զեներալ Բարաթովի ռուսական զորաջոկատի կազմում խումբն Ալեքսանդրապոլից հասավ Կարս, որտեղ սուրբ Առաքելոց եկեղեցում տեղի ունեցավ խմբի

³¹ Տե՛ս նույն տեղում, գ.5, ք.20-21:

³² Տե՛ս նույն տեղում, գ.9, ք.78-79:

հանդիսավոր երդման արարողությունը: Կարսից՝ Բասենի դաշտով խումբն անցավ դեպի Էրզրում: Անցնելով Բաշ, Չըլզանի, Կարակուրտ և Դահար գյուղերը, 1915թ. ապրիլին 6-րդ խումբը կռվի բռնվեց քուրքական զորքերի հետ և ստացավ իր մարտական առաջին մկրտությունը: Այնուհետև սկսվեց ծանր բախումների, կատաղի և արյունահեղ կռիվների երկար մի շղթա: Թշնամու հետ խումբը հատկապես կատաղի կռիվներ ունեցավ Թեքեր, Աղբարա, Չորագյուղ, Թուրուխ, Էսմեր, Աշգուլա, Բռնակասպան, Մամախաթուն, Վաթոք, Բագառիճ, Կյոքքաղ, Հոպիկքաղ և Բռնաշեն գյուղերում: 6-րդ կամավորական խմբի՝ 1915թ. հունիսի 22-ին Վերին Բասենի հովտում տեղի ունեցած կռիվների մասին Հայկ Բժշկյանը գրում է. «Համիդեական հեծելազորի հինգ հարյուրյակ Գզլքաղ սարի ստորոտից հանկարծակի սլացան մեզ վրա: ... Մեկ էլք կար՝ նահանջել: Բայց այստեղ ծխի և փոշու քուլաների մեջ մենք տեսանք Ավշարյանին: Մեկ շրթայից մյուսը վազելով, նա հանգստացնում և քաջալերում էր զինվորներին: Եվ նրանք շարունակում էին կրակել, չնայած ծխի և փոշու մեջ ոչինչ չէին տեսնում: Ավշարյանը տեղից տեղ վազելով հրամաններ էր արձակում, գոռում էր, հորդորում, ձեռքով ցույց էր տալիս թշնամու հեծյալների կողմը և կրկնում. փախչում են, փախչում, սիրելիներս, խփեցեք նրանց: Դե, մեկել տեսեք, արդեն փախան»³³: Հետաքրքրական է նաև 6-րդ խմբի մեկ այլ ճակատամարտի, Հայկ Բժշկյանի նկարագրությունը. « ... Թուրքերն առանց ուշք դարձնելու իրենց տված անհաշիվ գոհերին – գալիս էին ու գալիս:

Ես հույսս կորցրել էի բոլորովին: Վերջին անգամ հավաքելով ուժերս, բղավեցի, – դիր նշանացույց 200 քայլ – անդադար կրակ, զարկ:

Հենց այդ վայրկյանին էր, երբ առաջապահ գորաշղթայի առաջ մխացող ատրճանակը ձեռքին երևաց Ավշարյանը:

³³ Հ.Հայրապետյան, Լեզենդար Գայը, Ե., 1977, էջ 26-27:

– Ձեզ մատաղ քաջերս, մի վախենաք, այստեղ եմ, առաջ քաջերս, առաջ ուռա՛...

Չորրորդ հարյուրյակը ոգևորված իրենց հրամանատարի հերոսությամբ՝ հաղթական ուռույով առաջ խոյացավ դեպի թշնամին: Նրանց հետևեց առաջին հարյուրյակը – որը նմանապես դիրքերից դուրս ցատկելով վազեց դեպի թշնամին:

Այդ բռպեին 2-րդ հարյուրյակը ևս դուրս գալով դիրքերից հարձակման դիմեց, իսկ 3-րդ հարյուրյակը շեշտակի համագարկերով սկսեց ծայրագույն աջ քևից խաչաձև կրակի մեջ առնել թշնամուն, որը տեսնելով մեր հարձակումն՝ սկսեց դիրքեր փնտրել:

Սենք բոլորս էլ կատաղել էինք. գազանացել՝ ինչպես վագրը, և վայ վիրավոր կամ կենդանի թշնամուն, որը ճանապարհին հանդիպում էր մեզ: Գթուրյան որ մի նշույլ: Թանկագին ընկերների կորուստն սպանել էր մեր կրծքում մեր խիղճն ու սիրտը:

Բայց թշնամին չդիմացավ. և երբ մենք մոտեցել էինք նրանց, ու մնացել էր միայն 100 քայլ, որպեսզի սփնսամարտի դիմեինք կամ քե ձևքերով միմյանց խողդեհինք, նրանք փախան, փախան խայտառակ ... »³⁴:

6-րդ խմբի ամենծանր և կատաղի կռիվները տեղի ունեցան 1915թ. հունիսի 20-ից 29-ը: Այդ արյունահեղ կռիվներում հայկական խումբը թշնամուց զրավեց սարատեգիական խիստ կարևոր նշանակություն ունեցող Չախմախլը լեռը: Այս հաղթանակը ծանր անդրադարձավ խմբի համար. գոհվեցին, վիրավորվեցին և անհայտ կորան հարյուրից ավելի կամավորականներ: Հունիսի 22-ին, Շարյան գետի ափին, հերոսի մահով գոհվեց 6-րդ խմբի հրամանատար Գրիգոր Ավշարյանը:

Գրավված դիրքերը ռուսական զորքերին հանձնելուց հետո, հանգստանալու և համալրվելու նպատակով, խումբը որոշ ժամա-

³⁴ Հուշարձան նվիրված աղիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության քառասունամյակին, Փարիզ, 1930, էջ 277:

նակ եւս քաւզվեց առաջավոր գծից: Թարմանաւուց և կարգի բերվելուց հետո, հարձակման անցնելով գրավեց Քյոփրիքէոյը:

1915թ. դեկտեմբերի 24-ից մինչև 1916թ. հունվարի 6-ը ռուսական Կովկասյան բանակն անցավ ընդհանուր հարձակման: Չախջախված թուրքական բանակը նահանջեց դեպի Էրզրում: Հետապնդելով թուրքական բանակին ռուսական զորքերն իրագործեցին Էրզրումի օպերացիան, որը Կովկասյան ռազմաճակատի՝ իր նշանակութամբ երկրորդ կարևոր ռազմական գործողությունն էր և ավարտվեց ռուսական բանակի փայլուն հաղթանակով և թուրքական զորքերի ջախջախիչ պարտութամբ: 6-րդ հայկական կամավորական խումբը, ինչպես միշտ գործելով ռուսական զորքերի առաջաւորում, մեծ եռանդով և անձնագոհությամբ կատարելով իր վրա դրված առաջադրանքը, հետապնդելով թշնամուն, 1916թ. փետրվար-մարտ ամիսներին գրավելով Էրզրումի մոտ տեղակայված թուրքական դիրքերը «Կարսի դուռ» կոչված ճանապարհով առաջինների շարքում մտավ և գրավեց Էրզրումը: Էրզրումի գրավումից հետո 6-րդ խումբը մասնակցեց Մամախաթունի կռիվներին, մարտում երրորդ անգամ վիրավորվեց խմբի հրամանատար Հայկ Բժշկյանը և տեղափոխվեց հիվանդանոց: 6-րդ խմբի հրամանատարությունն այնուհետև վստահվեց Պանդուխտին:

Հայ կամավորական խմբերը բացառիկ խիզախություն ու ռազմական հմտություն դրսևորեցին պատերազմի առաջին շրջանում՝ մեծապես օգնելով ռուսական բանակի հաղթանակներին Կովկասյան ճակատում, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում: Կատարելով առաջապահ, հետախուզական և պահակագորային ծառայություններ՝ հայ կամավորական խմբերն ակտիվ մասնակցություն ունեցան Սարիղամիշի, Էրզրումի, Դիլմանի, Ռևանդուզի և այլ ճակատամարտերին, Բերկրի-Կալայի, Վանի, Խնուսի, Բիթլիսի, Էրզրումի ազատագրմանը: Նրանք մեծ դեր կատարեցին նաև արևմտահայ գաղթականության կյանքը փրկելու, ազատագրված շրջաններում հայ կյանքը վերականգնելու գործում: Կամավորական զործերով գրադվում էր հայոց ազգային

Բյուրոյին կից ստեղծված Կարգադրիչ Մարմինը, որի կարգադրու-
թյամբ 1915թ. գարնանը Իզդիրում հիմնվել էր «Հայկական շտաբ»:
Գեներալ Օգանովսկու գլխավորած 4-րդ բանակային կորպուսի
շտաբին առընթեր ստեղծվեց Ալաշկերտ-Բայազետի շրջանի
Հայկական վարչական մարմին՝ Ռուսաստանի Պետական դումայի
պատգամավոր Սիրական Տիգրանյանի նախագահությամբ³⁵: Ռու-
սական զորքերի կողմից Վանն ագատագրելուց հետո պաշտպա-
նության ղեկավարներից Արամ Մանուկյանը Նիկոլայի հրամանով
նշանակվեց Վանի նահանգապետ: Ինչպես գրում էր ռուսական
«День» քերթը, արդեն 1915թ. ամռանը «Հայերի ղեկավարները փա-
խատականներին հորդորում էին վերադառնալ Հայրենիք, որը նոր
էր նվաճվել ռուսների կողմից»³⁶: Ագատագրված քաղաքներում և
զավառներում ստեղծվում էին Հայկական կոմիտեներ, նրանց
– աջակցում էին ռուս զորահրամանատարները՝ նպաստելով հայ
կյանքի վերականգնմանը:

Ռուսական բանակի հրամանատարությունը բարձր գնահա-
տեց հայ կամավորների ռազմական գործունեությունը: Նրանցից
շատերը պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու
մեդալներով, այդ թվում նաև Գեորգիյան խաչով: Այսպես օրինակ՝
միայն 2-րդ կամավորական խմբի անձնակազմից (հրամանատար
Դրո) 1914թ. հոկտեմբերի 23-ից մինչև 1916թ. հունիսի 1-ը ընկած
ժամանակահատվածում Գեորգիյան խաչով պարգևատրվեց 76
կամավորական (որից երկուսն առաջին աստիճանի), 138 մարդ
պարգևատրվեց մեդալներով³⁷: Մարտական գործողություններին
ակտիվորեն մասնակցելու համար Գեորգիյան խաչի 2-րդ և 4-րդ
աստիճանի շքանշաններով պարգևատրվել էին նաև «Արարատյան

³⁵ Տե՛ս Տիգրան Գեոյեանց, Հետախույզի մը հուշերը, ՎԷՄ, Փարիզ, 1938, էջ 51:

³⁶ Տե՛ս «День», Петроград, 1915թ., 6-ը սեպտեմբերի: †

³⁷ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.3, գ.16, թ.3:

գորաջոկատի» կազմի մեջ մտնող (2-րդ, 3-րդ և 4-րդ խմբեր) տասնյակ կամավորականներ³⁸: Ռ-ազմի դաշտում զոհվեցին ավելի քան 700 կամավորականներ³⁹:

Չնայած հայ կամավորական խմբերի մարտիկների սխրանքներին և անձնվեր գործունեությանը, նրանց նկատմամբ որոշ շրջաններում դրսևորվում էր թշնամական վերաբերմունք: Կովկասյան քանակի հրամանատարությունը, հատկապես օկրուգի ռազմական շտաբի հատուկ բաժանմունքը և երկրամասի նահանգային ոստիկանությունը դեմ էին հայկական զինված խմբերի գոյությանը: Նրանք հորինում էին շինծու մեղադրանքներ կամավորների հասցեին, ներկայացնում Ռ-ուսաստանի դեմ ալյստամբական շարժում բարձրացնելու մտացածին փաստեր, կասկածներ հայտնում ռուսական պետության նկատմամբ հայերի ունեցած նվիրվածության վերաբերյալ: Կարևոր վավերագրերից մեկը, որտեղ մնայլ գույներով է ներկայացված հայերի հակառուսական գործունեությունը Կովկասյան ռազմական օկրուգի շտաբի հատուկ բաժանմունքի պետ, գնդապետ Ֆոն Ռ-ուրիմաուի և նույն բաժանմունքի հատուկ գործավար, գնդապետ Յիսսի՝ 1915թ. հոկտեմբերի 3-ի գաղտնի զեկուցագիրն է՝ ուղղված Կովկասի փոխարքայի գրասենյակի հատուկ բաժանմունքին և Կովկասյան գործող բանակի շտաբին: Նրանում ասված է. «Ոստիկանության գաղտնի գործակալության տվյալներով, հայերը հիմնականում Երևանի նահանգում, գաղտնի զենք են գնում և նույնիսկ ունեն նրանց պահեստներ էջմիածնում, Իգդիրում և Ալեքսանդրապոլում: Նույն գործակալության տվյալներով բոլոր հայերը, որոնք հարակից են բնակվում Թիֆլիսին, ունեն մեծ թվով զենք և փամփուշտներ: Դրա հետ մեկտեղ, ոստիկանությունը նկատել է, որ հայ կամավորական խմբերի Կարգադրիչ կոմիտեի կողմից, անձանց տրվում են հատուկ վկայականներ, հաստատող նրանց վրա դրված հանձնարարու-

³⁸ Տե՛ս Ռ ԿՊՌՊԱ, ֆ.551, ց.3, գ.20, նաև գ.9, ք.200:

³⁹ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.57, ց.5, գ.56, ք.2:

քյունը՝ փոխադրելու Կարգադրիչ Մարմնին կամ հայկական խմբերին պատկանող զենքը: ... Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայկական խմբերը զենքը և փամփուշտները ստանում են ռազմական զերատեսչությունից, ոստիկանությունը բնավ հիմնավորված, արտահայտում է ենթադրություն այն մասին, որ այդ զենքի կուտակումներն իրագործվում են ոչ թե խմբերի սպառազինման, այլ շատ ուրիշ նպատակների համար»:

Հաղորդելով ի գիտություն վերոշարադրվածը, գնդապետ ֆոն Ռուրիկնաուն այնուհետև խնդրում էր «տեղեկացնել իրեն, թե արվա՞ծ է արդյոք հայ կամավորական խմբերի Կարգադրիչ Մարմնին իրավունք՝ իրականացնելու զենքի նման կուտակումներ»⁴⁰:

Այս և նման բովանդակության բազմաթիվ զեկուցագրերի ազդեցությունն անհետևանք չմնաց. 1915թ. վերջերին, երբ ռուսական հրամանատարությունն ուժեղացրեց Կովկասյան բանակը և ռազմաճակատում անցավ վճռական գործողությունների, կամավորական խմբերի անհրաժեշտությունը վերացավ: 1916թ. մարտին հրաման արձակվեց հայ կամավորական խմբերի կազմացման մասին: Նրանց փոխարեն, ռուսական բանակի Չերագոյն գլխավոր հրամանատարի հրամանի համաձայն, Կովկասյան ճակատի գործող բանակի զորամասերի կազմում մինչև հունիս՝ երեք ամսվա ընթացքում, ստեղծվեցին հայ սպաների հրամանատարությամբ գործող հայկական 6 կանոնավոր զումարտակներ:

Դա Կովկասյան ճակատում հայերի մարտական գործողությունների բարձր գնահատականն էր:

⁴⁰ Ռ Կ Պ Ռ Պ Ա, ֆ.521, ց.5, գ.492, ք.55-58:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատարի՝ 1916թ. մարտի հրամանով ռուսական բանակի առաջին հայկական գումարտակները համալրվելու էին նոր անձնակազմով՝ հիմնականում զինապարտներով և հայ սայաներով ու սպառազինությամբ՝ վերածվելով կանոնավոր բանակի զորամասերի: Նույն հրամանով կարգադրվում էր նաև յուրաքանչյուր հայկական հրաձգային գումարտակին կից ստեղծել հեծյալ-հետախուզական խումբ և հեծյալ արդինարների ու գնդացրային ջոկատներ: Մարտի 13-ին Կովկասյան բանակի շտաբի պետը բոլոր կորպուսների հրամանատարներին կարգադրեց հայկական նոր գումարտակներին հանձնել ցրման ենթակա կամավորական խմբերի շտաբները, զենքը և զինամթերքը: Հրամանով սահմանվեց նաև խմբերի վերակազմավորման կարգը, համաձայն որի 2-րդ կամավորական խումբը վերակազմավորվում էր 1-ին հրաձգային գումարտակի, 3-րդը՝ 2-րդ գումարտակի, 4-րդը՝ 5-րդ գումարտակի, 5-րդը՝ 4-րդ գումարտակի, 6-րդը՝ 3-րդ գումարտակի, 7-րդը՝ 6-րդ հայկական հրաձգային գումարտակի¹:

Կամավորական խմբերի կազմացրումից հետո հայ կամավորների մի մասը (3176 մարդ), հիասթափված ռուսական հրամանատարության քաղաքականությունից, ընդհանրապես թողեց զինվորական ծառայությունը, արտասահմանից եկածները վերա-

¹ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.15, թ.13-14:

դարձան սուն, 2000 մարդ համալրեց հայկական կանոնավոր գումարտակները²:

Հայկական 1-ին հրաձգային գումարտակը (հրամանատար՝ գեղապետ, հետագայում՝ գեներալ-մայոր Պավել Բեժանբեկ)³ կազմավորվեց 1916թ. հունիսին՝ Կովկասյան 39-րդ հետևակային դիվիզիայի կազմում⁴, 2-րդը (հրամանատար՝ փոխգնդապետ, հետագայում՝ գեղապետ Սերոբ Սամարցև)⁵ Ջուլֆայում (Հյուսիսային Իրան)⁵, 3-րդը (հրամանատար՝ գեղապետ Տեր-Նիկողոսյան)՝ Մա-

² Տե՛ս «Համառոտ տեղեկագիր Հայոց Ազգային Բյուրոյի գործունեության 1915-1917թթ. ընթացքում», Թիֆլիս, 1917թ., էջ 89:

³ Առաջին հրաձգային գումարտակի հրամանատար գեղապետ, հետագայում գեներալ-մայոր Պողոս (Պավել) Պետրոսի Բեժանբեկը (Բեժանբեկյան) ռուսական բանակի մարտական սպաներից էր: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ծառայել է Կովկասյան ճակատում, մասնակցել է ռազմական գործողություններին: Եղել է հայ կամավորական խմբերի (դրոժինաների) մարտական և տնտեսական գործունեությունը ստուգող և պատասխանատու սպա՝ Արարատյան դաշտավայրի քրդերի դեմ գործող ռուսական պատժիչ զորաջոկատի պետ: Այնուհետև ներգրավվել է Կովկասյան ճակատի հայկական կանոնավոր զորամասերի կազմակերպման գործին: 1912թ. դեկտեմբերի 6-ին ստացել է գեղապետի կոչում: 1916թ. մարտի 27-ին նշանակվել է 1-ին հայկական հրաձգային գումարտակի հրամանատար, աչքի է ընկել Երզնկայի գրավման ժամանակ: Մարտական զանազան սխրամքների համար պարգևատրվել է Սուրբ Ստանիսլավի 3-րդ և 2-րդ, Սուրբ Աննայի 3-րդ և 4-րդ «Արիության համար» մակագրությամբ, Սուրբ Վլադիմիրի 4-րդ և 3-րդ աստիճանի շքանշաններով: 1916թ. օգոստոսի 8-ին նշանակվել է Կովկասյան 22-րդ հրաձգային գնդի հրամանատար: 1917թ. հունիսի 1-ին հայկական գումարտակների վերակազմավորման և նրանցից նոր հայկական գնդեր կազմավորելու անհրաժեշտության մասին ռազմական նախարար Կերենսկուն զեկուցելու նպատակով որպես հայոց ազգային Բյուրոյի պատվիրակ՝ գործուղվել է Պետրոգրադ: Նույն թվականի սեպտեմբերի 11-ին նա նշանակվել է հայկական 1-ին հրաձգային բրիգադի հրամանատար: Կովկասյան ռազմաճակատի փլուզումից և ռուսական զորքերի հեռանալուց հետո պաշտոնաթող է եղել, սակայն 1918թ. մարտի 16-ին նշանակվել է հայկական համահավաք զորաջոկատի հրամանատար: Հայաստանի Առաջին հանրապետության իռչակումից հետո տեղափոխվել է Թիֆլիս և զբաղվել հայկական համահավաք զորաջոկատի կազմացման հարցերով: Տե՛ս *Послужной список генерал-майора Павла Бежанбека*, ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.1, ք.47:

⁴ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.15, ք.1-14:

⁵ Տե՛ս նույն տեղում:

բանդայում (Իրան), Կովկասյան ճակատի ռուս-պարսկական հատվածում գործող Ադրբեջանյան գորաջոկատի կազմում⁶, 4-րդը (հրամանատար՝ փոխգնդապետ Արտեմ Հովսեփյան)՝ Մարանդայում՝ Կովկասյան 70-րդ աշխարհագորային հեծյալ բրիգադի կազմում⁷, 5-րդը (հրամանատար՝ գնդապետ, հետագայում՝ գեներալ-մայոր Պավել Բեկ-Փիրումյան)՝ Մարանդայում՝ Կովկասյան 7-րդ բանակային կորպուսի կազմում⁸, 6-րդը (հրամանատար՝ փոխգնդապետ Միրայել Մելիք-Մուրադյան)՝ Մագիզյան ռուսական գորաջոկատի կազմում⁹: Այդ գումարտակները 1916թ. ամռանը մեկնեցին ռուս-մանգոլական 1-ինը էրզրում-Եմիքեյ-Մամախաթում-Երզնկա-Սվազ ուղղությամբ, 2-րդը, 3-րդը, 4-րդը և 6-րդը Մարանդա-Մագիզ-Ռևանդուզ-Քաննա-Քոքքան-Փենջվին ուղղություններով:

1917թ. հունվարի 1-ի դրությամբ հայկական 6 հրաձգային գումարտակներում ծառայում էր 5179 մարդ, որից 174-ը՝ սպա¹⁰: Նույն թվականի հունիսի 1-ի դրությամբ հայկական գումարտակների մարտական կազմը և տեղաբաշխվածությունը ներկայացնում էր հետևյալ պատկերը, 1-ին հրաձգային գումարտակ՝ 40 սպա, 930 զինվոր, 4 գնդացի, 2-րդ գումարտակ՝ 37 սպա, 713 զինվոր, 4 գնդացի, 5-րդ գումարտակ՝ 27 սպա, 1104 զինվոր, 24 գնդացի, իսկ 3-րդ, 4-րդ և 6-րդ գումարտակները՝ մտնում էին Կովկասյան 7-րդ կորպուսի կազմում¹¹:

Հայկական հրաձգային գումարտակները հատկապես աչքի ընկան 1916-1917թթ. Հյուսիսային Իրանում և Իրանական Զրդստանում տեղի ունեցած մարտական գործողություններում: Հայկական

⁶ Տե՛ս նույն տեղում, գ.17, թ.1-4:

⁷ Տե՛ս նույն տեղում, գ.18, թ.3-29:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ.19, թ.1-24:

⁹ Տե՛ս նույն տեղում, գ.20, թ.7-8, 9-11:

¹⁰ Տե՛ս Ռ Կ Պ Ռ Պ Ա, ֆ.2100, ց.1, գ.1, թ.44, թ.1-6, նաև նույն տեղում, գ.43, թ.15, 19:

¹¹ Տե՛ս նույն տեղում, թ.175-176:

1-ին գումարտակը 39-րդ դիվիզիայի կազմում (դիվիզիայի հրամանատար գեներալ-լեյտենանտ Դե Վիտտե, շտաբի սկտ գնդապետ Գ.Ղորղանյան) մեծ սխրանքներ գործեց Քիլքիթի և Երզնկայի շրջանում 1916թ. հունիսի 25-ից 27-ը տևած կատաղի մարտերում: Շտաբային զեկուցագրում ասված է. «Հունիսի 25-ի լույս 26-ի գիշերը հրամայվեց գրոհել քուրքական անառիկ դիրքերի դեմ: Հայկական 1-ին գումարտակը արագորեն կատարեց հանձնարարված առաջադրանքը, առաջանալով լեռնաշղթայի վրայով և միանալով հարևան զորամասերին՝ տիրեց Բալինբախի գյուղի մոտ գտնվող 2300, 2350 և 2660 բարձունքներին: Դրանից հետո քուրքերը, մեծ կորուստներ կրելով, հեծելազորի սլաշտայանությամբ սկսեցին նահանջել: Այս առաջին ճակատամարտի ժամանակ իր կազմավորումը նոր ավարտած գումարտակը դրսևորեց բարձր մարտական ոգի, հիանալի կարգապահություն և անդրդվելի սովորություն: Կորցնել ամբողջ անձնակազմի կեսից սովելին (55 տոկոսը) ու նորից գործը զլուխ բերել՝ հաճախ վեր է մինչև իսկ հին ու փորձված զորամասերի ուժերից»: Ջեկուցագրում նաև նշվում է, որ այդ արյունահեղ մարտերում «գումարտակը լիովին ջախջախեց ու փախուստի մատնեց քուրք երիտասարդության ծաղկից կազմավորված «Ավջի բարուր» (որսորդական գումարտակ -Մ.Ա.) կոչվող աշխարհագրային զորամասը, որը կազմավորվել էր գերմանացիների անմիջական մասնակցությամբ և միջոցներով»¹²: Հուլիսի 11-ին 39-րդ դիվիզիայի առաջապահ զորամասերի հետ հայկական 1-ին գումարտակը կատաղի մարտերից հետո առաջիններից մեկն էր, որ մտավ և զրավեց Երզնկան: 1916թ. աշնանը և ձմռանը և մինչև 1917թ. փետրվարը, զնդապետ Բեժանբեկի զլխավորած գումարտակը մեծ սխրանքներ գործեց նաև Երզնկա-Սվազ ուղղությամբ՝ ճափագանց դժվարին պայմաններում իրականացնելով առաջապահ և հետախուզական ծառայություններ:

¹² ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.15, ք.6,7:

Ռազմաճակատի սլաքակալան հատվածում իրեն լավագույնս դրսևորեց հայկական 3-րդ հրաձգային գումարտակը՝ գնդապետ Արտեմ Տեր-Նիկողոսյանի¹³ հրամանատարությամբ: 1916թ. հունիսի 22-ին, ավարտելով իր կազմավորումը, գումարտակը, որի կազմում կազմավորման պահին կար 800 մարդ, Ադրբեջանյան ռուսական զորաջոկատի կազմում ժամանեց Հայդարաբադ, իսկ հուլիսի 4-ին զորաջոկատի հրամանատար գեներալ Չերնոզուբովի հրամանով ուղարկվեց Գերդ-Սամրինդ՝ Ռւշլու գյուղից դեպի հարավ-արևմուտք՝ շրջակայքի հետախուզական և պահակային ծառայություններն իրականացնելու համար: Հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 9-ը գումարտակն անընդհատ արշավանքների, կռիվների և ընդհարումների մեջ էր: Տարվ 140 սպանված, 20 վիրավոր և անհայտ կորած՝ գումարտակն արյունահեղ կռիվներից հետո թուրքերից ազատագրեց Քելիշլի, Դուրու և Միակով գյուղերը: Քելիշլիում գումարտակը մնաց մինչև 1916թ. հոկտեմբերի 22-ը՝ իրականացնելով հետախուզական, պահակային դժվարին ծառայությունները և հաճախակի փոխհրաձգություններ ունենալով հակառակորդի գո-

¹³ Հայկական 3-րդ հրաձգային գումարտակի հրամանատար գնդապետ Արտեմ Եսայու Տեր-Նիկողոսյանը ավարտել է Թիֆլիսի հայկական հոգևոր ճեմարանը և Թիֆլիսի հետևակային յունկերական ուսումնարանը: Ռուսական բանակում ծառայել է 1878 թվականից: 1883թ. նրան շնորհվել է պրապորշչիկի, 1884թ.՝ պողպորուչիկի, 1888թ.՝ պորուչիկի, 1898թ.՝ շտաբս-կապիտանի, 1900թ.՝ կապիտանի, 1906թ.՝ փոխգնդապետի, 1911թ. դեկտեմբերի 12-ին՝ գնդապետի զինվորական կոչում: Եղել է վաշտի, ապա գումարտակի հրամանատար: Հայկական գումարտակի հրամանատար է նշանակվել 1914թ. հունիսի 9-ին: Մարտական զանազան ծառայությունների համար սլաքակալան Մուրբ Աննայի 3-րդ (1909թ.) և Մուրբ Ստանիսլավի 2-րդ աստիճանի (1912թ.) մարտական շքանշաններով: Տե՛ս Список полковникам по старшинству, СПб., 1916, с. 119: 3-րդ գումարտակի զոհված քաջարի հրամանատարներից էր շտաբս-կապիտան Մուրեն Բազյանցը: Շուշիի ռեալական գիմնազիան ավարտելուց հետո սովորել է Կիևի Մուրբ Վլադիմիրի համալսարանում: 1915թ. ավարտել է Կիևի յունկերական դպրոցը և տեղափոխվել Կովկասյան ճակատ: Միտանքների և քաջության համար սլաքակալան Մուրբ Աննայի 3-րդ և 4-րդ, Մուրբ Ստանիսլավի 3-րդ և Մուրբ Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշաններով: Տե՛ս Армянский Вестник, М, 1917, №32, стр.12:

քամասերի հետ: 1916թ. վերջին և 1917թ. ձմռանն ու գարնանը, 3-րդ գումարտակը անցկացրեց Նալուսում, որտեղ ծանր բնակլիմայական պայմաններում, հաճախ մահ կիսաքաղց և վատ հանդերձավորված վիճակում զանազան արյունահեղ մարտեր ունեցավ քուրքական ուժերի հետ¹⁴:

Պարսկական ռազմաբեմում իրենց փայլուն դրսևորեցին 4-րդ և 6-րդ հայկական հրաձգային գումարտակները, որոնք մեծ սխրանքներ գործեցին Իրանական Քրդստանում տեղի ունեցած մարտական գործողություններում: Փոխգնդապետ Ա.Հովսեփյանի զվարավորած 4-րդ գումարտակը 1916թ. հունիսի 10-ից մինչև օգոստոսի 23-ը անընդհատ արշավանքների և կռիվների մեջ էր: Հունիսի 17-ի լույս 18-ի զիշերը փայլուն իրականացված առաջխաղացման հետևանքով հայկական 4-րդ հրաձգային գումարտակը կոտրեց քուրքերի ամուր կազմակերպված պաշտպանությունը, գրավեց Սեր-Սիրդաղ լեռան բարձունքները: Մեկ օր տևած համառ կռվում գումարտակը տվեց 4 սպանված և 53 վիրավոր¹⁵: Հուլիսի 18-ին, գումարտակը հայկական 6-րդ հրաձգային գումարտակի հետ միասին գրավեց Փենջվինը: Քաղաքի և նրա շրջակա բարձունքների համար մղված արյունահեղ մարտերում 4-րդ հայկական գումարտակը տվեց 9 սպանված և 80 վիրավոր¹⁶: Հուլիսի 31-ի լուսաբացին հայկական 4-րդ գումարտակը, ռուսական զորամասերի հետ միասին քեժ մարտերում տիրելով շրջակա բարձունքներին, գրավեց կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող կետ՝ Սազիզը: Այդ հաղթանակի, մասնավորապես Սազիզի շրջակա 1027 բարձունքը գրավելու կապակցությամբ Սազիզյան զորաջոկատի պետ գեներալ Կուլբեյակինը փոխգնդապետ Հովսեփյանին հղել է հեռագիր, որում ասված էր. «Շնորհավորում եմ գումարտակին առաջին հաղթանակով և մարտական մկրտությամբ: Շնորհակալություն

¹⁴ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.17, ք.1-4:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, գ.18, ք.27:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, ք.28:

մարտական փայլուն աշխատանքի համար: Այսօր անձամբ եղա Ձեր գրաված անառիկ դիրքերում և տեղում գնահատեցի այն հաղթահարած հայ հրաձիգների ջանքն ու սխրագործությունը»¹⁷:

Հայկական գումարտակի սխրագործությունը և անձնվիրությունը բարձր գնահատեց նաև կորպուսի հրամանատար գեներալ Չերնոզուբովը: Գեդապետ Հովսեփյանին հղած նրա հեռագրում ասված էր. «Սրտանց ուրախ եմ Ձեր գլխավորած կտրիճների փայլուն գործունեությունից: Թող օգնի Ձեզ աստված և հետագայում»¹⁸: Սազգի գլխավորմից հետո գումարտակը երկրորդ անգամ աչքի ընկավ Բաննայի շրջանում օգոստոսի 16-ից 25-ը տևած արյունահեղ մարտերում: Օգոստոսի 17-ին գումարտակը մի քանի սրընթաց գրոհներից հետո թշնամուց գրավեց Քուրքուլա լեռը: 1917թ. մարտի 2-ին գումարտակը գրավեց Մունջը, մարտի 4-ին՝ Բաննա քաղաքը: Այդ հաղթանակի առթիվ Թավրիզի գորաջոկատի պետ գեներալ Նազարովը փոխգնդապետ Հովսեփյանին հղել է հեռագիր, որում ասված էր. «Շնորհավորում եմ կտրիճ հրաձիգներին և նրանց հրամանատարին՝ հաջողության կապակցությամբ: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում 4-րդ հայկական վաշտին»¹⁹: Ընդհանրացնելով հայկական 4-րդ հրաձգային գումարտակի մարտական գործունեությունը, գեներալ Կուլեբյակինը իր հուշերում գրել է. «Հետևելով հայկական 4-րդ հրաձգային գումարտակի մարտական գործունեությանը՝ չի կարելի չհամզել այն եզրակացության, որ այն անբասիր էր: Արշավանքներում նրա ցուցաբերած դիմացկունությունը, համառությունը հանձնարարված մարտական առաջադրանքների կատարման գործում, գումարտակի բոլոր պաշտոնյաների զիտակցական վերաբերմունքը իրենց՝ բացառապես ծանր պարտականություններին և զրկանքների նկատմամբ անտրտնջությունը՝ հատկապես ռազմական գործողությունների այնպիսի

¹⁷ Նույն տեղում, թ.14:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, թ.17:

ղծվարին, հեռավոր շրջաններում, ինչպիսիք էին Մոուզ-Բուլալ-Բաննան և վերջապես հայ հրաձիգների քարձր հայրենասիրությունը՝ ահա գումարաակի այն դրական կողմերը, որոնք բնորոշ են քարձր կարգապահություն ունեցող և ճիշտ կազմակերպված գորամասերին»²⁰:

Հայկական 6-րդ հրաձգային գումարտակը փոխգնդապետ Միրայել Մելիք-Մուրադյանի²¹ գլխավորությամբ մեծ սխարանքեր գործեց Ռևանդուզի շրջանում 1916թ. օգոստոսի 6-ից մինչև 10-ը տեղի ունեցած կատաղի մարտերում: Հայկական 6-րդ գումարտակի գործուրությունների մասին նրա հրամանատար փոխգնդապետ Մելիք-Մուրադյանի զեկուցագրից երևում է, որ օգոստոսի 6-ին առավոտյան Մայլան-Բալաքզինո կիրճի մոտ՝ 1019 բարձունքում, կենտրոնացված գորաջոկատը, որի կազմի մեջ մտնում էր նաև 6-րդ հայկական հրաձգային գումարտակը, շարժվել է Քալաթա, Լեդվին և Խրինվիչ գյուղերի ուղղությամբ: Նախօրյակին՝ օգոստոսի

²⁰ Նույն տեղում, ք.29:

²¹ 6-րդ հրաձգային գումարտակի հրամանատար՝ փոխգնդապետ Միրայել Մելիք-Մուրադյանը ծնվել է 1868թ. Հին Նախիջևանում, ավարտել է Երևանի գիմնազիան և Թիֆլիսի Միխայիլովյան սպայական ուսումնարանը: Ապա 17 տարի ծառայել է 156-րդ Ելլզավետյան զնդում, որի կենտրոնը (շտաբը) գտնվում էր Սարիղամիշում: Մասնակցել է 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմին: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին ուղարկվել է ռուսական բանակի Կովկասյան ռազմաճակատ, որտեղ ծառայության է անցել 39-րդ հրաձգային դիվիզիայի շարքերում, աչքի ընկել Կարինի գրավման ժամանակ, որի համար նրան շնորհվել է փոխգնդապետի գինվորական կոչում: 1916թ. ամռանը՝ հայ կամավորական խմբերի կազմացումից հետո, նա նշանակվել է հայկական 6-րդ հրաձգային գումարտակի հրամանատար և ամբողջ երկու տարի գործել է Ռևանդուզ-Մոսուլի ուղղությամբ: Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումից հետո ծառայության է անցել հայկական բանակում: Նրան շնորհվել է զեներալ-մայորի գինվորական կոչում, Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1921թ. հունվարին, ձերբակալվել է և նետվել Երևանի բանա: 1921թ. փետրվարյան սպստամբության ժամանակ ազատվելով բանտից՝ նշանակվել է Երևան քաղաքի ինքնապաշտպանության պետ: Ասպտամբության ճնշումից հետո անցել է Թավրիզ, որտեղ սպրել է մինչև կյանքի վերջին օրերը: Տե՛ս ՎԷՄ ամսագիրը, 1937թ., № ԺԸ, էջ 93:

5-ին, գումարտակի 3-րդ վաշտը ուղարկվել էր Բարդեգերք լեռան 1022 բարձունք՝ գորաջոկատի աջ թևի առաջխաղացումը ապահովելու համար: Բարդեգերք լեռան շրջանում 3-րդ վաշտը հանդիպելով հետևակ և հեծյալ զինված քրդերի խմբերին, ուժով ետ է քշել դեպի Քանի-Մուլյա և Լեղվին գյուղերի շրջակայքը: Գումարտակի մյուս վաշտերը ամսի 6-ին՝ առաջխաղացման ժամանակ, ենթարկվել են հրետանական լեղվին գյուղի մոտ գտնվող 873 բարձունքից: Գումարտակը, ամբողջ կազմով անցնելով հարձակման, հակառակորդին՝ րվով հետևագործի մեկ գումարտակ և մեկ հեծյալ գունդ, դուրս է քշել բարձունքից և ուժով ստիպել նահանջել դեպի Շինազանք գյուղը: ... Օգոստոսի 9-ին՝ ժամը 14-ին, ամբողջ գորաջոկատի ընդհանուր հարձակման ժամանակ անցնելով սվինամարտի՝ 3-րդ վաշտը թուրքերին դուրս է քշել խրամատներից՝ 17 զինվոր վերցնելով գերի: «Այդ պահից ի վեր սկսվեց հակառակորդի ընդհանուր անկանոն փախուստը, որը նահանջեց ընդհուպ մինչև Խանե գյուղի փլատակների մոտ, որտեղ տեղակայվելով՝ կարճ ժամանակահատվածում որոշ դիմադրություն ցույց տվեց՝ բացելով գնդացրային և հրացանային կրակ: Հայկական 6-րդ հրաձգային գումարտակը, հետապնդելով թուրքերին, հասավ մինչև Շեյխին-Հարուսի կիրճը, այնտեղից գորաջոկատի հրամանատարի հրամանով նա վերադարձավ Դրիփկի գյուղը», – գրել է Մելիք Մուրադյանը²²:

1917թ. գարնանը և ամռանը գումարտակն անընդհատ կռիվների և ընդհարումների մեջ էր: Մարտի 24-ից մայիսի 10-ը գումարտակը մեծ սխրանքներ գործեց Բաննայի շրջանում: Այդ գումարտակի գործողությունների մասին շտաբային զեկուցագրում ասված է. «Հայկական 6-րդ հրաձգային գումարտակը Սազիզյան գորաջոկատի կազմում մարտ ամսից տեղակայվելով Բաննայից 8 վերստ հեռավորության վրա գտնվող Դերկաղեյխան գյուղում, իրականացնում էր պահակագորային և հետախուզական ծառայություն

²² ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.20, ք.7-8:

Ուշքուրմիլի, Բաղվանի և Մազգի ուղղությամբ: ... 1917թ. մարտի 24-ին քուրքական հետախույզները հարձակում գործեցին մեր գումարտակի 835 բարձունքի վրա գտնվող պահակաջոկատի վրա, որը գտնվում էր Բաննայից հարավ՝ Դերկադեյխանից 8 վերստ հեռավորության վրա: Հակառակորդը, շրջապատելով առջևում գտնվող պահակաջոկատին, որտեղ գտնվում էր 3-րդ վաշտի կրտսեր սպա պրապորշչիկ Սարգսյանցն իր դասակով, փորձում էր այն գրավել: Սակայն պրապորշչիկ Սարգսյանցը, ոգևորելով մարդկանց, ինքն առաջինը նետվեց գրոհի և ճեղքելով թշնամու շղթան՝ հետապնդեց քուրքերին: Տեսնելով դա, հակառակորդը հրաժարվեց իր փորձերից և դիմեց փախուստի: Այդ մարտում հերոսի մահով ընկավ պահակաջոկատի պետ՝ պրապորշչիկ Սարգսյանցը և իր մահով հավերժացրեց սխրագործությունը: ... Մարտի 28-ին՝ գիշերը, հակառակորդը մեկ վաշտի ուժով հարձակվեց 835 բարձունքի շրջանում գտնվող ուղեկալի վրա: Ուղեկալի պետ՝ 3-րդ վաշտի կրտսեր սպա պրապորշչիկ Խեչուկը, իր դասակի հետ միասին, չնայած հակառակորդի երկու համառ գրոհներին, արհաբար պաշտպանեց ուղեկալը և չնայած թշնամու թվալին առավելությանը և գիշերային մարտավարության դժվարություններին՝ ստիպեց քուրքերին նահանջել: Այդ սխրանքի համար պրապորշչիկ Խեչուկը ներկայացվեց Սուրբ Վլադիմիրի շքանշանի՝ ժապավենով և սրով²³»:

Նույն թվականի ապրիլի 12-ի գիշերը հակառակորդն ավելի քան մեկ վաշտի ուժով հարձակում գործեց 787 բարձունքում տեղակայված 6-րդ գումարտակի պահակաջոկատի վրա: Գրավելով 787 բարձունքը՝ հակառակորդը առավոտյան 4-րդ վաշտի քաջարի հակահարձակմամբ պողպորուչիկ Ղազիյանցի ժամանակավոր հրամանատարությամբ, որը, գտնվելով մարտական շղթայի առջևում, հակառակորդի հարձակման ընթացքում անձամբ էր ղեկավարում մարտը, ուժով կանգնեցվեց և նահանջեց: Այդ մարտում ցուցաբերած սխրագործության համար պողպորուչիկ Ղազիյանցը

²³ Նույն տեղում, ք.9-11:

ներկայացվեց Սուրբ Աննայի 4-րդ շքանշանի «Արիության համար» մակագրությամբ: ... Մայիսի 9-ի գիշերը լույս 10-ին հակառակորդը մեկ վաշտ և 50 սուվարի ուժով հարձակում իրականացրեց նաև 1017 բարձունքի սլահակագործի բռնած դիրքի ամբողջ ճակատով մեկ: Հարձակումը սկսվեց ժամը 24-ին և ավարտվեց լուսաբացի մոտ: Բարձունքի աջ թևում գտնվող մեր դաշտային սլահակագործը շրջանցվեց և շրջապատվեց հակառակորդի կողմից: Սակայն 2-րդ վաշտի ֆելդֆելբել Բալայանը, 20 զինվորների հետ միասին նետվելով գրոհի, ստիպեց հակառակորդին նահանջել: Հակառակորդի հարձակումներն ամբողջ ճակատով մեկ կանգնեցվեց մեր «դիպուկ կրակոցներով»: Նույն գեկուցագրում նշվում է, որ քուրքական գորբերի դեմ մղած այդ մարտերում աչքի ընկան նաև 6-րդ հրաձգային գումարտակի 1-ին վաշտի հրամանատար Հարություն Խաչատուրյանցը, պրապորշչիկ Հովհաննես Խոջայանցը, Տեր-Մարգարյանցը, ֆելդֆելբելներ Իվան Եսայանցը, Ավետիք Միքոյանը և ուրիշ շատ հրաձիգներ²⁴: Նույն քվականի ամռանը գումարտակը մեծ սխրանքներ գործեց նաև Փենջվիհի շրջանում: Հունիսի 15-ից 17-ը տևած արյունահեղ ճակատամարտում գումարտակը գրավեց Բիստանը և նրա անառիկ համարվող դիրքերը: Հայկական 6-րդ գումարտակի գործողությունների մասին ճակատամարտի անմիջական մասնակից՝ նույն գումարտակի պրապորշչիկ Շահ-Պարոնյանը, գրել է. «Հունիսի 15-ին՝ գիշերը, ետ մղելով հակառակորդի երկու համառ գրոհները և չհասցնելով հանգստանալ, առանց կարգի բերվելու՝ առավոտյան ժամը 9-ին կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ իշխան Վոդրոյսկու ներկայությամբ գումարտակը հարձակման անցավ Բիստանի դիրքերի վրա՝ ամենադժվարին ու ուժգին զնդակոծվող հատվածում: Բռնելով որոշակի ճակատային ուղղվածություն, հրանոթային և հրացանային ուժգին կրակոցների ներքո չխախտելով իր մարտական շրջապական կարգը՝ գումարտակը արագ և համախմբված գրոհով համառ հակառա-

²⁴ Տե՛ս նույն տեղում:

կորդին դուրս բշեց խրամատներից և ժամը 10³⁰ լուսին տիրեց ճակատի նշանակված հատվածին՝ ամբողջին, որն ամբողջությամբ պաշտպանված էր խրամատներով: 1-ին վաշտը, տիրելով Բիստանի դիրքերի բարձունքին և ճանապարհին միանալով 3-րդ և 4-րդ վաշտերին՝ սկսեց հետապնդել փախուստի դիմած հակառակորդին սյնքան ժամանակ, մինչև որ նա քաքնվեց մոտակա լեռներում: 4-րդ վաշտի հրամանատար, պողպորուչիկ Խաչատուրյանցը, որի վաշտի մարտական հատվածը մոտ էր թուրքական հրանոթների դիրքերին, հակառակորդից գրավեց թուրքական գործող հրանոթը, որը վերջին կրակոցից հետո նահանջող հակառակորդը ուզում էր իր հետ տանել: Այդ սխրագործության համար պողպորուչիկ Խաչատուրյանցը ներկայացվեց 4-րդ աստիճանի Գեորգիյան խաչի, իսկ թուրքական հրետանին գրավելուն նպաստած չորս զինվորներ Գեորգիյան խաչով պարգևատրվեցին անձամբ ներկա գտնվող կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ իշխան Լոդբուլսկու կողմից²⁵: Այդ ճակատամարտում ձեռքից վիրավորվեց հետախույզների ջոկատի հրամանատար պողպորուչիկ Հրաչյա Մարաֆյանցը, որը վիրավորվելուց հետո էլ մնաց շարքում: Վիրավորվեցին, սպանվեցին կամ կաթվածահար եղան ևս 109 հրաձիգներ, վիրավորվածներից շատերը մնացին շարքերում: Անձնվիրությամբ ու փայլուն կատարեցին իրենց հանձնարարված մարտական առաջադրանքները վաշտերի հրամանատարները, աչքի ընկան կրասեր սպաներ՝ 1-ին վաշտի պողպորուչիկ Հարություն Տեր-Մաթևոսյանը, պողպորուչիկներ Արտաշես Ասլանյանցը և Անուշավան Ղազարյանցը, 2-րդ վաշտի պողպորուչիկ Աշոտ Չերկեզյանցը, պողպորուչիկներ Նիկիտա Յունցուլովը և Գերասիմ Տեր-Նիկողոսյանցը, 3-րդ վաշտի պողպորուչիկ Վախթանգ Մարտիրոսյանը և պրապորշչիկ Արտաշես Պետրոսյանցը, 4-րդ վաշտի պրապորշչիկներ Տիգրան Ալիխանովը և Գիրքորովը: Իրենց զլխավորած դասակների առջևից անվեհեր մարտի նեավելով՝

²⁵ Տե՛ս նույն տեղում:

նրանք ենթակայաների մոտ առաջ բերեցին այն հավատն ու հերոսությունը, որի ուժը ստիպեց հակառակորդին թողնել այնպիսի ուժեղ և ամրացված դիրքեր, ինչպիսին ունեն Բիստամը: Հատկապես աչքի ընկավ 4-րդ վաշտի կրտսեր սպա Իվան Դանիլովը, որը իր 10 մարտիկներով զնալով առջևից՝ հարվածով դուրս քշեց խրամատներում քարքնված հակառակորդին և դրանով հնարավորություն տվեց վաշտին արագորեն, քիչ կորուստներով շարժվել առաջ և գրավել Բիստամը: Գրավելով Բիստամի դիրքերը՝ գումարտակը տեղակայվեց նրա ձախ քետման՝ իրականացնելով սլահակագորային ծառայություններ: Գումարտակի սխրագործությունները շնորհավորեցին Կովկասյան քանակի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Պրժևալսկին և կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ իշխան Վոդրոյսկին: Գիվիզիայի հրամանատար գեներալ Կարպովը հեռագրով շնորհավորելով գումարտակին լավագույն գործերի համար, իր հպարտությունն էր հայտնում, առ այն, որ հայ հրաձիգները մտնում են իր դիվիզիայի կազմի մեջ»²⁶:

Ռազմական գործողություններում իրեն լավագույնս դրսևորեց նաև հայկական 5-րդ հրաձգային գումարտակը՝ գեղապետ Պավել Բեկ-Փիրումյանի գլխավորությամբ, որը կազմված էր հիմնականում դարաբարոցիներից: Գումարտակի հրամանատարությունը Պ. Բեկ-Փիրումյանը ստանձնել էր 1916թ. հուլիսի 9-ին²⁷: Գումարտակը 1916թ. հուլիսի 12-ից մինչև օգոստոսի վերջը անընդհատ արշավանքների, կռիվների և ընդհարումների մեջ էր: Հուլիսի 12-ին 5-րդ գումարտակը քեժ ճակատամարտից հետո փախուստի մատնեց հակառակորդին և գրավեց Կալեշինի կիրճը: Օգոստոսի սկզբին գումարտակը թուրքերին պարտության, սալա փախուստի մատնեց Սողիան գյուղի մոտ, որտեղ թշնամին կենտրոնացրել էր մեծաքիվ ուժեր: Հետապնդելով փախուստի դիմած թուրքերին՝ գումարտակը քեժ մարտերից հետո գրավեց Դուրու գյուղը: Դրանից մի քանի օր

²⁶ Նույն տեղում, ք.10-11:

²⁷ Стен Список полковникам по старшинству, СПб., 1916, с.253:

անց գումարտակը Դուրուից տեղափոխվեց Ջալդան և մտցվեց գեներալ-մայոր Ռիբալչենկոյի գլխավորած զորաջոկատի կազմի մեջ, որի կազմում ամենաակտիվ մասնակցությունը ունեցավ Պարսկաստանի Դրիքկա-Ռայյաթ գյուղի և Ասխաբա լեռան մոտ 1916թ. օգոստոսի 9-ին տեղի ունեցած նշանավոր ճակատամարտին, որտեղ ռուսական զորքերը գլխավին ջախջախեցին քուրքական 4-րդ (Դարդանեյյան) դիվիզիան: Այդ ճակատամարտում քացի մեծ ռազմական պաշարից, ռուսական զորքերին գերի հանձնվեցին 2000 քուրք զինվորներ և 60 սպա²⁸: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 5-րդ գումարտակը հայկական 4-րդ և 6-րդ գումարտակների հետ միասին գրավեց Բաննան: 5-րդ գումարտակի գործողությունների մասին նրա հրամանատար գեղապետ Բեկ-Փիրումյանը գրել է. «Երկարատև արշավանքներից մարդիկ բնավ մաշվել էին՝ չունենալով ոչ սպիտակեղեն, ոչ էլ կոշիկ, իսկ վերևի շորերից մնացել էին միայն սլառոված շինելները: Նրանք օրերով մնում էին քաղցած, սակայն չէին արտնջում՝ սրբորեն կատարելով իրենց պարտքը»²⁹: 1916թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, գումարտակը անցնելով պարսկա-քուրքական սահմանը, Բաննա-Սոուջ-Բուլաղ-Հայդարաբադ-Խոյ ճանապարհով, դեկտեմբերի 6-ին Բորուրի լեռնանցքով հասավ Վան: Դեկտեմբերի 13-ից մինչև 15-ը տևած կռիվներում գեղապետ Պավել Բեկ-Փիրումյանի գլխավորած գումարտակը մյուս զորամասերի հետ միասին անցնելով հարձակման՝ սրընթաց հարվածներով դուրս բջեցին քուրքական և նրանց օժանդակող քրդական ջոկատներին Վանի շրջակայքից, ազատագրեցին Արաման գյուղը և Ռոստանի ուժեղ ամրացած քուրքական դիրքերը: Թուրքերը ծանր կորուստներ կրելով՝ ստիպված նահանջեցին մինչև Սև լեռը³⁰:

Ռուսական բանակի հրամանատարությունը բարձր գնահատեց հայ հրաձիգների մարտական սխրագործությունները: Հրա-

²⁸ Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ.121, ց.1, գ.19, ք.1-24:

²⁹ Նույն տեղում, ք.4:

ձիգներից շատերը պարզևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով: Միայն 1917թ. հունիսի 15-ից 17-ը սևած Բիստանի (Իրան) ճակատամարտին մասնակցելու համար Գեորգիյան խաչի և այլ բարձր պարգևների էին ներկայացվել ավելի քան 68 հայ հրաձիգներ³¹: Զիչ չէր նաև գոհվածների քիվը: Այսպիսով, ռուսական 7-րդ բանակային կորպուսի կազմի մեջ մտնող հայկական 3, 4, 5, 6-րդ գումարտակները զանվում էին կորպուսի պատասխանատու ճակատներում: Գեներալ Գ. Դորդանյանի վկայությամբ զորասյան ռազմական գործողությունների և մարտերի ծանրությունը գրեթե ամբողջովին ընկել էր հայ հրաձիգների վրա, նրանց գործողությունները «ասպացուցում են մարտիկների բարձր ռազմական ոգին, կուռ կարգապահությունը և իրենց վրա դրված պարտքի կատարյալ գիտակցությունը»³²: Ռուսական բանակի առաջին հայկական հրաձգային գումարտակները հետագայում կազմեցին ձևավորվող հայկական ազգային բանակային կորպուսի հիմքը³³:

³⁰ Տե՛ս նույն տեղում, ք. 1-24:

³¹ Տե՛ս նույն տեղում, ք. 11:

³² «Հայրենիք», 1927, Բոսթոն, №12, էջ 117:

³³ Կովկասյան ռազմաճակատի հայկական ազգային զորամասերի ծավալման հետագա ընթացքի մասին հանգամանորեն տե՛ս Մ. Լ. Կարապետյան, Հայկական ազգային զինվորական կազմավորումները Կովկասյան ճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, «Հայկական Բանակ», 1999, №2, էջ 65-79:

ՀԱՎԵԼՎԱԾ
ПРИЛОЖЕНИЕ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ
ДОКУМЕНТЫ И МАТЕРИАЛЫ

Օդեսայի հայկական եկեղեցու ծխատիրոջ նամակը Թիֆլիս՝
հայոց ազգային Բյուրոյի նախագահին՝ տեղի հայության կողմից
ձեռնարկված ժողովարարության, հայ կամավորական
խմբերի ստեղծման և այլ հարցերի մասին

3 նոյեմբերի 1911թ.

Օդեսա

Մեծապատիվ պ.Սամսոն Հարությունյան.

Ստացվեցան Ձեր բոլոր հեռագիրները և հաղորդվեցան ինչ: Երկրորդ հեռագրին պատասխանեց Ձեզ իշխան Արղությանը: Փող հավաքելու գործը բավական խոջընդոտների հանդիպեցավ: Զաղաքապետը իրեն իրավունք չհամարեց թույլ տալ ո՛չ ժողովը և ո՛չ ժողովարարությունը. դիմեց գեներալ-նահանգապետին. նա էլ նույնպես իրեն իրավունք չհամարեց այդ. հարցրին Պետրոգրադ այնտեղից ամսի 1-ին միայն հեռագրով պատասխան եկավ, թե դա միմիայն գեներալ-նահանգապետի իրավասությանն է վերաբերում: Երեկ խնդիր տվի. չնականությունները մի երկու օր կհետևեն. հույս ունեմ, թեև դժվարությամբ, կիրակի, ամսի 9-ին ժողով գումարել և ժողովարարություն չեռնարկել: Բյուրոյի նշանակած գումարը՝ 50000 ռուբ. Օդեսայի համար շատ-շատ է. Օդեսայի անունն է մեծ, բնակիչները՝ դալլակ, նավահանգստի տաճկահայ բանվորներ, ծառայողներ և մի քանի հարուստներ: Ամեն ջանք գործ եմ դնում թե՛ եկեղեցում և թե՛ մասնավոր խոսակցության մեջ պատրաստել հասարակությունը այդ ուժից վեր պոհողությունն անելու, թոպեն լուրջ է և պատմական:

Կամավորների վերաբերյալ վերջին հեռագիրն էլ ստացա, այդպես էլ անում եմ: Թուրքին ասում եմ, որ իրենց գործին կենան և սպասեն իմ հրավերին: Այժմ քաղաքում կան 100 հոգույ ավելի կամավորներ: Սիմֆերոպոլից և Գրիգորիոպոլից էլ դիմում են ինչ իրենց առաջարկություններով: Թուրքիայից և Ռումինիայից էլ գալիս են ամեն օր 2-3-ական հոգի չոր ճանապարհով: Ոգևորությունը շատ մեծ է, և եթե ըստ կարելվոյն հագուրդ չտրվի՝ աստիճանաբար կսառի: Մինչև Թուրքիայի հարչակումը ճանապարհ էի դնում 20-30-40-ական հոգի Ռուսական ընկերության շոգենավերով: Ծանապարհները փակվեցան, վերջին խումբը՝ 135 հոգի, գնացին երկաթուղով

казенный счет: Սա իբրև բայառություն իմ խնդրով թույլ տվեց գեներալ-նահանգապետը: Ռիմումներիս հիման վրա մեր շտաբը հեռագրեց Կովկասյան շտաբին – Поступают многочисленные заявления армянодобровольцев, желающих поступать в армянскую дружину. Сообщите-подлежит ли они отправке по железной дороге на казенный счет? Պատասխան ստացվեցավ – не подлежат! Իբրև կամավոր են գնում մեծ մասամբ տանկահայ նավահանգստի բանվորները. աշխատանքը դադարել է, վաստակ չկա, և նորա, իհարկե, իրենց հաշվով Կովկաս գնալու հնարավորություն չունին. դժվարությամբ կարողանում են հավաքել նրանց ուտելեղենի ծախսը ճանապարհին. իսկ ով որ կարող է յուր ծախքով գնալ, նրանք չեն սպասում, որ ես նրանց ճանապարհ դնեմ, ինքնագլուխ են գնում: Բայց այդպիսիների թիվը քիչ է: Ուստի, եթե Բյուրոյի կողմից կամավորների պահանջ լինի, խնդրում եմ աշխատել ուր որ հարկն է, որ նրանց թույլ տրվի ճանապարհել երկաթուղով և պետական հաշվով: Այստեղ՝ շտաբում, փոխարքայի այդ մասին առաջարկությունը, անշուշտ կընդունվի և կկատարվի: Առանց այդ թույլտվության անկարող կլինեմ կամավորներ ուղարկել, եթե պահանջվի էլ:

Ի վերջո շատ ցանկալի կլիներ այդ գործի մասին Բյուրոյից որևէ հրահանգ ունենալ, այլև ստույգ տեղեկություններ Կովկասում տիրող հայկական գործունեության մասին այդ ուղղությամբ, որովհետև ամեն կողմից պանական տեսակ հարցեր են առաջարկվում թե՛ կամավորների կողմից, թե՛ հասարակության և թե՛ նամանավանդ մամուլի կողմից: Իսկ ես որոշ, հաստատ տեղեկություններ չունենալով, ոչինչ չեմ կարողանում հաղորդել: Մինչդեռ մամուլի միջոցով հասարակական կարծիք պատրաստելն ուղեկավարելը գործին նուկնիսկ դրամական տեսակետից, մեծ օգուտ կարող է բերել: Լրագիրները շատ են խոսում հայերիս մասին, բայց լուրերի մեծ մասը հերյուրված են և անճիշտ: Ցանկալի է, որ գաղութներիս կապը մայր հայրենիքի հետ լինի ոչ միայն դրամական, այլ ավելի խոր ու պինդ: Ժողովուրդը ազահորեն կլանում է ամեն բան, ինչ գրվում է մեր հայերիս մասին. պետք է այդ չգտման գոհություն տալ՝ մատակարարելով մաքուր և առողջարար սնունդ:

Հարգանքներով՝ Հովհաննես քահանա Չուբարյան
Одесса, Екатеринская 69,
Армянская церковь.
ЦГИА РА, ф.288, оп.1, д.1, л.11.

Ասխաբադի Հայ կամավորների օգնության կոմիտեի նամակը
Թիֆլիսի հայոց ազգային Բյուրոյին՝ գաղթօջախի հայության
խանդավառման, կամավորական խմբերի ստեղծման,
հանգանակության կազմակերպման և այլ հարցերի մասին

12 նոյեմբերի 1914թ.

Ասխաբադ

Ռուս-տաճկական պատերազմի սկսվելով, տեղիս գաղթավայրի հայերն ևս, իբրև հեռավոր հատված հայ ազգի, շարժվեցին, ոգևորվեցին ապագայի հավատով և խոստումնալի կյանքի արջալուսին և բուն ոգևորությամբ նետվելով ամենուրեք ծայր առած այս անօրինական եռուն գործունեության մեջ, կամեցան մի շարք ակտիվ շեռնարկություններով մասնակցել ընդհանուր շարժման այս համատարած պրոցեսին: Այս նպատակով կազմվեց հայ կամավորներին և նրանց ընտանյայ նպաստող տեղական կոմիտե՝ վեց անդամից բաղկացած, որի առաջին հոգսն եղավ տեղական երիտասարդությունից կազմել կամավորներին խմբեր, հոգալով նրանց հազուստի և ճանապարհի ծախսերը, և արդեն երկու խումբ, բաղկացած քառասուն հոգուց, ուղևորվել են Կովկաս՝ մտնելու հայկական վաշտերի մեջ: Վաղօրոք ներկայանալով տեղական ադմինիստրացիային և երկրիս կառավարչին և հայտնելով տեղական կոմիտեի և կամավորների խմբերի կազմակերպության մասին, և քաջալերության ու աջակցության խստումներ ստանալով՝ կամավորներին հանապարհ չգեցինք մեծ շուքով, ցույցերով և պինվորական նվազախմբի երաժշտությամբ: Երկաթուղու կայարանում կատարվեց հանդիսավոր մաղթանք, տեղի ունեցան ճառախոսություններ և ոգևորված ցույցեր: Բացի հավարավոր հայ և ռուս հասարակությունից, հայ հոգևորականությունից, ներկա էին նաև քաղաքային և պինվորական վարչություններից ներկայացուցիչներ, որոնք նույնպես ոգևորված ճառեր խոսացին, ցանկություններ արտահայտեցին և հայ կամավորներին օրհնելով և բարի ջանապարհ մաղթելով՝ բաժանեցին արծաթյա փոքրիկ խաչեր արծաթե շղթաներով:

Ներկայումս տեղական կոմիտեի տրամադրված է հանգանակությամբ և հույս ունի մոտ ապագայում փոխադրել Բյուրոյիդ մի համեստ գումար:

Բայի դրանից, պիտի լինի նաև ամսավճարների ժողովարարություն, որ կշարունակվի մինչև պատերազմի վերջանալը: Կոմիտետը կազմել է նաև տեղական կանանց հանձնաժողով, որ քանալով յուր արհեստանոցը՝ եռանդով պատրաստում է կամավորների համար տաք հագուստ և հանգանականություն անում դրամով, իրերով և մթերքներով: Կոմիտետս խնդրում է Բյուրոյիդ իրավել անել մեզ, թե ու՞ր և ու՞մ հասցեով պետք է փոխադրել և ուղարկել դրամը և իրերը: Խնդրում ենք թախանչագին, եթե հնարավոր է, ժամանակ առ ժամանակ գոնե շաբաթը մեկ անգամ, հաղորդել մեզ այն նշանավոր դեպքերի ու անցքերի մասին, որ կատարվում են հայության ու հայկական խնդրի շուրջ, որովհետև հապարավոր վերստերով կտրված ու անջատված հայրենիքից և հայության կենտրոնից, միմիայն կցկտուր ու աննշան տեղեկություններ ենք ստանում լրագիրներից, որոնք անկոր են լիուլի հագուրդ ու քավարարություն տալ մեր հուզված մտքերին և անհամբերությանը տրուվող սրտերին:

Ներկա գրության հետ ուղարկելով ռուսերեն լեզվով գրված մի պաշտոնական թուղթ, հանուն Բյուրոյի պնախագահի և այն պրովոկացիոն նամակի հավատարիմ պատճենը, որ ստացված է տեղիս միակ լրագիր "Асхабад"-ի խմբագրի անունով: Խնդրում ենք ամենակարճ միջոցում հանգստացնել մեր վերին աստիճանի հուզված մտքերը և փարատել այն բոլոր կասկածներն ու անհանգստությունները, որ պաշարում են մեր ամբողջ գոյությունը: Խնդրում ենք պատասխանել մեզ պաշտոնապես, նույնպես ռուսաց լեզվով, որ պիտի ծառայի մեզ իբրև հատուկ վենք մեր տեղական թշնամիների դեմ: Սակայն մինչև պաշտոնական գրության ստանալը, խնդրում ենք անմիջապես հեռագրական մի երկու քառով հանգիստ տալ մեր խոռովահույլ մտքերին:

Նախագահի կոմիտեի՝ (ստորագրություն)
ЦГИА РА, ф.288, оп.1, д.1, л.36-37.

№ 3

Տագանրոգի Հայկական կոմիտեի հեռագիրը՝
հայ կամավորների համար տաք հագուստ
պատրաստելու և առաքելու մասին

18 նոյեմբերի 1914թ.

Տագանրոգի Հայկական կոմիտեն պատրաստում է տաք սպիտակեղենի, վերնաշապիկների, վարտիքի, բաշլուղի (գլխանոցի - Ռ.Գ.), փորակապերի, ոտքի փաթաթանների, բամբակե բանկոնների, անթևը պզտուների 500 կումպլեկտ: Խնդրում են հեռագրեցեք պե՞տք են, արդյոք, պզեստի ինչոր առարկաներ:

Կոմիտեի քարտուղար, քահանա Օսկենտյանց
ЦГИА РА, ф.288, оп.1, д.114, л.140.

№ 4

Նամանգանի հայ հասարակության ներկայացուցիչների նամակը
Թիֆլիսի հայոց ազգային Բյուրոյի նախագահին՝
հայ կամավորների օգտին տեղի հայության
կազմակերպած օգնության մասին

23 նոյեմբերի 1914թ.
Նամանգան

Մեծարգո պրն.Ս.Հարությունյան,

Նամանգանի հայ հասարակությունը, իմանալով տանկայ դեմ կռվող հայ կամավորների կարիքը, հավաքել է իր մեջ ներքնապզեստներ, որը և ուղարկում ենք սույն նամակով: Տաք ներքնապզեստների հավաքումը շարունակվում է, որը շարունակաբար կողարկվի: Ուղարկված հագուստեղենը ստանալույ խնդրում ենք լրագրության միջոցով հայտնեք: Լրագրության միջոցով հայտնելու մեր ցանկությունը այն նպատակը աչքի առաջ ունենք, որ տեղական ժողովուրդը իմանալով, որ իր տվածը լրագրում գրված է, ապագայում ավելի առատաչեռն կլինի: Ավելի լավ կլինեք, եթե «Հորիպոնի»

կամ «Արևի» միջոցով հայտնվեր ուղարկված իրերի ցուցակը: Իսկ փող հանգանակելու համար արդեն ընտրված է տեղական հասարակությունից մի հանչնաժողով՝ հինգ հոգույ բաղկացած, որոնք ընտրված են ազգային Բյուրոյի ներկայացուցիչ պրն.Կափյանյի ներկայությամբ, որոնք արդեն սկսած են հանգանակումը:

Մնամք հարգանք ի տեղի հայ հասարակության...

Հ.Չ. Այստեղ հավաքած ունենք բավականին շորեր հայ գաղթականների համար: Խնդրում ենք նեղություն կրեք հայտնելու՝ ու՞մ հասցեով ուղարկենք և ու՞ր:

ЦГИА РА, ф.221, оп.1, д.1, л.10.

№ 5

Նոր Նախիջևանի հայության հեռագիրը՝

Թուրքիայի դեմ սկսված պատերազմում ռուսական բանակին աջակցելու նախիջևանահայերի ցանկության մասին

1914թ.

Թուրքիայի դեմ պատերազմ սկսվելու կապակցությամբ Նոր Նախիջևանի հայության շրջանում հսկայական վերելք է սկսվել: Եկեղեցու հրապարակում կայացած հավաքում հայ հոգևորականությունը աղոթքներ ու մաղթանքներ է հղել ռուսական զենքի հաջողություններին: Տեղի ունեցած բոցավառ ելույթներում հայ հոռետորները զայտուն կերպով շեշտել են Մեծ Ռուսաստանի պատմական առաքելությունը Արևելքում: Ըստմահապարանոց թափուրը թագավորի և թագաժառանգի պատկերներով ու նվազախմբով շարժվեց դեպի հարևան Ռուստով՝ ի ցուցադրություն քաղաքապետ անդլիական, ֆրանսիական ու քելզիական հյուպատոսների: Եղանակը բարեհաճ էր հանդիսությունների համար: Միապետին ուղարկվեցին հավատարիմ հպատակության զգայմունքի հեռագրեր և ողջուններ Վորոնյով-Դաշկովին, Սալոնովին ու զլխավոր հրամանատարին: Ծատ հայեր ցուցակագրվեցին հայկական կամավորական ջոկատներին, հավաքեցին նվիրատվություններ:

Առաջնորդական տեղապահ, վարդապետ Գևորգ

Հավատարմատար Չախուշյան

ЦГИА РА, ф.288, оп.1, д.114, л.92.

Ղարաբաղի Հայոց «Եղբայրական օգնության» Բյուրոյի նամակը
Թիֆլիսի հայոց ազգային Բյուրոյին՝ երկրամասում հալ
կամավորական խմբերի ստեղծման մասին

11 դեկտեմբերի 1914թ
Ծուշի

Ղարաբաղի հայոց «Եղբայրական օգնության» Բյուրոն սկսելով յուր գործունեությունը սույն թվականի հոկտեմբեր ամսի վերջին օրերի յուր բոլոր ջանքը գործադրել է հայ կամավորների օգնության և գաղթականներին խնամելու համար միջոցներ հայթայթել: Ծուշի քաղաքի հայ ազգաբնակչությունը, չնայելով նյութական սուղ դրության, այնուամենայնիվ, ամսական կամավոր վճարներով շարունակում է օգնել մեր չեռնարկած անհրաժեշտ գործին: Տանկահայ գաղթականների անմխիթար դրությունն արչագանք գտավ նաև մեր շրջանում, ուստի Ղարաբաղի հայոց ազգային Բյուրոն անհրաժեշտ համարեց իր ժողոված գումարից իսկույն կեթ 500ռ. փոխադրել Թիֆլիսի հայոց ազգային Բյուրոյին՝ տանկահայ գաղթականներին խնամելու համար: Տեղվույս Բյուրոն մոտ օրերս կուղարկի նաև տաք հագնելիք ու այլ մթերքներ հայ կամավորների և գաղթականների համար՝ դարչյալ Թիֆլիսի ազգային Բյուրոյի միջոցով:

Քայց Ղարաբաղի հայոց ազգային Բյուրոն գտնում է, որ ներկա պատմական օրերին, երբ պետք է ամեն միջոցով օգնության գալ տարազիր տանկահայ ժողովրդի դատի պաշտպանության, Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը կարող է և պետք է ավելին անե, եթե ոչ դրամով, գոնե օգնական ուժերով: Զանի որ Ղարաբաղի հայ ժողովուրդն ևս իրապես պզուց է, որ ներկայումս Տանկահայաստանում հայի ինքնուրույն գոյության խնդիրն է ասպարեզի վրա դրած, և այդ հարցի հաջող լուծման պետք է նպաստենք բոլոր հայերս, նա չէ կարող անտարբեր մնալ հայի այս ճակատագրական թուպելին և նա պատրաստ է ամեն պոհողություն հանչն առնել և յուր մասնակցությունը ցույց տալ մեր հայրենիքի սրբապան գործին: Պատմական նշանավոր թուպելներին Ղարաբաղի հայ ժողովուրդը հանդես է բերել յուր ուժերը՝ հայրենիքի բարօրությանը ծառայելու: Տանկահայ դաշտի պաշտպանության համար նա տվել է մի շարք ակնավոր հերոսներ: Ներկայումս, երբ ամբողջ հայությունն յուր բարոյական և նյութական ուժերն է ասպարեզ հանել ազգային

գործին կոհաբերելու համար, Ղարաբաղի հայերն ևս պատրաստ են կամավորների գնդով օգնության գնալ Տաճկահայաստանում գործող մեր եղբայրներին:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ կամավորների նոր խմբերի կարիք, անշուշտ, պիտի պայցվի մոտ ապագայում՝ Ղարաբաղի հայոց «Միջադարձային օգնության» Բյուրոն որոշել է օգուտ քաղել տեղվույս հայ ապագաքնակչության այդ տրամադրությունից և ընտիր ու պատրաստված փորձառու ուժերից կազմել չիավոր ու հետևակ կամավորների մի խումբ: Բյուրոն հույս է տածում, որ իր շեղքով կազմած դարաբաղյի կամավորների այդ գունդը թե՛ քարոյապես և թե՛ գործնական մասնակցությամբ մեծ նեցուկ կարող է լինել ներկայումս գործող հայ կամավորներին:

Ղարաբաղի հայոց «Միջադարձային օգնություն» Բյուրոն հայտնելով Ձեզ այդ մասին՝ կարևոր է համարում յուր շեղնարկելիք սույն անհրաժեշտ գործի նկատմամբ իմանալ Ձեր կարծիքն ու ըստ այնմ գործի անցնել:

Նախագահ Բյուրոյի (ստորագրություն)

Լևոն Գարստուղար (ստորագրություն)

ЦГИА РА, ф.288, оп.1, д.4, л.2.

№ 7

Հաշոց ազգային Բյուրոյի հերթական նիստի արձանագրությունը կամավորական և գաղթականության հարցերի վերաբերյալ

27 դեկտեմբերի 1914թ.

(Առավոտյան)

Թեմիս սրբապան առաջնորդի նախագահությամբ և գավառական պատգամավորների մասնակցությամբ:

Ժողովս լսեց գավառական պատգամավորների տեղական գործունեության մասին կարճատև զեկույումներ, որից, ի միջի այլոց, երևաց, որ

ա. Ախալցխայի տեղական կոմիտեն փողի ժողովարարությունը ամսական տուրքերի միջոցով է անում: Հավաքած փողերի մի մասը ծախսում է պատերազմից բխած տեղական պետքերի վրա:

բ. Ալեքսանդրապոլի կոմիտեն՝ նույնպես: Տեղական կոմիտեի անդամների թիվը մեծ լինելու պատճառով գործունեությունը դանդաղ է ընթանում:

գ. Աստրախանի կոմիտեն ընտրված է ծխական ժողովով և բաղկացած է 20 մարդուց: Մինչև այժմ հավաքված է մոտ 38 հապար ու, որից 35 հապարը ուղարկված է Թիֆլիս: Գործունեությունը սեկյիաներով է կազմված է առանչին կանանց կոմիտե: Փողի փոքրիկ մասը գործադրում են տեղական պետքերի վրա: Մտադրություն կա հայերեն թերթ հրատարակել: Պատգամավորը գանգատվում էր, որ Թիֆլիսի կոմիտեն սիստեմատիկ կերպով անպատասխան էր թողնում Աստրախանի կոմիտեի նամակներն ու հեռագրերը, մինչև անգամ ուղարկած գումարի մասին տեղեկություն չէր ստացված: Աստրախանի հայ հասարակությունը առանչին հանգանակությամբ քայ է արել մի հիվանդանոց:

դ. Ղերբենտի կոմիտեն ցանկություն է հայտնում պաշտոնական իրավունք ստանալու գործունեության համար:

Կոմիտեին կից կազմված է կանանց կոմիտե՝ գաղթականների գործով պրաղվելու համար և մի հանչնաժողով՝ կամավորների գործի համար: Մտադրություն կա սեփական լապարեթ քանալու. ինքնապաշտպանության հարյը նրանց էլ պրաղեցնում է:

ե. Յուշվա կոմիտեի սկիպը դրել է պ.Կաֆյանը, հետո այդ շրջանը լայնացել է, տուրք է նշանակված քաղաքի բոլոր հասարակության վրա, մինչև այժմ հավաքվել է 2400ո.: Թիֆլիսում դարաբաղյիների կոմիտեն նույնպես հավաքել է 2000ո.: Փախստականներին ուղարկված է 500ո. և շորեղեն: Առանչին հանչնաժողովներ են կազմված՝ բարեգործական և ինքնապաշտպանողական:

զ. Ղամարլուի կոմիտեն փող է հավաքում ամբողջ գյուղացիներից. տուրքը կամավոր է հավաքվում և ամսական 1000-15000ո. փողը ուղարկվում է «Հորիպոնի» միջոցով: Յուշակագրված է 4000 մարդ՝ իբրև կովող ուժ. ցուրակ է կազմված պենքերի: Գաղթականներին օգնելու գործը նույնպես դրված է կանոնավոր հողի վրա:

է. Ղարսի կոմիտեն հիմնել է Զաբաջանյանը: Բյուրոն սեկյիաների է քաժանված՝ կամավորների, վիրավորների, ինքնապաշտպանության և դրամական: Մոտ 12-15 հապար ո. ծախսված է փողով և շորով: Գոյություն ունի օժանդակիչ կանանց խումբ: Գաղթականներին օգնելու գործով ևս պրաղվում է կոմիտեն:

ը. Անդիժանի և Կոկանդի կոմիտեն պ.Կաֆյանի գալով կանոնավորվել է: Հավաքած գումարները ուղարկելու են Թիֆլիս. այդ կողմերում հույս կա 50 հազար հավաքել: Կամավորներ ուղարկված են և կան ցանկացողներ: Ինքնապաշտպանության գործը հույս կա կազմակերպելու ռուսների և վրացիների հետ միասին. տեղական մահմեդականների, այսինքն ...* մեջ անտարակույս պտտում են էմիսարներ Տաճկաստանից: Տեղական կոմիտեին կից կա կանանց Կարմիր խաչի կոմիտե: Խնդիր է հարույված հայ կամավորների ընտանիքներին ևս հատկացնել արքունական գանչարանից պայուկներ: Ուշադրության հանգամանքն այն է, որ տեղիս բարձր իշխանությունը գերմանացիներից է կազմված:

թ. Նոր Այապետի կոմիտեին գլխավորապես սբաղեցնում է ինքնապաշտպանական հարցը: Տեղիս գավառապետը անվերջ արգելքներ է հանդիսացնում կոմիտեի գործունեությանը: Գործունեության գլխավոր առարկաներն են կամավորների և գաղթականների հարցերը: Փողը հավաքվում է թե՛ քաղաքում և թե՛ գավառում. մի մասը ուղարկվել է:

ժ. Ստավրոպոլի կոմիտեն կազմված է 18 հոգուց և ընտրված է ծխական ժողովով: Կոմիտեին կից կազմված է կանանց կոմիտե, որը գլխավորապես սբաղվում է գաղթականների գործով: Փողի հանգանակությունը սկսվել է և կարող է տալ մինչև 10000ռ. միայն Ստավրոպոլում, գյուղերը չհաշված: Թիֆլիսի Բյուրոյի հետ գրեթե հարաբերություն չեն ունեցել. այդ պատճառով էլ մինչև այժմ չեն կարողացել պարզել ինչ բանի վրա իրավունք ունեն ծախսելու և կամ ումը պետք է ուղարկել. ուղարկել են 15 կամավոր: Հայ կամավոր խմբերի մեջ ուլում են մասնակցել ռուսները:

ի. Եկատերինոգրի կոմիտեն կազմված է Թիֆլիսից ստացված հեռագրի հիման վրա և կոչվում է «Комитет по организации дружины» և ճանաչված ու ընդունված է կառավարության կողմից: Ռուսների և իշխանության վերբերմունքը դեպի կամավորները և դեպի հայերը շատ լավ է: Կոմիտեին կից կազմված է մասնաճյուղ հիվանդանոցի համար. հիվանդանոցն ունի 60 մահճակալ և 2500ռ. բյուջե: Ժողովավարությունն արդեն սկսվել է: Կոմիտեի նախագահն է Ա.եղ. Տեր-Պետրոսյան, փոխնախագահը՝ Նիկ. Սաթունյան: Առանչին խնամքով կազմվել է կամավորների խումբը, որի բոլոր պիտույքները հոգացել է տեղական կոմիտեն:

* Հաջորդ մեկ բառն անընթեռնելի է:

Չենք ստացել են պինվորական իշխանությունից. մարավել են կապարմաներում. ճանապարհ են դրված մեծ շուքով. դրոշակը օրհնելուց հետո կամավորներին հանչնել է начальник штаба Кубанского войска: Հայկական պատգամավորություն ներկայացել է կայսեր և արժանացել է նորին կայսեր մեծության գոհունակության: Հայ հասարակությունը շորեղեն և նվերներ է ուղարկել Կուրանի կոպակներին՝ Վարշավայի կողմը և այժմ ուղարկում է երկու նվեր նույն կոպակներին Ջապպետի և Կարսի շրջաններում պ.Սաթունյանի միջոցով:

լ. Հին Նախիջևանի ներկայացուցիչը գանգատվում է, որ քաղաքում ոչ մի ոգևորություն չի նկատվում, իսկ ինքնապաշտպանության կարևորությունը չի ընդունվում: Երկու տեսակ բյուրո գոյություն ունի՝ ազգային և երիտասարդների: Առայժմ հավաքված է 300ո.: Գյուղերից կարելի է հավաքել մոտ 1000ո.:

յ. Մեծ Ղարաքիլիսայի կոմիտեն ներկայանում է իբրև կենտրոնական ամբողջ Լոռու շրջանի մեջ: Ծրջիկ կազմակերպիչների միջոցով կազմված են ենթակոմիտեններ: Հավաքվում է փող, բայց չգիտեն ում վրա և ինչպես ծախսելու: Առաջին գործունեությունը եղել է կամավորներ պատրաստել և ուղարկել: Ժողովուրդը շատ քիչ պենք ունի, իսկ փամփուշտ՝ բնավ:

ծ. Գանչակի կոմիտեն կազմված է 12 մարդուց. կառավարությունը չի ճանաչում և առհասարակ վատ է վերաբերվում: Հասարակությունն անտարբեր է թե՛ դեպի կամավորների և թե՛ դեպի ինքնապաշտպանության գործը, շատերը ազգային Բյուրոյի գործունեությունը վնասակար պրովոկացիա են համարում: Տուրքերը չեն նշանակվել և ընդամենը 1000ո. է հավաքվել. կովոդ ուժերի ցույակը պատրաստվել է: Գանչակը տվել է կամավորներ: Հայ հասարակությունը լապարբերի համար վարչել է մի բնակարան և Կարմիր խաչի տրամադրության տակ է դրել: Ինքնապաշտպանության գործը վերջիվերջո, անշուշտ, պետք է զբաղեցնի տեղական հասարակությանը: Տեղական կոմիտեն կազմվել է ազգային Բյուրոյի կողմից հատուկ եկած պ.Պապովյանի ջանքերով:

կ. Ատրպատականի կոմիտեն կարողացավ հավաքել 3000 թուման: Թավրիպի հայ հասարակությանը խոստացվել էր հարկավոր դեպքում պենք բաժանել, բայց այս րոպեիս այս բոլոր հարյերը վերացած պետք է համարել, որովհետև ռուսաց Կորքի Պարսկաստանից քաշվելով, սկսվել է ահագին գաղթականություն Թավրիպի, Ուրմիայի, Սալմաստի և Սոյի հայ բնակչու-

թյանը դեպի Ռուսաստանի սահմանները, իսկ մնացածներին սպառնում է մեծ վտանգ:

Ընդ որ վայրերի պատգամավորները միաբերան զանգատվում են, որ Կենտրոնական բյուրոյի և տեղական կոմիտեների մեջ ոչ մի կապ չի եղել և սերտ հարաբերություններ չեն պահպանվել, որի պատճառով հասարակության ոգևորությունը թուլանում է, իսկ գործը շարաչար տուժում: Անհրաժեշտ են գտնում – գրավոր հարաբերություններ պահպանել և, եթե կարելի է, շրջիկներ ուղարկել և համագումարներ կազմել:

Շողովի Լախագահ՝ Մեյրուպ եպիսկոպոս
ЦГИА РА, ф.288, оп.1, д.3, л.4-5.

№ 8

Մոսկվայի հայկական կոմիտեի հեռագիրը
ուսանող-կամավորների հավաքագրման մասին

1914թ.

Թուրքիայի դեմ պատերազմ սկսվելու կապակցությամբ Մոսկվայի Հայկական պաշտոնական կոմիտեն խնդրում է անդադար կապի մեջ պահել գործընթացի մասին: Հեռագրով հաղորդեցե՛ք պաշտոնական կոչի տեքստը, եթե դրա կարիքը կզգայվի: Ուսանողները ցանկանում են մասնակցել որպես սանիտար-կամավորականներ: Եթե պետք է, հաղորդեցե՛ք Մոսկվա, Պոկրովկա 42, Մամիկոնյանին:

ЦГИА РА, ф.288, оп.1, д.114, л.93.

№ 9

Հեռագիր Ռուսովից՝ Օդեսայից
հայ կամավորների ճանապարհվելու մասին

1914թ.

№ 221 գնացքով Օդեսայից մեկնել են 135 հայ կամավորներ:

Չախուշյան
ЦГИА РА, ф.288, оп.1, д.114, л.93.

№ 10

Բաքվի քաղաքային լագարեթի օրդինատոր,
բժշկուհի Ելենա Ջորաբյանի նամակը
հալոց ազգային Բյուրոյին՝ հայ կամավորականների
բուժօգնություն ցույց տալու գործում իրեն ևս մասնակից
դարձնելու խնդրանքի մասին

1914թ

Թուն ցանկություն ունենալով բժշկական օգնություն հասցնել մեր
կամավորներին, խնդրում եմ կովի դաշտն բժշկական խմբեր ուղարկելիս
կամ ուր որ դուք հարմար կգտնեք բժիշկ ուղարկելու, ինչի նկատի ունեցեք:

Այժմ Բագու քաղաքային լագարեթում գործում եմ օրդինատորի
պաշտոնում:

Հասցես հետևյալն է.

Врачу Елене Ивановне Зурабовой,
Спасская 5, кв.4,
тел.6-08, г.Баку

ЦГИА РА, ф.288, оп.1, д.114, л.7.

№ 11

Հեռագիր Բաքվից՝ հայ կամավորական ջոկատներին
անդամագրվելու երկու հայ կին բժիշկների ցանկության մասին

1914թ

Երկու կին բժիշկներ համաչայն են մեկնելու: Տղամարդ չկա:
Կամավորների վերջին խումբը մեկնել է երեկ: Դա այլևս չի լինի առանց
Բյուրոյի նախնական համաչայնության:

ЦГИА РА, ф.288, оп.1, д.114, л.42.

№ 12

Հեռագիր Պետրոգրադի հայկական խնամատար համայնքի
ներկայացուցչությունից

1915թ.

Երեկ ճանապարհելով հայկամավորների առաջին խումբը, խնդրում եմ Ձերո Սրբությանը (Մեսրոպ Եպիսկոպոսին - Ռ.Գ.) նրանց բարեմաղթել արիասիրտ ճանապարհ: Այստեղ գտնվող վիրավոր հայերը տենչում են շուտ ապարհնվել և կովկասյան զորքի շարքերում նորից մարտի նետվել թուրքերի՝ քրիստոնյանների հավերժ թշնամու դեմ: Խնդրում եմ Ձեր միջնորդությունը՝ Նորին Սրբություն Կովկասի փոխարքայի առջև՝ նրանց ուղարկելու կովկասյան օկրուգի պահեստային գումարտակներ:

Պետրոգրադի խնամատար համայնքի
Նախագահ Սուրանշահ
ԱԿՄԱ ՔԱ, փ.288, օռ.1, ձ.114, յ.124.

№ 13

Տեղեկություններ հայ կամավորների օգտին
հայոց ազգային Բյուրոյի հասցեով
առաքված գումարների մասին

1915թ.

1. Ասխաբադի կանանց ընկերության նախագահ Ծուշանիկ Սամիկոնյանից-100 ռուբլի: Ուղարկված է Սամսոն Հարությունյանին դիվանի 1914թ. դեկտ. 15-ի №193 գրությամբ:

2. Օրբազարի Օգեսնո քահ. Հարյունույ - 542 ռուբ.: Ուղարկված է Սամսոն Հարությունյանին 1914թ. դեկտ. 15-ի հմ. 1937 գրությամբ:

3. Լուգանսկի երեսփոխան Հապարապետյանից - 3445 ռուբ. 60 կոպ.: Ուղարկված է Սամսոն Հարությունյանին 1914թ. դեկտ. 19-ի №1954 գրությամբ:

4. Նյու Յորքից Պետրոգրադի Ռուսաց արտաքին առևտրի բանկի միջոցով - 1355 ռուբ.: Ուղարկված է Տփխիսի Հայոց ազգային կենտրոնական Բյուրոյի փոխնախագահ Հովսեփ Սունունցին 1915թ. փետրվարի 4-ի №200 գրությամբ՝ Պետրոգրադի Ռուսաց արտաքին առևտրի բանկի միջոցով:

5. Նյու Յորքի Կենտրոնի Պետրոգրադի Ռուսաց արտաքին առևտրի բանկի միջոցով - 210 ռուբ.: Ուղարկված է Տփլիսի հայոց ազգային կենտրոնական Բյուրոյի փոխնախագահ Հ.Սունունյին 1915թ. փետրվարի 9-ի №229 գրությամբ:

6. Ամերիկայի Սիշուն քաղաքի Սեբաստիո Ուլաշ գյուղի հանչնախմբի - 450 ռուբ. 07 կոպ.: Ուղարկված է Տփլիսի հայոց ազգային կենտրոնական Բյուրոյի փոխնախագահ Սունունյին 1915թ. մարտի 13-ի №407 գրությամբ:

7. Ամերիկայի ազգային պաշտպանության հանչնախմբի - 3409ռ. 10կ.:

Բարատ եպիսկոպոս
ЦГИА РА, ф.57, оп.5, д.102, л.1.

№ 14

Համառոտ տեղեկագիր հաշոց
ազգային կենտրոնական Բյուրոյի
1914-1915թթ. գործունեության

20 մայիսի 1915թ.

Ազգային կենտրոնական Բյուրոն վերջին համազումարում ընտրված կազմով, շարունակելով իր գործունեությունը ներկա ծանր հանգամանքներում, կենտրոնանում է իր ամբողջ ուշադրությամբ հետևյալ խնդիրների վրա.

ա) Հայ կամավորական խմբերի կազմակերպությունը, պահպանությունը և նրանց քանակի ավելացումը ըստ կարևորության և պահանջի.

բ) Հայ ժողովրդի հինքնապաշտպանությունը այն վայրերում, ուր նրան առավելապես վտանգ է սպառնում թշնամաբար վերաբերվող տարրերի կողմից:

գ) Բանակցություններ ոռս պինվորական և քաղաքացիական իշխանությունների հետ վերոհիշյալ խնդիրների բարեհաջող կարգավորման համար:

դ) և ի) Դրամական նվիրատվությունների հանգանակումը այլևայլ հաղթանակ քաղաքներում և վայրերում հայ կամավորական խմբերի պահպանության համար:

Բյուրոյի գլխավոր հոգատարության առարկա էր և շարունակում է

մնալ մինչև այսօր հայ կամավորների գործունեությունը և նրանց պահպանությունը Տաճկահայաստանի ռավմաճակատում:

Ռուս կառավարությունը կամավորական խմբերի համար մատակարարում է միայն վենք ու վինական պաշար, իսկ նրանց նյութական և այլ անհրաժեշտ պիտույքների գոհացումը հայթայթվում է Բյուրոյի միջոցներից, համաչայն նախապես կազմված նախահաշվի, իսկ այդ միջոցները գումարվում են այլևայլ հայաբնակ տեղերից ստացված դրամական նվիրատվություններից հատուկ այդ նպատակի համար:

Հայ կամավորների թիվը հասնում է 5.000-ի. նրանք հինգ խմբերի վրա են բաժանված, յուրաքանչյուր խումբ՝ առանչին խմբապետի հրամանատարության տակ:

Ռայց վերջին ժամանակ խմբերի կազմակերպության մեջ փոփոխություն տեղի ունեցավ, որով երկրորդ, երրորդ և չորրորդ խմբերը միանալով բաժանվեցին երեք հապարակի կամ բատալյոնի՝ Դրոյի, Զեռու և Համապասպի հրամանատարության տակ:

Այդ երեք բատալյոնները միացած կազմեցին մի գունդ - Հայկական Արարատյան գունդը Վարդանի ընդհանուր հրամանատարության տակ:

Այդ գունդը ապրիլի վերջին հանդիսավոր պարադից և եկեղեցական մաղթանքից հետո Երևանում, շարժվեց ռուս զորքերի հետ միասին դեպի սահմանը, ամեն տեղ ճանապարհին ոգևորված հայ ժողովրդի ողջերթը ստանալով, և ապրիլի 20-ին անցնելով ռուս-տաճկական սահմանը, դիմեց կռվի դաշտը, միշտ գտնվելով ռուս բանակի առաջավոր կարգերում: Կռվով անցնելով Ապաղաջի դաշտը, գունդը ապրիլի 27-ին հասնում է Զերկրի՝ դեպի Վան ուղևորվելու համար, և ընդհարվում է շարունակ մեծաքանակ քուրդ հրոսակների հետ, հաջողությամբ ետ մղելով թշնամու ուժերը:

Մայիսի 8-ի հեռագիրը ավետեց յուրաքանչյուր հայի համար անչկալի լուր, թե Վանը վերցրել է մեր գունդը: Չեն. Օզանովսկու և Նիկոլանի քաջալերիչ գովասանքները լավագույն վկայություններն են հայկական գնդի ցույց տված անչնվեր գործունեության պատերազմի դաշտում:

Անդրանիկի գունդը (1.200 կամավոր) գործում է առանչին, Պարսկաստանում գեն. Չերնոզուբովի բանակում: Թավրիզ, Մաբանդ, Խոյ, Դուպդադ՝ ահա այն տեղերը, որ մեր կամավորները ջերմ աջակցություն են ցույց տվել ռուս զորքերին: Ապրիլ ամսի 18-ին Անդրանիկի գունդը մասնակցում է Դիլմանի կռվում, ուր համառ դիմադրություն է ցույց տալիս թշնամուն, հնարավորություն տալով ռուս զորքի նահանջին, որը հետո փառավոր ջարդ տվեց թշնամուն: Այդ կռվից հետո գունդը շարժվեց առաջ և Խանսևուրից

անցնելով, պիտի ուղևորվի Վան, ուր միանալու են բոլոր հայ կամավորները:

Բյուրոն, ջանալով ավելացնել մեր ռազմիկ ուժերի քանակը, միջոտ քանակությունների մեջ է պինվորական իշխանությունների հետ՝ թե՛ կամավորների թիվն ավելացնելու համար, հասցնելով վերջինը 10 հազարի, և թե՛ ավելացրած թվի համար պենք ստանալու: Չնայելով ռուս պինվորական շտաբի ցույց տված բարյալակամության, Բյուրոն, սակայն, իր չգտումների մեջ մինչև վերջին ժամանակ խոչընդոտների էր հանդիպում ընդհանրապես պենքի պակասության պատճառով, որով առարկում էր շտաբի պինվորական վարչությունը հանդեպ մեր դիմումներին: Բայց վերջին ժամանակ ստացված է ռուս պինվորայլ ուժերի օգոստոսափառ հրամանատարից թույլտվություն նոր չորս կամավորական խմբեր կազմելու համար և հավանական է, որ այդ թույլտվության հետ միասին կստացվի և ավելացրած խմբերի համար պատշաճավոր թվով պենք, որով հայ պինվորական կամավորությունը կկազմի մի պատկառելի ռազմական ուժ:

Արչանագրելով այս տեղեկագրում հայ կամավորական խմբերի կատարած ազգաշահ գործը, Բյուրոն չի կարող երախտագիտությամբ չհիշել և այն մեծ ծառայությունը, որ նրանք մատուցեցին հայ տառապյալ ժողովրդին, ուղեկցելով դեպի կովկասյան սահմանը և Տաճկաստանի և Պարսկաստանի մեր տարաբախտ գաղթականներին: Այդ թշվառները պատերազմի սարսափներից փախչելով, կարող էին ճանապարհին թուրք և քուրդ հրոսակների հարչակումներին ենթարկվել և կոտորվել առանց խտրության սեռի և հասակի, եթե հայ կամավորների կողմից չգտնեին պաշտպանություն և հարախնամ հոգատարություն:

